

# ԵԶՄԻԱԾԻՆ



1966



# ԷՐԱՐԴՈՒՄ

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՂԱՄԻԱԾՆԻ

f


1966





## Ե Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՃԱՓԱՍԻ ՀԱՅՐԱԳԵՑԻ կոնդակը Ֆիլադելֆիայի հայոց Ս. ԵՐԵՎԱՆԻ- բյուն եկեղեցու օժման առիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Ապրված հավատը	5
Վարդանանց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեղարձը Մայր Արքուն	8
Հայրապետական բարձր զեանատուրյուններ	11
ՄԱՅՐ Ա.Թ.Ռ. Ո.Ո.Խ.Մ	14
ԳԵՎՈՐՔ ՎՐԴ. ՍԵՐԱՅԻՆԱՐՅԱՆ— Սույր Սարգսի տոնը Թրիխսիի հայոց Սույր Գևորգ եկեղեցում	16
Հ. Զ. ՍԻՐՈՒԽԻՆ— Կոմիտասին հնա	18
Գ. ՀԱԿՈԹՅԱՆ— Գրիգոր Տղա	25
Ս. ՔՈՂԱԶՅԱՆ— Տրանսիլվանիայի հայերի պայքարը ազգային իննուրույնության պահպանման հնամա	29
Ա. Խ. ՍԱՅՐԱՍՏՅԱՆ— Կոստանդնուպոլիսի հայոց Պատրիարքարքի կողմէց Թուրքիայի արդարատուրյան և դավանանքների միջնաւորյան ներկայացված հայկա- կան եկեղեցիների և վաճենելոյ ցուցանկներն ու բարերեները	38
Ն. Մ. ՊԱՊՈՒԽՅԱՆ— Քաղաքաշինարարությունը միջնադարյան Սյունիքում	45
Բ. ՏԱՎՈՒԵՑԻ— Խանատակ հայ յատկուրականների ծածկանուններ	52
ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՐՅԱՆ— Սփյուռքը հայենիքին	58
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԱՆԳԻՑ	60



ବୁଝିପାଇଗଲା କଥା କହିଲା

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ, ԷԶՄԻԱՆԻՆ

#### «ԵԶՄԻԱԾԻՆ» ԱՐՄԱԿՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue „Etchmiadzine”, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1966 թ.

ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ  
ԿԵՂԱՓԻԱՐ ԵՒ ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՎԼԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՑ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԵՐՐՈՌԴՈՒԹՅՈՒՆ  
ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԹԻՎ

ՎԱԶԳԵՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՈՍԻ,  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵԻ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՍ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ,  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՈՈՅ  
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷջՄԻԱԾՆԻ

ԲԱՐԵԽՆԱՄ Ա.ՈՒ.ԶՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ՀԻՒՍՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ԱՐԵԽԵԼԵԱՆ ԹԵՄԻ, ԳԵՐԱԾԵՈՐԸ Տ. ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
ՄԱՆՈՒԿԵԱՆԻ, ՀՈԳԵՆՈՐ ՍՊԱՍԱԿՈՐԱՑ, ԵԿԵՂԵՑՑԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁԱՆԱՄԲԻՆ ՖԻԼԱԴԵԼՓԻՑ  
ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՑԻՑ ԵՒ ՀԱՍՏՅՆ  
ՀԱԿԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ  
ԱԹՈՒՐՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ, ԳՐԻՍՈՍԱԿԱՆԴ ՈՂՋՈՑՆ  
ՀԱՅՈՒԿԱՆ, ԵԲ ՈՐՀԵՈՒԹԻՒՆ, ՀԱՅՈՒՊԵՏԱԿԱՆ,

## «Զի Աստուած ոնո մեօ է»:

Անա այս համարով պարեցան մեր լուսաբնակ հախմեթք դարեր շարունակ: Այս համարով կ'ապրին այսօր ու պիտի ապրին միշտ մեր Եկեղեցին և մեր ազգը համայն: Մեզի հսկայ անհուն ուրախութիւն է տեսնել, թէ Դուք բոլորդ, սիրելիներ Մեր, այս նոյն համարով կը բարձրացնեք այսօր Զեր աղօթքի տունը, որուն Ս. Ստեղանէն պիտի բաշխուի Զեզի ամենուդ և Զեր զաւակներուն և անոնց զաւակներուն՝ Աստուծոյ խօսքը՝ աղքիւր լոյսին, կեանքն և լաւդուռնեան:

Փես և յաջորդութան:

Փա՛ռք և գոհութի՛ւն Տիրոց Ամենակալիի՛ Զեր այս հոգևոր յաղթանակին համար: Մենք, իբրև Հայոց Հայրապետ, կ'օրինենք և կը շնորհաւորենք զՁեզ բոլորդ, Զեր կատարած անձնուրաց աշխատանքին համար, որով յաջորդութեամբ պակուցաւ Զեր Աստուածահանոյ և ազգանուէր ձեռնարկիր:

Թող միշտ հաստատ և չեն մնայ Ձեր նորակառոյց եկեղեցին:

Թող Աստուած մնայ միշտ պահապան և օգնական Ձեր եկեղեցին և ժողովուրդին, որպէսզի անոնք անարատ ու պայծառ պահպանն իրենց քրիստոնեական և հայկական հոգին:

Եւ Դուք, հարազատ գլուխենք Մեր, որ կը բնակիք «Եղբայրսիրութեան ուխտ»-ի քաղաքին մէջ, իրաւ եղբայրական սիրով միաբանած, խաղաղ ու համերաշխ ապրեցէք, զօրացէք ու աճեցէք, Ձեր Ս. Եկեղեցին ապահով հովանակին ներքեւ: Զի Հայոց ազգի քրիստոնեական հաւատքը և հայկական հոգին, և անոնցմէ ճառագայթող լոյսը, քաղաքակիրոյ աշխարհի հրաշալիքնեն մին կը հանդիսանան:

Պահեցէք, պաշտպանեցէք և պաշտեցէք այդ լոյսը, որպէսզի ապրիք յաւետ և չմեռնիք:

Ամենայն հայոց սուրբ հաւատքի վեմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Ձեզի ամենուու հայրական ողջո՞յն և հայրապետական օրինութի՞ւնն:

Ողջո՞յն և օրինութի՞ւնն նաև Ձեր մեծ երկրին՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն և անոր քրիստոնասէր սքանչելի ժողովուրդին:

Արդ, հարազատնե՞ր Մեր, «Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ Ձեր սիրով եղիցի» (Ա. Կորնը. ԺԶ 13—14):


Հայոց Ձեռնութեան անձնագիր

ԵԱԶՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոմիտակս ի 14-ը մարտի

1066 Փրկչական ասի,  
և ի տումարիս Հայոց Ռնմ՛ն,  
ի մայրավանս Արքոյ Էջմիածնի:





## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ԱՊՐՎԱԾ ՀԱՎԱՏԸ

(Պատմությանց և Վարդանանց տոների առթիվ)

Մեր լուսաբնակ հայրապետները, փեղորվար ամսում, մեր եկեղեցական օրացույցի մեջ, գեղեցիկ մտածումն են ունեցել, մասնավոր կարևորությամբ համախմբվու Հայ Եկեղեցուն միայն հատուի ազգային-եկեղեցական տոների շարքը, տոներ, որոնք սերտորեն կապված են հայ համապատի, հայ ժողովրդի ու հայուննիքի պատմության հետ:

Ամեն տարի, մեծ պահքից անմիջապես առաջ տոնախմբվող փետրվարյան այդ հանդիսությունները իրենց ազգային-եկեղեցական խորհրդով ու նշանակությամբ, հոգևոր արթնության, բարեպաշտության, եկեղեցական ուստապահության և իրավ հայունաահրության ուսանելի հանգրվաններ են մեր Եկեղեցու և ժողովրդի համար:

Տոների այս շարքը բացվում է հայրենի հողի վրա երկրորդ դարի կեսերին, Ս. Գրիգոր Լուսավորչից առաջ, նոր կրոնի համար նահատակված Սուրբիապան վկաների և Ռուկյան քահանաների մարտիրոսությամբ, «որք համատով յաղթեցին, զիսաւար կուպաշտութեան վանեալ ներքեցին և զմանի իրենց կանգնեցին յերկորի աշտարակ հզօր», — ինչպես գրում է սրբազն շարականագիրը, ոգելով հրանց հիշատակը:

Մեր եկեղեցական օրացույցում նշված մյուս տոները վերաբերում են Եղարի պատմական մեծ դեմքերին և իրադարձություններին:

Եղարը հոգևոր, եկեղեցական, մշակության և հայրենաահրության տեսակետից մեր պատմության բացառիկ և հերոսական

ժամանակաշրջաններից մեկն է հանդիսանում, որի իր անշնչելի կնիքն է դրել մեր հետագա ողջ պատմության վրա:

Իարաշշանի սկզբներին Հայատանում ստեղծվել էր հոգևոր-մշակութային անհամբեաց մի շարժում, պայքարելու հանուն Հայ Եկեղեցու և հայ մշակույթի ինքնուրուցնության: Այդ ճակատագրական, ծանր պայքարը առաջ էր տարվում մեծ եռանդով, կրթությամբ, բայց խաղաղ ճանապարհով, դպրությամբ, քարոզությամբ, մշակույթով:

Այդ շարժման ու պայքարի ղեկավարը, կազմակերպիչը և ոգին Ս. Սահակ հայրապետն էր, հայրենասեր և լուսամիտ «պարթևական տեսանող»-ը, որի ջերմ շունչի տակ հասակ առան, կազմակերպվեցին իրենց ապագա առաքելության և գործի համար թարգմանիչների սերունդը և Վարդանաց հերոսները:

Երկրորդ տոնը ուրեմն նվիրված է մեծ հայրապետի հիշատակին, որպես Եղարի սագային-եկեղեցական իրադարձությունների կենուրունական դեմքի, թեև հունիսի ամսին մեր Եկեղեցին նշում է «Սրբոց թարգմանչաց մերոց Սահակայ և Մեսրովքայ» տոնը, միասին:

Երրորդ տոնը նվիրված է Ատոմ Գնումի, Մանամիկ Ռշտումի իշխաններին և հրանց գնդերին, շուրջ 500 հոգու նահատակության հիշատակին: Օրացուցում և մեր եկեղեցական մատնագրության մեջ հայրենիքի և հավատի այս անձնուրաց նահատակները ծանոթ են «Ատովմեան զօրավարք» անվան

տակ: Աստովմյանց հահատակությունը տեղի է ունեցել Եղանակում, Հազկերտի հրամանով, Վարդանանց պատերազմից երկու տարի առաջ, 449 թվականին, Անձնացյաց և Ռշտումյաց գավառներում: Աստում գորավարի հետ հահատակվել են, ըստ մեր վկայաբանության, որդին՝ Վարս Գևորգի, Վարս Ուստանիկ, Ներսես Երվանդոսի, Վարձափոր Արծրունի և որից իշխաններ: Խակ Մանաճիրի հետ հահատակվել են մի շարք կվաներ, որոնցից ոչ ոք անվամբ չի հիշվում վկայաբանության մեջ:

Փետրվար ամսում նշվող մեր ազգային եկեղեցական տոների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Եղանակում գորավարի հիշումնական թվականներին հահատակ հայ հոգևորականների հիշատակին Ավիրված հանդիսությունը, որոնք ծանոթ են «Սուրբ Կոնդեաքր քահանայք» անվամբ:

Հնունյաց քահանաների հահատակությունը սերտորեն կապված է 451 թվականի Վարդանանց հերոսամարտի պատմության հետ:

Հնունյաքր հահատակվեցին 454 թվականին, հուլիսի 31-ին, Սպար աշխարհի Ուևան գյուղի մոտ, Վարդանանց պատերազմից երեք տարի հետո:

Ս. Հնունյաքր, հահատակ քահանաների այդ լուսն փաղանգը, Հայ Եկեղեցու պարծանք սրբերն են, «ախոյեանք Եկեղեցոյ», որոնց հահատակությամբ «պայծառապէս զարդարեցան եկեղեցիք Հայաստանեաց»:

«Ղնունյանց վրա կանձնավորվի հայրենիք և հավատքի նվիրումին գաղափարը: Վարդանանց ընկերն ու քաջալերող, ժողովուրդին կյամքին մեջ բարձր պահեցին կրոնքի սրբությունը, և ամեննեն ականավոր գործիները եղան անոնք Հայ Եկեղեցիով հայ ազգությունը ապրեցնելու և պահպանելու սկզբունքին» (Սուրբք և տոնք), էջ 215):

Հահատակված հոգևորականների մեջ էին Հովսեփ կաթողիկոս Հողոցմեցին (Վայոց ձոր), Շոշումյաց Սահակ եախսկոպոս, Վանանետեղի Ղնուն երեցը, Աղքակնեցի Մուշեց, Բագրևանդացի Արշեն երեցը, Արարատեցի Սամվել երեցը (Արած գյուղից), Քաջաջ սարկավագը (Շոշումիքից), Արտամամ սարկավագ Արարատեցին (Արած գյուղից) և պարսիկ դենապետը (Նյուշապուտ քաղաքից): Հայրենաւեր հահատակ հոգևորականները պատմության անցան որպես Ղնունյանք, Վանանետեղի Ղնուն երեցի անունով, որը բոցավառ և հոգեւից եկեղեցական էր, թէ խոսքով և թէ՝ գործով, «Աւարայի արծի, այրն հահատարիմ և ճշմարտապաշտ, լուսաւորիչն ամենեցուն

Ղնունդիէ, սուրբ վարդապետն, ծառավելայ լոյս գիտութեան յոգին արտաց կատարելոց»:

Ս. Ղնունյանց լուսապայծառ անունն ու սուրբ հիշատակը, որպես հայ հավատի քաշարի հահատակների և հայրենաւեր հոգևորականների, Ավիրական և թանկ են ենել մեր Եկեղեցու պատմության ողջ ընթացքում:

Ղնունյանց անձնուրաց հահատակությունը, մահվան դեմ քրիստոնեական խիզախումը խորունկ ներշնչման և խիզախության անսպաս աղբյուր են հանդիսացել մեր հոգևորական ապագա սերունդների համար. նրանց անձնազորությունը նոր թափ, նոր լիցը է տվել հայ հոգևորականությանը՝ ծառայելու և ի պահանջել հարլիին հահատակվելու հանուն այն սրբությունների և վեհ գաղափարների, որոնց համար մեռան Ղնունյանք, որպես Հայ Եկեղեցին և հայ ծողովուրդը:

Հիշատակելի և փառավոր ուլի է անցել հայ հոգևորականությունը Եղանակությունը օրերը:

Ս. Ղնունյանց արծանավոր հաջորդները, մեր սուրբ հայրապետներն ու եռաւնեծ վարդապետները պայծառ ու խորունկ գիտակցությունն են ունեցել քրիստոնեական պատվիրանների և ազգային սրբությանց, որոնց հաղթանակի համար մի վայրկյան իսկ չեն վարանել գրելու իրենց կյանքը: «Ոչ ի կապանաց զանգիտեն և ոչ ի գազանաց երկնշին..., զման քան զկեանս ընտրեն»: Այս ոգին դարերի հետ, որպես սրբազն ժառանգություն, կրակե կտակն է եղել հայ հոգևորականության:

Փետրվար ամաւլա մեջ, վերջին համազգային տոնը Վարդանանց պատերազմի հիշատակին և խորհրդին նվիրված եկեղեցական և ազգային համայնքությունն է:

Օրացույցում այս զգային տոնը նշվել է այսպէս. «Սրբոց Վարդանանց զօրավարոց մերոց հագար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմի»:

Պատերազմը տեղի է ունեցել 451 թվականի գարնանը, մայիսի 26-ին, Շավարշան գյուղում, Տղմուտ գետի ափին, Ավարայի դաշտում, որը հերոսի մահով ընկան 1036 քաջարի մարտիկներ, նաև «Անխարաք և զօրավարք»:

Ուկեգրիչ Եղիշե պատմիչը իր հայրենաւշունչ ոյուցաներգության՝ պատմություն «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատության մեջ, որն ընդգրկում է 35 տարիների մի ժամանակաշրջան (428—

464), տվել է անունները Ավարայրի ճակատամարտում Եկեղեցու և հայրենիքի սեղանի վրա պատարագված 9 զորավարների. քաջն Վարդան, Մամիկոնյանց տոհմից, հայոց սպարապետ և «զօրագլուխ առաքինեաց»՝ 133 քաջերով. Կորովին Խորենի Խոռոչուունի՝ 19 ընկերներով. Պալունյաց քաջն Արտակ՝ 57 ընկերներով. զարմանալին Տաճատ, Գնթունյաց տոհմից՝ 19 մարտիկներով. Դիմաքանա տոհմից իմաստունն Հմայակ՝ 22 ընկերներով. հրաշակերտն Ներսեն Քաջերունի՝ 7 ընկերներով. մանուկն Վահան Գնունի՝ 3 ընկերներով. Ընձայեցի արդարն Արսեն՝ 7 ընկերներով և Սրբաձատյանց տոհմից առաջադեմն Գարեգին՝ իր երկու եղայուններով և 18 ընկերներով. և այլ քաջեր, մնացած ամբողջ խումբը, «զինուորք Հայոց Աստուծյան», «որք գրեցին զանուան իրեանց ի դպրութեան կննաց և մեղին զարին իրեանց ի նորոգումն Եկեղեցոյ»:

1500 տարիներ մեզ քածանում են Ղեղանյանց և Վարդանանց ծանր, հերոսական օրերից:

Վարդանանց պատերազմը մի պայքար էր հանուն լուսի, հավատի, հայրենիքի և ազատության:

Հազկերտի կրոնական մոլեռանդության և բոնակալության դեմ ծառացավ հայ ժողովորորը իր կրոնա-բարոյական քարձ գաղափարներով, ազգային, հայրենասիրական ոգով:

«Յայամ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել...»:

Հայությունը Ավարայր իշավ հավերժորեն ապրելու, «մահուամբ զմահ կոխել»-ու համար:

«Քաջութեամբ միայն մեոցուք, զանուն և զոգին ներ ժառանգեսուք, բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՝ խառնեցնուց»: Ուազմի դաշտում եկեղեցական ուխտապահությունն ու հայրենասիրությունը իրար էր բերել բոլորին, դարձրել մի սիրտ և մի հոգի: Բոլորն էլ հավասարական լուսածությունը իրար էր ազգության, ազգային ավանդության, ազգային, բարոյական, իմացական ըլքոնումներին և սկզբունքներին:

Սխալվեցին Հազկերտները բոլոր դարերի, որոնք կարծում էին, թե «իբրև զիանդեր ունեցած զրիստոնեութիւն»:

Ավարայրից հետո հայոց պատմության հետագա դարերը, իբր Յերշնչարան, թելադրամը և տեսիլք ունեցան քրիստոնեական այդ կենարար ոգին և շունչը: Սեր ժողովորդի և Եկեղեցու կյանքի ուղին լուսավորվեց Ղեղանյի և Վարդանի հավատով և օրինակով: Քրիստոնյա մնալու և հայ ապրելու համար, մեր ժողովորդը տվեց իր ամենաթանգարին գանձը՝ «գոյի չափ զկեանս իր»:

«Իրա՞ն ճշմարտություն կա այն հաստատման մեջ, ըստ որի քրիստոնյա Արևմուտքը աստվածարանական դպրոցներ ատեղծեց, դավանարանական վեճեր բորբոքեց, մինչ հայ ժողովորդը ապրեց քրիստոնեությունը և իր կյանքով ապրեցրեց Ավետարանի ճշմարտությունները. «զի գիրն սպանանէ, այլ ոգին կեցուցանէ»:

«Ատեղ է մեծությունը, վեհությունը Ղեղանյանց նահատակության և Վարդանանց հերոսամարտի: Դ դարի սկզբներին, հազիկ ազգորեն, պետականորեն իր հոգին բացած քրիստոնեության լուսին, հայ ժողովորդը հարյուր տարի հետո, Ե դարում, գիտակորեն և մասամբ Էլ տարերայնորեն դիսադրեց և պաշտպան կանգնեց իր խոճի ազատության, ազգային ավանդություններին, ոգիին, բարոյական, իմացական ըլքոնումներին և սկզբունքներին:

«Արայրը, քրիստոնեական լուսին բացված, Սահմակ-Սեսրովյան հրաշքի մեջ պայծառացած, հայ հոգու, հայ մտքի գաղափարական բարձունքն է, Հայ Եկեղեցու հերոսացումը և քրիստոնյա հայ ժողովորդի հավաքական սրբացումը:

Աօր Էլ Ղեղանյանը և Վարդանանք մեզ համար հանդիսանում են հավատի, հայրենասիրության, տեսիլքի և խոյանքի Յերշնչարաններ, լուսի սերմնացաններ, ապրության համոզմունքների գերազանց տիպանելք:

Հայրենք Ղեղանյանց և Վարդանանց ոգով ու տեսիլքով, և ապրեցնենք նրանց հավատն ու հայրենասիրությունը մեր կյանքի մեջ, մեր գործերի մեջ:

Այս է մեր սրբերի, նահատակների եկեղեցական ուխտապահության և հայրենասիրության պատգամն ու թելադրանքը:





## Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ց Ս Ո Ն Ը

### ԵՎ ՎԵՀԱՓԱՌՈ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԽՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

### ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Փետրվարի 17-ին,** հինգշաբթի, Մայր Աթոռում հանդիսավորությամբ տոնվեց «Մրրոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն» տոնը և Վեհափառ Հայրապեաի անվանակոչության տարեդարձը:

Չորեքշաբթի, ամսի 16-ին, երեկոյան ժամը 5-ին, Մայր Տաճարում կատարվեց Վարդանանց տոնի նախատոնակը: «Նորահրաշ պսակաւոր» շարականի երգեցողությունը մի անգամ ևս բոլորի հիշողության մեջ պայծառացրեց անունները եկեղեցու և հայրենիքի անվեհեր մարտիկների՝ Ղեռդյանց քահանաների և Վարդանանց հայրենասերների:

Հինգշաբթի, առավոտյան ժամը 11.30-ին, սկսվում է օրվա հանդիսավոր սուրբ պատառագը: Պատարագում է Հոգևոր Ճեմարանի վերտանուշ Հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողապալյանը:

Ժամը 12.30-ին Մայր Տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը:

Սուրբ պատարագին ներկա է Մայր Աթոռուի միարանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը և հավատացյալների հոծքագմություն:

«Հայր մեր»-ից առաջ կատարվում է հոգեհանգիստ «վասն համօրէն ննչեցելոց»,

որոնք ընկել են ռազմի դաշտում, «վասն թիսուսի և հայրենեաց»:

Հավարտ սուրբ պատարագի, իշման Ա. Սեղանի առաջ, կատարվում է հայրապետական մաղթանք: Արարողությունից առաջ քարոզում է պատարագիլ վարդապետը «Որք զանձինս իւրեանց քեզ, Հայր, ընծայեցին և Որդոյ քում եղեն խաչակիցք» Մարտիրոսաց շարականի բնարանով: Քարոզիլ հայր սուրբը զեղեցկորեն նկարագրում է հավատի և հայրենիքի նահատակների ուսանելի և օրինակելի կյանքը և նրանց անձնազն պայքարը եկեղեցու զորացման, հայրենասիրության ամրապնդման համար, շեշտելով, որ Ավարայրը յի վերջացել և այսօր էլ Ամենայն Հայոց Հայրապետը, Ղեռնդյանց ոգով և հավատով, պայքարում է մեր եկեղեցական ուխտապահությունը խանգարել փորձող բոլոր տիսուր հակաեկեղեցական երկույթների դեմ:

Քարոզիլ հայր սուրբը իր բովանդակալից քարոզը վերջացնում է Մայր Աթոռի պայծառության և Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության մաղթանքներով: Վարդանանց առնը Հայոց Հայրապետի անվանակոչության տոնն է միաժամանակ:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հայրապետական մաղթանք:

Արարողության ավարտին, կեհափառ  
Հայրապետը, Մայր Տաճարում, աշահամ-  
բույրով, ընդունում է միաբանության և բոլոր  
հավատացյաների շնորհավորությունները  
իր անվանակոչության սունի առթիվ:

Ժամը 1.30-ին, Հոգենոր Ճեմարանում, կաղ-  
մակերպվել էր զրական-գեղարվեստական  
հանդես՝ Ղևոնդյանց և Վարդանանց հիշա-  
տակին նվիրված:

Հանգիստովթյան սախագուհում էր Վեհափառ Հայրապետը, զրշապատված Մայր Աթոռի գերազանցորհ և հողելքորհ անդամներով:

Հանդիսությունն սկսվում է Հայկական  
ԱՍՏ Պետական հիմնի նվազով:

Հոգեսր Ճեմարանի վերատեսուչ հոգե-

զնորդ Տ. Ներսես ծայրագուցն վարդապետ  
Պողապալյանը կատարում է բացումը զերմ  
ճառով:

Ծեմարանի երդախուումը կատարում է «Նորագուշ պսակաւոր» շարականը, «Թե հայրենյաց պսակաղիբ», «Ամ հայրենյաց Հոգի Վարդան», «Ով դու բարեկամ», «Սիփանա քաջեր» խմբերը:

¶ զասարանի ուսանող Հովհաննես Գրիգորյանը արտասանում է «Տիկնայք փափկացնել Հայոց աշխարհի» (Հատված Եղիշեից), Գ լսարանի ուսանող Գրիգոր սարկավագը՝ Նախիք Զարյանի «Զայն Հայրենական»-ից Հատված Վարդանանց պատերազմի մասին, և մի խումբ ուսանողներ հանդես են զալիս Վահան Թերեյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծության խմբական արտասանությամբ:

Գ դասարանի ուսանող Արարատ Գալստյանը գաշնամուրի վրա նվազում է երկու կտորի

¶ լսարանի ուսանող Գավիթ սարկավագ  
Դիլանյանը, հանուն Ճեմարանի ուսանողու-  
թյան, ընթերցում է գրավոր չերմ ուղերձ՝  
Նվիրակած Վեճափառ Հայրապետի անվանա-  
կոչության տարեդարձին:

Օրվա ազգային-եկեղեցական մեծ տոնի  
առթիվ կաղմակերպված Հանդիսության  
գլուխավոր բանախոսն էր Գերագույն Հոգեւոր  
նորհրդի անդամ Գրիգոր Քեքմեզյանը, որը  
Հանդես է գալիս Վարդանանց պատերազմի  
ազգային-եկեղեցական և Հայրենասիրական  
նշանակության նվիրված ընդարձակ և բո-  
վանդակալից գեկուցումով.

«Ավելի քան 1 500 տարի առաջ, 451 թվականին, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցավ մի իրադարձություն, որը դարձավ ճակատապահական և անկյունագարձային հայ ժողովրդի ամբողջ պատմության համար։ Հետագա բոլոր դեպքերը ուղղություն վերցրին այս նյանամու օպամա հոռնոռություն։ Այս

իրագործությունը կոչվեց Ավարայրի ճակատամարտ կամ Վարդանանց պատերազմ:

Ավարայրը դարձավ «Հաց մեր հանապա-  
ղորդ» և «իսաշ մեր հանապազօրեայ» այն  
խոր հավատով, որ մի օր վերջապես կծագեր  
մեծ ու լուսավոր արշալույսը և նոր Վարդա-  
նանք ու նոր Ղեռնդյանք կդիմեին ոչ թե  
«իմացյալ մաշվան», այլ՝ «իմացյալ կյան-  
քին», հայրենի հավերժացող կյանքին,

Կարդանանց պատերազմը սկիզբ է առել այն օրվանից, երբ սկսվեց Հայ ժողովրդի որպես ինքնուրույն ազգ կազմավորվելու ընթացքը, իսկ հիմնական շրջադարձը՝ կատարվեց այն ժամանակ, երբ Գրիգոր Լուսավորիչը հղացավ իր մեծ և հրաշալի տեսիլքը Ասում են, որ այդ աեսիլքը առասպելէ, ափանդություն։ Գիտնականները, ասում են, պահանջում են իրեղեն ապացույց, որպամբանական և փաստացի ճշմարտություն։ Բայց, մի թե քարեղեն այս էջմիածինը ողեղեն վկան չէ այն ճշմարիտ աեսիլքի, այն հրաշքի, որը հիմք գրեց Հայ Աղքային Եկեղեցու, Հայ Եկեղեցու, Հայ ժողովրդի հոգեկան ինքնուրույնության, ազատագրության։ Ավելի քան 1 600 տարի, ամեն օր, ամեն տարի նորոգվում է այդ տեսիլք և զգորանում։ Զի՞ որ նա Հայ ժողովրդի որպես Հայ ապրելու աեսիլն է, որը մարմնավորված է Հայ ժողովրդի հոգեկան տուն Ս. էջմիածնով։

Առասպեկտ կոչվեց նաև Ս. Մեսրոպի տեսիլը, թայց, չէ՞ որ նա՛ լեզու տվեց կուսավորշյան տեսիլին: Ոգեղեն տեսիլը զգեցավ նաև հոգի և մարմին, դարձավ ժողովուր հայուն, ու ընթացավ նրա ճակատաքրի պատմության առընթեր: Ս. Մեսրոպի տեսիլով Աստված հայերն խոսեց, հայացա՞վ, հայ ժողովուրդը առավել մերձեցավ առ Աստված, աստվածայնացավ: Առանց այդ աստվածայնացման, չէր լինի նաև հավերժացում: Ահա այդ հավերժության պաշտպանության համար է, որ ծնվեց Ավարայրը և նահատակվեցին Վարդանանք: Տեսիլը ստուգվեց արյամք և նահատակվեցավ, դարձավ հրեղեն սյուն ու առաջնորդեց մեղ խութերով ու խարակներով լեցուն մեր պատմության քառուղիներով: Ավարայրով նվիրագործված այդ տեսիլը դարձավ հայ ժողովուրդի հավերժության ճանապարհ: առանձին՝ ճանապարհ:

Հուսավորիչ, Մաշտոց ու Վարդան՝ երեք  
անձ մի բնության մեջ, միենուզն ոգով, միե-  
նուզն տեսլականով, մինույն հավատով և  
միենուզն նպատակի համար:

Ավարայրը մեր պատմության Արարատն է, ոսկեռիս Վազրանանք տեսան մեր կլան-

քի հեռավոր հորիզոնները և ցույց տվին նրանց ուղին, Պատմության հետագա դարգումը ցույց տվեց, որ ճշմարիտ էր Կարդանանց ուղին, բանի որ այսօր էլ մենք ընթանում ենք նույն ուղինվ և նոյն ողով. այդ ուղին հայրենի պետականության հղորացման ուղին է, հայ ժողովրդի ամրողացման ուղին, հայ ժողովրդի հավերժացման ուղին:

Վարդանանք պաշտպանեցին ոչ միայն հայությունը, հայոց հավատը, այլ նաև համաշխարհային բրիտանությունը:

Զոհվեցին Վարդանանք, փրկելու համար նաև ժամանակի ամենաառաջազոր շարժումը՝ բրիտանությունը, պաշտպանելու համար լուսի և բազարակրթության ճամբան:

Վարդանանց պատերազմը բնորոշ է իր համազգային բնույթով, նրան մասնակցել է ամբողջ հայոց աշխարհը իր նախարարներով, իր սեպուհներով, իր զորականներով, իր շինականներով և հատկապես իր հոգեռորականներով: Խաչն ու սուրբ միասին են շոշողացել: Վարդանից ետ չի մնացել Ղևոնդ երեցը, Դեպի համատակություն են գնացել բոլոր եպիսկոպոսներն ու քահանաները, առաջինը ինքը՝ կաթողիկոսը: Իզուր չէր, որ Հայ Եկեղեցին, լինելով հանդերձ համարիտանություն են գնացել բոլոր եպիսկոպոսներն ու քահանաները, առաջինը ինքը՝ կաթողիկոսը: Իզուր չէր, որ ամբողջ հայության հայացքը ուղղվել է ոչ միայն նոր Երեանին, այլև Մայր Աթոռին: Եթե երեկ Հովհաննեսի կաթողիկոսն ու նրա միաբանակիցները կովեցին Վարդանի կողքին՝ համազգային միասնության և հայկական պետականության հաստատման համար, այսօր նրա հաջրդը՝ Վազգեն Կաթողիկոսն ու ճշմարիտ հայ Հոգեռորականությունը պայքարում են նույն նպատակի համար, նույն ողերությամբ և նոյն հավատով: Այժմ, եթե չկա արյունահեղ պայքար, բայց կա պայքար ազգահավաքի, վերաշինության և բարգավաճման: Կա մեծ կոիլ սիլուռահայությունը փրկելու համար ընդմիշտ կորչելու վտանգից: Մայր Աթոռ Ս. էջմիածինը զինվորագրվել է նոր Ավարայրի հաղթանակի համար:

Զոհվեցին Վարդանանք, բայց լմեռան նրանք, բանի որ սուրբերն ու հերոսները չեն:

մեռնում, նրանք ապրում են նոր կյանքով, այս դեպքում՝ մեր կյանքով: Ավելի քան կենդանի են Վարդանանք, մեզ հետ են, մեր մեջ:

Այ ժողովուրդը միշտ էլ ունեցել է իր նոր Ավարայրները: Այսօրվա Ավարայրը ամբողջացման և հայրենաշխնության Ավարայրն է, նոր կյանք կերտելու Ավարայրը, զիտակցված մահով անմահություն նվաճելու Ավարայրը:

Մեր պատմության խացումն է Ավարայրը:

Վարդանանց պատգամն է՝ չուրանալ հայկան ոգին, հայու հալվատը, հայրենին:


Բոլոր տեսակի պերճանքներին ու համար կերպին հայր բացասական պահասիան տվեց, երբ զգաց, որ դրանք պայմանավորված էին ուրացմամբ, ստորացմամբ: Նա հրաժարվեց օտարի պալատներից, նախընտրեց իր սիրճիթների անհյուրնկալ պատերը սև, որպեսզի մի օր էլ «սկ պատերվ» այդ խրճիթները վերածի պալատների, շքեղ ու ծաղկուն պալատների: Խսկ նրանք, որոնք թուլացան, ստորացան ու լքեցին հայրենին, շկան այսօր, չեն լինի նաև վաղքնանքը վայելեցին ժամանակավորը և կորան, մինչ Վարդանանք իրենց մահովը անմահության ճանապարհը բացեցին:


Հայրենի վերաշինության շենքի վրա քարավելացնող ամեն մի անհատ նոր Վարդան է, հայրենիքի հզորացման ու բարգավաճման համար տառապող, հուզվող, որոնող և ստեղծագործող ամեն անձ մի նոր Վարդան է, որը մահը վերափոխում է կյանքի, հւկերժ կյանքի, որպեսզի իրականացվի Վարդանանց երազը:

Մեր նոր երկիրը հավերժական ու կենդանի վկան է մեր պատմության բոլոր, բոլոր Վարդանանց:

Ղեռնդյանց և Վարդանանց հիշատակին նվիրված հանդիսության վերջում օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը, շեշտելով, որ Ղեռնդյանց և Վարդանանց պատերազմը ճշմարիտ հիմնաքարն է մեր ժողովրդի հոգեռոր, ազգային և մշակութային կյանքի երեկ, այսօր և հավիտյան:

Վարդանանց հիշատակին նվիրված սույն հույժ դաստիարակիչ գրական-գեղարվեստական հանդեսը վերջացավ Վեհափառ Հայ բապետի «Պահպանիչ»-ով:





## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1963—1965 թ. թ.)

Ա. — ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱՎԱՆԵՐ  
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ԱՌԹՈՒ

Տիկագոյի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն  
Մոնտեվիդեոյի հայոց Ս. Ներսես Շնորհալի եկեղեցուն  
Բերգեն Կառնտիի հայոց եկեղեցուն (ԱՄՆ)  
Պատերստնի հայոց Ս. Ղևոնդյան եկեղեցուն (ԱՄՆ)

Բ. — ՏՎՀՈՒԹՅՈՒՆ Ս. ԴՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՃԻ ՇՔԱՆՇԱՆԻ

1964—1965 տարիների ընթացքում, Վեհափառ Հայրապետի սրբատառ  
կոնդակներով, Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշաններով պար-  
գևատրվել են Մայր Աթոռի հետևյալ հարազատ զավակները, իրենց եկեղեցա-  
շեն և ազգանվեր գործունեության համար.

Մեծահարգ Եղիշարդ Ութուշյան (Փարիզ)  
Մեծահարգ Սամվել Պեհեսնիլյան (Ադրիս-Աքերա)  
Մեծահարգ Մարտիրոս Տորոգյան (Ադրիս-Աքերա)  
Մեծահարգ Լևոն Երզնկացյան (Ադրիս-Աքերա)  
Մեծահարգ Կարպիս Էպեյյան (Ադրիս-Աքերա)  
Ազնվափառ տիկին Աննա Մորլյան Մասրու (Ադրիս-Աքերա)  
Մեծահարգ Վահե-Հայկ Տինեյյան (Ֆրեզնո)

Գ. — ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

1964—1965 թվականներին Վեհափառ Հայրապետի օրինության կոն-  
դակներին են արժանացել հետևյալները.

Գերապատիկ Տ. Պարզել Եպիսկոպոս Գևորգյան (Ռուսաստանի և Նոր  
Նախիչևանի հայոց թեմի առաջնորդ նշանակվելու առթիվ).

Գերապատիկ Տ. Տիրայր Եպիսկոպոս Մարտիկյան (Ռումինիայի և Բուլ-  
ղարիայի հայոց թեմներին իրքն առաջնորդ եպիսկոպոս ձեռնադրվելու առթիվ).

Գերապատիկ Տ. Վահան Եպիսկոպոս Տերյան (Այրարատյան թեմին  
իրքն առաջնորդական փոխանորդ եպիսկոպոս ձեռնադրվելու առթիվ).

Գերապատիկ Տ. Ասողիկ Եպիսկոպոս Ղազարյան (Բաղրադի հայոց  
Հայրապետական պատվիրակ նշանակվելու առթիվ).

Գերապատիկ Տ. Եղիշե Եպիսկոպոս Սիմոնյան (ԱՄՆ), (Եպիսկոպոս  
ձեռնադրվելու առթիվ).

Գերապատիկ Տ. Չամի Եպիսկոպոս Աճեմյան (Երևանական), (Եպիսկո-  
պոս ձեռնադրվելու առթիվ).

Գերապատիկ Տ. Հակոբ Եպիսկոպոս Վարդանյան (Հարավային Ֆրանսիայի հայոց իերևան Հայութեական պատովիրակի փոխանորդ նպիսլուսուն ձեռնադպներու առժիվ)։

**Գերապատիկ Տ. Զավեն Նախակոպոս Զինձինյան** (Ալեքսանդրիա),  
(Ալեքսանդրիայի հայոց իբրև առաջնորդական փոխանորդ եպիսկոպոս ձեռնադրվելու աղօթիվ):

Դ.—ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՐԸՆՈՒԹՅԱՆ ԿՈԽՄԱԿԻՆԲ  
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐ ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻՆ  
ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒ ԱԶԴԻ ԱՐԺԱՆԱՎՈՐ ԶԱՎԱՐԻՆՆԵՐԻՆ

Մեծահարգ Հայկ Գավուզճան (Նյու-Յորք)  
Ազնվախալ տիկին Պերճուիի Ապրուան (Բելըրութ)  
Մեծահարգ Կարապետ Սլյառնյան (Բելըրութ)  
Մեծահարգ Ստեփան Տեր-Գրիգորյան (Դիտրոյտ)  
Մեծահարգ Երվանդ Համբար (Դիտրոյտ)  
Հայ երատասարդաց միության (Լու-Անջելոս)  
Արաքիրի Բայրենակցական միություն (Ֆիլադելֆիա)  
Մեծահարգ Ենովյա-Արմեն (Սարեկ)  
Մեծահարգ Արա Ավագյան (Վուտերտառուն)  
Մեծահարգ Ներսես Նալբանդյան (Աղդիս-Արերա)  
Մեծահարգ Հարություն Կոհերյան (Աղդիս-Արերա)  
Մեծահարգ Արշավիր Թերզյան (Աղդիս-Արերա)  
Մեծահարգ Պողոս Փոստանյան (Պյուլիկիլ)  
Մեծահարգ Սարգիս Բալթյան (Պյուլիկիլ)  
Բարեշնորի Կարապետ սարկավագ Փափազյան (Պյուլիկիլ)  
Ազնվախալ տիկին Մարիամ Մխիթարյան (Պյուլիկիլ)  
Մեծահարգ Հովհանիս Մահմադյան (Նյու-Յորք)  
Բարեշնորի Մկրտիչ սարկավագ Հակոբյան (Սիդնի)  
Մեծահարգ Ստեփան Բանիկյան (Սիդնի)  
Մեծահարգ Նազարեթ Գարագյովյան (Ալբուկոն)  
Ազնվախալ տիկին Մարի Քյուրեյյան (Մելբուրն)

Ե.՝ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԽԱԶԻ

1964—1965 թվականներին, հայրապետական սրբաւոր կոնդակներով, վարդապետական լանջախաչ կրելու իրավունք է շնորհվել հետևյալ վարդապետներին, Արանց հոգևոր-եկեղեցական, վարչական և կրթական ծառայության որպես տրիտոր.

**Հոգեշնորհ S. Արսեն Վարդապետ** Բերքերյան (Ս. Էջմիածին)  
**Հոգեշնորհ S. Նարեկ Վարդապետ** Շաբարյան (Ս. Էջմիածին)  
**Հոգեշնորհ S. Գևորգ Վարդապետ** Սերտյան (Ս. Էջմիածին)

### **9.—ՏՎՅՈՒԹՅՈՒՆ ԱԿԱԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ**

Քահանայական երկարատև և ամբասիր ծառայությունների համար, վերջն երկու տարիների ընթացքում, Վեհափառ Հայրապետի պրատառ կոնդակներով և թեմակալ առաջնորդների միջնորդությամբ, ավագության պատիվ է շնորհվել Բետնյալ արժանապատիկ հարեւեհն։

**Արժանապատիկ** S. Արամայիս քահանա Միրզյան (Սիդնի)  
**Արժանապատիկ** S. Պատ քահանա Սարգսյան (Ռիոլի, ԱՄՆ)  
**Արժանապատիկ** S. Գնել ավագ քահանա Մանուկյան

(Սուչավա, Ռումինիա) Արժանապատիվ S. Մեսրոպ ալիք բանանա Պարունակ

Արժանապատիս **S. Տռութ ավագ ռահման Տրութաբան**  
(Կոնստանցա, Ռումինիա)

Արքայի կողմէն պատճենաբառ առաջարկ ըստ ազգային համապատասխան օրենսդրության (Վաղարշապատ, 1886 թ.)

**Արժանապահության Ընկերության քահանա Աշխալյան (ԱՍԸ)**  
**Արժանապահության Ընկերության ավագ քահանա Վարդանյան (Կրետոն)**

**Է.— ԻՐԱՎՈՒՆՔ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱՆԱԶ ԿՐԵԼՈՒ**

1964—1965 թվականներին, երկարամյա եկեղեցանվեր ծառալությանց համար, Վեհափառ Հայրապետի կոնդակով, քահանայական լանջախաչ կրելու իրավունք է շնորհվել հետևյալ արժանապատիկ քահանա՝ հայրերին.

Արժանապատիկ Տ. Կարեն քահանա Կոտանեան (Նյու-Յորք)

Արժանապատիկ Տ. Վահան քահանա Կարապետյան (Գալաց,  
Ուստինիա)

Արժանապատիկ Տ. Գևորգ ավագ քահանա Սարյան (Պլովդիվ)

Արժանապատիկ Տ. Միքայել քահանա Պեղիրճյան  
(Սիլիստրե, Բուլղարիա)

Արժանապատիկ Տ. Գարեգին քահանա Տյուլկերյան  
(Բուրգազ, Բուլղարիա)

Արժանապատիկ Տ. Վահան ավագ քահանա Փափազյան (Սոֆիա)

Արժանապատիկ Տ. Հայկ քահանա Տոնիկյան (Պրովինցիան)

Արժանապատիկ Տ. Տիրան քահանա Փափազյան (Դիտրոյտ)

Արժանապատիկ Տ. Վարդան քահանա Ավազյան (Լորեն)

Արժանապատիկ Տ. Թադևոս քահանա Զմրուխտյան (Երևան)

Արժանապատիկ Տ. Գևորգ քահանա Փափազյան (Երևան)

Արժանապատիկ Տ. Նշան քահանա Հաննեյան (Երևան)

Արժանապատիկ Տ. Վազգեն քահանա Ամատունի (Օշական)

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, ջերմորեն շնորհավորելով հայրապետական բարձր գնահատության արժանացողներին, բոլորին քարեմայթում է եկեղեցանվեր և ազգօգուտ հետագա նոր գործունեություններ, ի սպաս Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու և ի միմիթարություն հայ հալլատացյալ ժողովրդի:



## Մ Ա Ց Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Փետրվարի 1-ին, Երեքշաբթի, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, Հետմիջօրեի ժամը 3-ին, Վեհարանում գումարվեց Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նիստը, ուր քննության առնվեցին 1966 թվականին Մայր Աթոռում ենրա սահմաններից դուրս կատարվելիք շինարարական և վերանորոգչական ծրագրերը:

\* \* \*

Փետրվարի 6-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողապալյանը՝ «Դարման տար զմա և զոր ինչ ծախեցես ի գա՞ ի միւս անգամ գալստեան իմում հատուցից քեզ» բնաբանով:

\* \* \*

Փետրվարի 9-ին, շորեքշաբթի, Հոգենոր Ճեմարանի ուսանողությունը, վերատեսչի և դասախոսական կազմի առաջնորդությամբ, Երևանում կատարեց մի շարք շրջապատույտներ, այցելելով պետական թանգարան և Հովհաննես Թաղեռոյանի նկարչական ցուցահանդեսը:

\* \* \*

Փետրվարի 10-ին, նինջջաբթի, Հետմիջօրեի ժամը 3-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, Հոգենոր Ճեմարանի ամբողջ դասախոսական կազմի մասնակցությամբ, գումարվեց մանկավարժական ժողով, ուր ամփոփվեցին Ճեմարանում կիսամյա գրավոր և բանավոր քննությունները:

Ժողովում ելույթ ունեցան վերատեսուչ Ներսես ծայրագույն վարդապետը, դասախոսներ Վահան եպիսկոպոսը, Գրիգոր վարդապետը, Ա. Հատիտյանը, Գ. Գյուլյանը, Պ. Շահրապյանը, Ս. Անթոսյանը և Վ. Փարսադանյանը, նշելով ուսանողության՝ ճեմությունը:

բերած հաջողություններն ուսման բնագավառում: Ժողովում քննության առնվեցին նաև ներքին կարգապահական հարցեր:

Վերջում դասախոսական կազմին ուղղված գոհունակության և օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը, անելով միշտը մանկավարժական թելադրություններ՝ Հոգենոր Ճեմարանուն ուսումնագաստիարական գործի հետագա էլլապելի արդյունավետության համար:

\* \* \*

Փետրվարի 11-ին, ուրբար, Իրեկոյան ժամը 6-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, գումարվեց Գերագույն Հոգենոր Խորհրդի նիստը, ուր Մայր Աթոռի ճարտարապետ Ա. Գալիկյանը զեկուցեց 1966 թվականին Մայր Աթոռում և նրա սահմաններից գուրս կատարվելիք շինարարական ու վերանորոգչական աշխատանքների ծրագրի մասին:

Գերագույն Հոգենոր Խորհրդության, հաստատեց ներկայացված շինարարական ծրագրի մասին:

\* \* \*

Փետրվարի 13-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը և քարոզեց Հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողապալյանը՝ «Մեծ աւետիք են այսօր ժողովոց համայնք» բնաբանությունը:

Ժամը 5-ին, Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետը նախագահեց Տյառնընգառաջի նախատօնակին:

Երեկոյան ժամը 7-ին, Հոգենոր Ճեմարանում, տեղի ունեցավ հերթական գրականգեղարվեստական երեկո, որին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միարանությունը, Հոգենոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

Դասախոս Ս. Անթոսյանը բանախոսէց «Հայ մշակույթը և նրա միջազգային նշանակությունը» թեմայի շուրջ: Ուսանողներից ոմանք հանդես եկան հայ մշակույթին նվիրված բերթվածների արտասանությամբ: Ուսանողական երգչախումբը «աշողությամբ կատարեց մի շարք շարականներ և երգեր: Երեկույթը փակվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով:

Ժամը 8-ին, Վեհարանի բակում, Վեհափառ Հայրապետը վառեց Տյառնընդառաջի ավանդական խարուցկը, խանդավառ մթնոլորտում, ի ներկայության Մայր Աթոռի միաբանության, Հոգեոր Ճեմարանի զասախոսական կազմի և ուսանողության: Աշակերտությունը խարուցկի շուրջ հանդես եկավ երգերով և արտասանություններով:



Փետրվարի 14-ին, Երկուշաբթի, «Տեառնընդառաջ»: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Նշան քահանա Բեյլերյանը:



Փետրվարի 14-ին, Երկուշաբթի, հետմիջօրեի ժամը 1-ին, Հոգեոր Ճեմարանի ուսանողությունը շրջապույտ կատարեց դեպի Զվարթնոցի ավերակները:



Փետրվարի 20-ին, կիրակի, թուն բարեկինդան: Մայր Տաճարում, փակ խորանի

առաջ, պատարագեց Հոգենորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը:

Քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ «Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի իմասցի ձախ քո զինչ գործէ, աջ քու բնաբանվէ:



Փետրվարի 21-ին, Երկուշաբթի, Հոգեոր Ճեմարանի ուսանողությունը, զասախոսական կազմի առաջնորդությամբ, շրջապույտ կատարեց մայրաքաղաքի տեսարժան վայրերը և այցելեց պետական պատկերասրան ու Կարմիր բլուրը:




Փետրվարի 23-ին, շուեկշաբթի, Մայր Տաճարում հանդիսավորապես սկսվեցին Մեծ պահոց հատուկ ապաշխարության կանոնի արարողությունները՝ Արևագալի, Ճաշու, Խաղաղականի և Հոգումի ժամերդությունները:



Փետրվարի 27-ին, «Թ» կիրակի Քառանուրդական պահոց (Արտաքսման), Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը: Քարոզեց գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսը՝ «Ճի անհնապանգութեամբ միոյն մարդոյ մեղաւորք բաղումբ եղեն» բնաբանով (Հուով. Ձ 19):





## ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՏՈՆԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՑՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ընդառաջելով Թրիլիսիի հայոց եկեղեցու թեմական խորհրդի հրավերին, ճեմարանցի ուրարակիր Հովսեփ Հակոբյանի ընկերակցությամբ, փեսրվարի Յին, հինգշաբթի, Ս. Սարգսի տոնի առթիվ, մեկնեցինք Թրիլիսի՝ պատարագելու և քառողելու տեղի հավատացյալ հայ ժողովրդին:

Գնացքը Թրիլիսի հասավ ուրբաթ օր վաղ առավոտյան: Մեզ դիմավորելու էին եկել արժանապատիվ Տ. Կարգան քահանա Թաղեռոյանը և թեմական խորհրդի անգամները: Քարի գալստյան և ողջույնի խոսքերից հետո, մեկնում ենք հայոց Ս. Գևորգ եկեղեցին, ուր մեր աղոթքը կատարելուց հետո, դուրս ենք գալիս եկեղեցուց, «Հոգուց» արտասանելու Ս. Գևորգ պատմական եկեղեցու շուրջ թաղված նշանավոր հայ անձնավորությունների՝ այդ թվում 1251 թվականին Ս. Գևորգ եկեղեցին վերաշինող իշխան Ումեկի, Սայաթ-Նովայի, Կարապետ եպիսկոպոս Թումանյանի, Փիլիպոս ավագ քահանա Սահառունու, Մարտիրոս ավագ քահանա Ամիրխանյանի, Նկարիչ Գևորգ Բաշինցայանի, զորավարներ Մ. Լորիս-Մելիքյանի, Հովհաննես Լաղարյանի, Արշակ Տեր-Ղուկասյանի, թեհրով Շելկովնիկովի և ուրիշների հիշատակին:

Ուրբաթ երեկո է, եկեղեցու ուխտի օրը: Թրիլիսիից, շրջակա քաղաքներից ու գյուղերից Ս. Գևորգ եկեղեցի են եկել ուխտավորներ, տոնական տրամադրությամբ:

Սկսվում է եղեկոյան ժամերգությունը, Հավատացյալները, երկուղածությամբ ու աղոթքով, մոտենում են Ս. Սարգսի պրանկարին, կատարում իրենց ուխտը և աղոթում աշխարհի խաղաղության համար:

Կատարում ենք նախատոնակը:

Հետզհետե մեծանում է հավատացյալների խումբը: Ամեն կողմ աղոթք, ուխտավորի հատուկ խանդավառություն և բարեպաշտություն: Բոլոր ուխտավորները գիշերում են եկեղեցու հովանու տակ:

Փետրվարի 5-ն է, շարաթ առավոտաւեկեղեցում պաշտվում է առավոտյան ժամերգությունը, որին հաջորդում է սուրբ պատրագը:

«Հայր մեր»-ից առաջ, հաղորդելով րոլորին Ս. Սարգսի տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու ողջույնները, քարոզում եմ օրվա մեծ սրբի կյանքի և նահատակության մասին:

Ս. Սարգսը ազգով հույն էր, բայց հայացած, վարում էր զորավարի պաշտոն Հուլիանոս Ուրացողի բանակում, Կապատովկիայում: Նա միաժամանակ ճշմարիտ, նախանձախնդիր քրիստոնյա էր, քանդում էր մեջյանները, եկեղեցիներ ու խաչեր բարձրացնում և հրավիրում ժողովրդին ճշմարիտու լուսավոր հավատի պաշտամունքին:

Ս. Սարգսի գործունեությունը երկար չի տևում: Նա որոշում է թողնել իր պաշտոնը, բաժանում՝ իր ունեցվածքը աղքաներին և իր փոքրիկ, մորից որրացած որգուլ Մարտիրոսի հետ գալիս է Արևելք՝ Հայաստան, ուր իշխում էր Տիրան թագավորը: Հայոց թագավորը, վախենալով Հովհանոս Ուրացողի վրեժինգրությունից, խորհուրդ է տալիս Ս. Սարգիս զորավարին մեկնել Պարսկաստան: Շապուհ Բ-ը ընդունում է անվանի զորավարին և քաղաքական ապաստան տալիս նրան Խորասան քաղաքում:

363 թվականին, Հովհանոս Ուրացողը հարձակվում է Պարսկաստանի վրա, սրածություններով հասնում Տիրուն: Շապուհ Բ-ը փախչում է Խորասան, Ս. Սարգիս զո-

րավարի մոտ: Ս. Սարգիս, իր մի խումբ քրիստոնյա գնդով և պարսկական մեծ րանակով, զեմ է դուրս գալիս Հովհանոսին: Կովում սպանվում է Հովհանոս Ուրացողը, որը, իր կյանքի վերջին րոպեներին, իր մարմնից հոսող արյունից մի րուռ վերցնում ու շաղ է տալիս հողի վրա ասելով. «Յաղթեցեր, յաղթեցեր Դալիլիացիդ. առ ի վերայ աստուածութեանդ քո և զթագաւորութինս իմ»:

Կովից հետո Ս. Սարգիսը վերադառնում է Հաղթական, հուս ունենալով, որ այլևս վերջ կտնեն խոռովովիյունները, սրածություններն ու ավերմունքները և այլևս արյուն չի թափվի: Պալաաի ներսում, սակայն, իշխանները դժոխություններ են հայտնում Շապուհին, թե ամբողջ զորքը քրիստոնյա է դարձել և զրպարտում, թե Սարգիս զորավարը ուզում է տիրանալ պարսից զահին:

Շապուհը առաջարկում է սուրբին՝ զոհ մատուցել «արարիշ» կուռքերին՝ ի գոհություն նրանց պարգևած Հաղթանակի: Ս. Սարգիսը լի հազանդվում Շապուհի հրամաններին և ասում է նրան. «Ամոթ է, արքա, արարածներին արարիշ անվանել, ես մեկ Ասաված եմ ճանաչում և նա է արարիշ երկնի և երկրի և ամենայն արարածոց»:

Այս խոսքերից հետո, քրիստոնյա զորավարը բարձրացնում է ձեռքի լախտը ու ջարդում արքային շրջապատող բոլոր կուռքերը, Ամրոխը հարձակվում է սուրբի վրա ու տանում բանտ, տանջանքներով ու շարշարանքներով:

Այս բոլորը տեղի են ունենում փոքրիկ Սարտիրոսի աշխերի առաջ: Երեխան, տեսնելով իր հոր ծանր դրությունը, կամենում է իր թուզ բազուկներով օգնել հորը: Նա ընդառաջ է վազում օգնելու, բայց զոհ է գնում կուպաշտ ամբոխի բիրտ ոտների աակ:

Ս. Սարգիսը տեսնում է որդու մահը և փառք տալիս Աստուծուն, որ նա բյուրավոր նահատակների կողքին իր անմեղ արյունը թափեց քրիստոնեական ճշմարիա կրոնի պաշտպանության համար:

Շապուհը հրամայում է գլխատել Ս. Սարգիս զորավարին: Սուրբին տանում են Մազանդարա քաղաքի կառավինարանը: Սուրբի գլխատման պահին, տասնշորս պարսիկ զինվորներ, ազդված զորավարի անվեհեր քաշությունից, հավատում են Քրիստոսին և ընդունում մարտիրոսությունը:

Ս. Սարգսի մարմինը Մազանդարայից տեղափոխվում է Համին (Համրան) քաղաքը, ապա Ս. Մեսրոպ վարդապետը այն տեղա-

փոխում է Կարբի, ուր կառուցվում է Ուշի վանքը՝ Ս. Սարգսի անունով: Այդ վանքը պահպանվում է մինչեւ այսօր:

Հետագայում Ս. Սարգսի մասունքներից մի մասը տարվում է Վրաստան, Գագկա կամ Դագա գաշտ, ամփոփվում փայտյա խաչի մեջ և բարձրացվում ըլլի գագաթը: Վայրը կոչվում է Գագկա կամ Գագա Ս. Սարգիս:

Հայ եկեղեցին ամեն տարի կատարում է Ս. Սարգսի, Մարտիրոսի և նահատակ տասնշորս գինովորների տոնը, որն ունի նաև շաբաթապահը, Առաջապորաց կամ Ս. Սարգսի պահը անունով:

Սուրբ պատարագի ավարտին հազորգվում է ողջ ներկա ժողովուրդը:

Փետրվարի 6-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, սկսվում է պատարագը Ս. Գեղվորգ եկեղեցում: Ներկա է հավատացյալների հոգ բղմություն:


Սուրբ պատարագի ժամանակ, իմ քարոզում, հայտնում եմ Հայոց Հայրապետի եղբայրական սիրալիր ողջունները նորին Սրբություն եփեմ թ-ին, Վրաց եկեղեցուն և եղբայրական վրաց ժողովրդին:


Վեհափառ Հայրապետի օրհնություններն եմ հայտնում նաև Վրաստանի սիրելի հայ ժողովրդին, հորդորում հավատարիմ մնալ ճշմարիտ հավատի վրա և այդ հավատով պահպանել Հայոց Ս. Եկեղեցին: Ապա քարոզում եմ «Այսօր տօնեմք զտօն վկայիցն, որք արեամբ նահատակեալը փոխեցան ի զօրս վերին զուարթնոցն» շարականի բնարանով: Նախ խոսելով Ս. Սարգսի տոնի գաղափարական բովանդակության մասին, պատմում եմ այն նշանավոր սրբերի մասին, որոնք իրենց կյանքը զոհեցին Ս. Սարգսի նման, նույն գաղափարի և նույն ճշմարտության համար. այդպիսիններն են Քրիստոսի տասներկու առաքյալները, Ոսկյանք, Սուրբիասյանք, Գրիգոր Լուսավորիչ, Հոփիսիմյանք, Ղեղողյանք, Վարդանանք և շատ ուրիշ նահատակներ: Այդ դասին է պատկանում նաև մեր երկու միլիոն հայ քրիստոնյաների սուրբ նահատակությունը 1915 թվականին՝ հանուն Քրիստոսի և Հայրենիքի:

Երեկոյան, թեմական և եկեղեցական խորհրդի անդամները կազմակերպել էին Ս. Սարգսի տոնի առթիվ ճաշկերութի, որին ներկա էին քահանա հայրերը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները, եկեղեցու պաշտպանյաները և հյուրեր:

Փետրվարի 7-ին, երկուշարթի, հրաժեշտ ենք առնում և վերադառնում Մայր Աթոռ:

ԳԵՐԱԴԱՐ ՎՐԴ, ՄԵՐԱՑԴԱՐՑԱՆ





## Հ. Ճ. ՍԻՐՈՒԽԻ

# ԿՈՄԻՏԱՍԱՍԻՆ ՀԵՏ\*

Ե.—ՀԱՂԹԱՆԱԿԻ ՃԱՄԲԱՆ

## I.—Արաշին հաղթանակ

Կոմիտասի առաջին համերգը տեղի ունեցավ ու վերածվեցավ փառատոնի մը: Բոլոր դավերը ձախողեր էին և առանց ուզելու, համերգը վերածեր էին հաղթանակի մը:

Այդ օրն էր, որ կնվիրագործեր Կոմիտասի նոր առաքելությունը և ճամբար կրանար նոր հաղթանակներու, որոնք, անկե հետո, հաշորգեցին իրարու, թեև խոպու ձայները միշտ շգագրեցան և մինուրտը թունավորել փորձողներ միշտ գտնվեցան...

1910 նոյեմբեր 21/4 ղեկտեմբերի այդ համերգին մասին կրտեինք ռԱզատամարտա-մարտա-ի մեջ:

«Կիրակիի համերգը—թրտի-շանի թատրոնի մեջ—հայկական երգին ու երաժշտության համար սարքված, այսպես ըսնեք, ապոտեզի հանդես մը եղավ: 300 հոգինոց երդախումբ մը, ծաղկատի փոքրիկներ և երիտասարդներ բաղկացած, երգեց հայ եկեղեցական և ժողովրդական երգեր՝ ղեկավարությամբ Կոմիտաս վարդապետի: Կիրակիի համերգը ցուց ավավ, թե ո՞ր աստիճան մեծ արժանիքով մը կներկայանա հայ

տոհմիկ երաժշտությունը, և Կոմիտաս վարդապետի գործը ո՛քան դնահատելի է՝ իր տաղանդովն ու աշխատությամբը ձայնագրելով և երկան բերելով, ա'յնքան փայլուն հաշողով մը, հայ գեզարվեստական հանճարին արդյունքները:

Բացի խմբերգերեն, երգեցան նաև մեներգներ, երկերգներ և եռերգներ, որոնց մասնակցեցան օրիորդներ և երիտասարդներ: Մասնավորապես հիշատակելի էին [Հայկ և Արտաշես] Սեմերճյան եղբայրները և օրիորդ [Զապել] Նորիկյան: Իսկ Կոմիտաս վարդապետ ինքը, հակառակ իր հիվանդագին վիճակին, առանձինն գեղեցկորեն երգեց թե՛ եկեղեցական և թե՛ ժողովրդական մեներգներ, ինչպես հին ատղեր, կառուաի երգեր և հովվերգներ, միննուն ատեն ինքն իսկ ընկերանալով իր մեներգներուն՝ դաշնակի կամ երգեհոնի վրա:

Ժողովուրդը, որ ներկա էր հոն բազմությամբ, արտասովոր խանդավառությամբ կհետևեր այդ երգեցողով թյուններուն, մասնավանդ ժողովրդական երգերուն: Գերմանացի երաժշտագետ մը, Պոլ Լանգե թեյ, որ ներկա էր համերգի առաջին մասին, հիացուազ կիսուեր հայ երաժշտության նկատմամբ»:

Եվ հետևյալ նոթը կլցեինք սույն տեղեկատվության:

\* Չարումակված պէմբիածին» ամսագրի 1965 թվականի Խ Ա-ից, Ե-Զ-Է-ից, Ը-Թ-ից, Ժ-Ի-ց և 1966 թվականի Խ Ա-ից:

«Հետադիմականներու սարքած դավերը Կոմիտաս վարդարեատի գործը ձախողեցնելու համար,—և այդ մաքով նույնիսկ թերայի կառավարիչին մոտ գրպարտած էին զայն, թե խոռվարարական երգեր պիտի երգե, — ապարդյուն անցան, և Կոմիտաս վարդարեատ, հակառակ նաև հավատաքննաւկան արգելքներու, իր ծրագիրը գործադրեց ժողովրդային միահամուռ համամտության մեջ»<sup>47</sup>:

«Բյուզանդիոն» կգրեր իր կարգին.

«Անօրինակ և խանդավառ ողևորության մեջ երեկ տեղի ունեցավ Կոմիտաս վարդարեատի համերգը, որ արվեստի հաղթանակ մը եղավ: Երեք հարյուրի շափ ծաղկատի աղջիկներ և երաժշտասեր պատանիներ սրբազն և քննավավառի տումիկ երգերով 3 ժամ վերացուցին, դյուֆեցին ներկաներու բազմությունը: Տ. Կոմիտաս վարդարեատ այսրան կարճ ժամանակամիջոցի մեջ մարզելով այս սավար երգչախումբը, ցույց տվավ, թե անվիճելի կերպով մասնագետն է, վարպետն է այս արվեստին: ... Տ. Կոմիտաս վարդարեատի ղեմ ամեն մեքենայություն գործվեր: Նույնիսկ ջուրը ձգելու համար համերգը, թերայի կառավարչության զեկուց եղեր է, որ խոռվարարական երգեր պիտի երգվին»<sup>48</sup>:

Իզմիրին Մարգարիտ Թաթյանին գրած իր նամակին մեջ Կոմիտաս կըսեր.

«Զես կարող երևակայել, թե ինչե՞ր քաշեցի, ի՞նչ օյիններ սարբեցին տխմար տիրացուներն էստեզ, բայց ես հաղթեցի և հայ երաժշտությունը հնչեցրի նորից: Կամ, կպատմեմ մանրամասն, որ տեսնես, թե ինչպես ապականած է այստեղի բարքը, կյանքը...»<sup>49</sup>:

Մինչև այսօր ալ կլեցվիմ բաղցը հուզումով մը՝ քանի հիշեմ Կոմիտասը իր այն օրվան փառքին մեջ, ու քանի միտքը բերեմ սրահը, հորդագեղ լեցված, ու բռնկած տարօրինակ արրեցությամբ մը:

Ու կհիշեմ, նույնքան հուզումով, Վահան Խոյան համեստ քահանան, սրահին մեջ անկյուն մը նստած, արցունքը աշքին: Միակ հոգեռականն էր այն օրը ներկա...»

## II.—Հաղթանակին առջև

Ըսենք անվարան, Կոմիտաս Պոլսո մեջ իր շուրջը գտավ առաջին իսկ վայրկյանեն գրի

<sup>47</sup> «Ազատամարտ», 1910 նոյեմբեր 23/6 դեկտեմբեր, թիվ 446:

<sup>48</sup> «Բյուզանդիոն», 1910 նոյեմբեր 22/5 դեկտեմբեր, թիվ 4291:

<sup>49</sup> «Մշակութ», Փարիզ, 1935, էջ 163:

ու արվեստի մարդիկը: Կրքերու բռնկած այդ պահուն, երբ հայ մտավորականությունը ևս, ալիքեն քշված, ինք ալ զուրկ էր հոգեկան ներքին կապե մը, կուգար սիրով խմբվիլ սակայն Կոմիտասի շուրջը, Կոմիտաս առաջին օդակը կդառնար խորթացած եղբայրներու միջև Ու փոխարեն, այդ մտավորականությունը տեսակ մը կորու կներշնչեր իրեն՝ գործունելիթյան դաշտ նետվելու պահուն:

Սեմ կրնար չհիշել, գեթ անցողակի, թե բարերախտություն մըն էր, որ հայ կյանքի այդ ալեկոծ շրջանին «Ազատամարտ» իր գլուխն ուներ Ռուբեն Զարդարյանը իրեն խմբագրապետ, — բարերախտություն, որովհետեւ գրականության և արվեստի հարցերու մեջ ան վեր կմնար կողմնակի ամեն նկատմեմ:

Դեռ կհիշեմ, նայնպես, Կոմիտասի առաջին այցը մեր խմբագրատունը: Եկեր էր փնտուելու Կովկասի իր ծանոթները ու ծանոթանալու մեզ հետ: Այն քանի մը բռպեն, զոր մեր մեջ անցուց, երբեք պիտի շմոռնամ: Մարգարեներ կան, որոնք ուզ կհասկրցվին, պետք է, որ երկար տքնին, մինչև որ գտնեն հոգիներու ճամբան: Կոմիտաս առաջին պահեն կկախարդեր քեզ: Ան կսկսեր նախ սիրցնել այն թշվառ, հեր հայ գեղջուկը: Որ արհամարհվեր էր մինչև այդ օրը:

Այսպես էր, որ Կոմիտաս մեզ իր հետը ունեցավ, ու ալ նշանակություն շունեցավ երբեք ուրիշ որոնք նկատում:

Հողվածագիր մը, որ Սիմեոն Գյուլը կստորագրեր, վերջերս հետեւալ կերպով կներկայացներ Պոլսո հայ մամուկին դիրքը զեպի Կոմիտասն ու իր ձեռնարկները:

«Մանզումես օրաթերթը, որ Սահմանադրութենեն առաջ՝ շարդարար Համիդի ծննդյան տոնակաարության առթիվ՝ փորին վրա սողալով՝ «բարեկինամ» ածականով կհորչորչեր գահիճը, մեծ տառերով խմբագրական մը ուներ, որով կճշար ու կպարտագրեր, որ Կոմիտաս «նախ սկնմը նանե»... ու հետո ընե այդ աշխարհականի գործը...»: իսկ «Բյուզանդիոն»-ը նովենց իշխանության ուղարքությունը կիրավիրեւ այս «գայթակղալից» արարքին վրա...:

Մյուս թերթերն ալ միևնույն եղանակը կնվագեին. «Վարդարեատ» տըլալ, ու թեմը բարձրանալ... պատշաճ արարք մը չէ աս: Անոր տեղը՝ խորանն է...: Եթե ասոր ալ աշք գոցենք, ու ազգ կմնա, ու ալ ծկեղեցի...»:

Այս խաժամուժային վայրերանության մեջ՝ բացառություն կկազմեր միայն «Ազատամարտ» օրաթերթը, որ հազիվ լրացուցած էր տարվան մը հրատարակությունը: Թե-

պետև կուտակցական խմբադրական կազմ ուներ, սակայն անվերապահ կերպով ան կպաշտպաներ Կոմիտաս վարդապետի ձեռնարկը՝ իրեն մշակութային վեհ զարթոնք մը:

Յավալի պարագա մըն էր, որ այս պաշտպանությունը ավելի կզայրացներ հակառակորդ տարրերու կատարությունը... սուր հանգամանք տալով լուսան բոյկոտին Մայրաքաղաքի ազնվական դասակարգի ընտանեկան սահմաններեն ներս չէր թափանցած տակավին «Ազատամարտու-ը...»<sup>50</sup>:

Սիմեոն Գյուլոյի այս տողերը, իրենց էությամբ ճիշտ, իրականության հարազատ պատկերը շեն սակայն, և շատ իրավունք ուներ Հովսեփ Սվաճյան դրերու այդ առթիվ, թե ոչեմ կարծեր, որ իրականության համապատասխան Գյուլոյի գրածները «Բյուզանդիոն» թերթի մասին, զոր ցուցուցած էր իրը հակառակորդ Կոմիտաս վարդապետի գեղարվեստական գործունեության Կոստանդնուպոլիսու մեջ։ Ընդհակառակը, Բյուզանդ Քեշյան, բազմարդյուն խմբագրապետը «Բյուզանդիոն»-ի, միշտ ալ ներկա կը լար վարդապետին սարքած համերգներուն, և դարձյալ ինքն էր, որ բուռն հոգվածով մը հակառակ արտահայտվեցավ Կոնճական ժողովին այն որոշման, որ փիլոնագուրկ կհողակեր Կոմիտաս վարդապետը, Արմենակ Շահմուրադյանի երգապանակներուն արձանագրության իր մասնակցությունը բերած ըլլալուն համար»<sup>51</sup>:

Համամիտ ըլլալով հանդերձ «Բյուզանդիոն»-ի դիրքին մասին հոգվածագրին դրածներուն, պետք կզայրանք ուղղել, որ Կոռոնական ժողովը իր հանգնությունը շհասցուց մինչև Կոմիտասը փիլոնագուրկ ընելու աստիճանին, ճիշտ շենք գտներ նույնպես անոր դրածը, թե «Կոմիտաս վարդապետ, Օրմանյան սրբազնի հետ միասին, քարոզիչն էր Ղալաթիո Ամենափրկիչին, ուր ան կպատարագեր կանոնավորաբար տաղավարներուն»։

Սիմեոն Գյուլոյ Հովսեփի Սվաճյանի հոդվածին կցցեր սակայն լուսաբանություն մը, ըսելով. «Արդ, «Բյուզանդիոն» թերթը՝ պահպանողական միջնաբերդին կարկառուն սյուներեն մինն էր։ Պատկառելի թերթ։ Կընա՞ պատահիլ արդյոք, որ ան նպաստավոր վերաբերում մը ցուց տված ըլլա Կոմիտասի գեղարվեստական գործունեության հանդեպ։ Անհավանական կնկատեմ։ Որովհետեւ, այդպիսի խորիս քայլ մը աններ-

<sup>50</sup> «Սիրանի գոտի», Թոստոն, 1960, թիվ 2-3, էջ 7։

<sup>51</sup> Անդ, 1961, թիվ 3, էջ 29։

դաշնակ պիտի ընթանար իր պահպանողական ուղղության հետո Հետո, այդպիսի քայլ մը անկարելի էր որ աննկատ անցներ, առանց շառաչուն հետեւանքի ես, ինք հետեւած չեմ «Բյուզանդիոն»-ին. սակայն ժողովուրգը պիտի խոսեր այդպիսի երևույթի մը վրա, երկար ատեն Եվ կարելի չէր, որ այդ երևույթը աննկատ անցնվեր։ Մանավանդ, բուռն պայքարի պահունակ։

Այս տողերը դրովը մեկն է եղեր «Ազատամարտու-ի խմբագրության անդամներեն և բնականաբար փառք կսեպե իրեն Կոմիտասին աջակցած ըլլալ իր ձեռնարկներուն մեջ, որքան ալ համեսա եղած ըլլա այդ աջակցությունը։ Բայց արդարությունը պարտք կդնե իր վրա արձանագրել հոս, թե «Ազատամարտ» մինակը չէր Կոմիտասի կողքին։ Հակառակ իր պահպանողական ուղղության և օրոշ հարցերու մեջ իր պարզած հետամնաց կարծիքներուն, «Բյուզանդիոն» և զորապիդ էր Կոմիտասին և այդպիս ալ մնաց։

Ստուգիվ, Բյուզանդ Քեշյան ևս մեկն եղավ Կոմիտաս վարդապետի հանդեպ ժայր տվող խաչակրության դեմ առաջին ծառացողներեն, դիրք, զոր քոներ էր, ըսենք ի պատիվ իրեն, քանի մը տարի առաջ եռաձայնի դեմ մղված պայքարի օրերուն ալ, պաշտպան կանդելով բազմաձայն երգեցողության հայ եկեղեցիներու մեջ։ Խորագրականի մը մեջ<sup>52</sup> ան փութաց ձաղկել խավարամտությունը, որ կուգար խափանել Կոմիտաս վարդապետի առաքելության ճամբան, և կծու խոսքեր կուղղեր պատրիարքական փոխանորդ Ղեռնդ ծարագույն վարդապետ Դուրյանի հասցեին՝ ստորագրած ըլլալուն համար լարացուք պաշտոնագիրը։

«Եկեղեցվո պաշտոնյա Վրույր», որ ուրիշ մեկը չէր, բայց եթե պատրիարքական փոխանորդ Ղեռնդ վարդապետ Դուրյան, մեկը առաջին խաչակրության մերակիցներեն, «պահպանողականություն» թե խավարամտություն» խորագրով հոդվածի մը մեջ<sup>53</sup> պատասխան կուտար Քեշյանի, փորձելով պաշտպանել Պատրիարքարանի արգելքը։

Քեշյան կըսեր իր պատասխանին մեջ։

«Բայց ո՞վ կըսե, թե Հայ եկեղեցվո դեմ ո՞րևէ կերպով հարգանքի պակասություն կդորժվի՝ իր զարականներն երգելով այս կամ այն ժողովրդային սրահի մը մեջ, նույնիսկ թատրոնի մը սրահին մեջ, երբ նույնշափ ընդարձակ ուրիշ սրահ մը, կամ աղքային հարկ մը տրամադրելի չէ։

<sup>52</sup> Անդ, էջ 31։

<sup>53</sup> «Բյուզանդիոն», թիվ 4293։

<sup>54</sup> «Բյուզանդիոն», թիվ 4296։

ինչ որ հայ եկեղեցվո մեջ միայն կրնա կատարվիլ, և հայ եկեղեցին գուրս տեղ մը կատարվելով վավերական, օրինական պիտի զլլար, ո՞չ ոք կառաջարկե թաարոնի մը սրահին մեջ կատարել զայն: Պատարագն հայ եկեղեցվո մեջ միայն կրնա մաաուցվիլ: Մանուկն հայ եկեղեցվո մեջ միայն կմկրտվի: Եկեղեցականներն հայ եկեղեցվո մեջ միայն կձեռնադրվին, և այլն և այլն: Ո՞վ միտքեն կանցնե աշխարհիկ սրահներու մեջ գործագրել այսպիսի ժեսեր ու արարողություններ: Բայց Հայ եկեղեցվո շարականները կերպվին տուններու մեջ ալ, դաշտահանդեսներու մեջ ալ, և երաժշտապետին դաս տված ո՞րևէ սրահին մեջ: Ո՞րևէ հոգեորեգ մը կամ աղոթիք մը եկեղեցին դուրս երդվելուն արգելք մը չկա, որովհետև ասիկա ծիսակատրություն մը, խորհուրդ մը, արարողություն մը չէ, որ եկեղեցի շենքին սեփական ըլլա: Ուրեմն, եկեղեցի շենքեն ներս ո՞րևէ տեղ երգվելու հարմարություն ունեցող շարական մը, «Ճէր ողորմեա» մը, հոգեոր տաղ մը կրնա երգվիլ նաև թաարոնի մը շորս պաաերուն մեջ, մանավանդ որ հոն տեղի ունեցածը թատրերգովթյուն մը չէ այն պահուն, այլ թատրոնի սրահը փոխ տանված է իրը ո՞րկից ժողովրդային սրահ մը, ուր այս կիրակի մինչև հազար հայեր ու հայուհիներ կրցան մեկտեղիլ և ամենայն երկյուղածությամբ, խորին լուսիթյան ու հափշտակության մեջ, ունկնդրեցին Հայ հոգեոր տաղերու լավագույն երդեցողություն մը: Ասոր մեջ ո՞ւր է եկեղեցական օրենքի կամ սովորութիւն հակառակ ոտնճգություն կամ սրբապնություն: Ասոր մեջ ո՞ւր է Հայ եկեղեցվո պատկառանքը նվազեցնող կամ եկեղեցին անպատվող, կամ կրոնային հավատալիքները տկարացնող ո՞րևէ շարժում կամ ձուռում<sup>55</sup>,

երաժշտապետն էր այդ պահում, գրություն  
մը կեցեղեք ռիյուզանդիոն»-ի մեջ<sup>58</sup> «Տ.  
Կոմիտաս վարգապետի համերգին առիվա-  
խորագրին ներքե, իր սարտարութ շնորհա-  
վորությունները» հայտնելու համար. այն  
«կուռ խմբագրական»-ին մասին, որով թեր-  
թը ռիրավամբ ե փաստացի կերպով ճաղկեր  
էր ամեն անոնք, որ ծիռած գաղափարն ու-  
նեցան արգիլելու համար Տ. Կոմիտաս վար-  
դապետի, այդ երաժշտական հանճարին  
սարքած համերգին առաջին մասը, եկեղե-  
ցական երգերը»: Բարյացակամ ոգիով լցո-  
ված այս երաժիշտը իր ցանումը հայտնելե-  
հետո, որ Կոմիտասի զուզգ զասախոսու-  
թյանց պահուն մեկ հայ երաժիշտ մը միայն  
ներկա գտնված է, ի վերջո Կուլղեք ռհամ-  
բույրներ գիտնական վարգապետին տազան-  
գալից ճակտին ու չերժմագին համակրանք  
խմբագրության՝ իր շատ գեղեցիկ և շախշա-  
խիշ խմբագրականին առթիվ:

ամակրանքի բացականչություններ հասան նաև զավառեն: «Թյուզանդիոն»-ի նույն այն թիվին մեջ, ուր պոլսեցի հիշյալ հայ երաժիշտը տիրացուներու խմբակն անշատվելով, իր մեծարանքը կուղղեր Կոմիտասին, զավառական մոտակա քաղաքի մը, Ագափազարեն, ողջույն կղզկեր երաժշտագեա հայ քահանա մը: Այս քահանան, որ Սերովիք քահանա Պուռմայանն էր, երբեմն աշակերտած Զերյան Համբարձումին, և ծանոթ նաև «Սիրաք Սամվելյա ստորագրությամբ «Բյուզանդիոն»-ի մեջ իր գրած հոգվածներով, լուս կընծայեր Թաց նամակ մը առ Տ. Կոմիտաս վարդապետ», ըսելու համար, որ «Ճշմարիտ հայուն սրտին ու հոգիին խոսող աղջային-կրոնական բնատումիկ հնադրոշմ երաժշտության հայտնության մասին Կոստանդնուպոլիսու Բըտի-շանի սրահին մեջ Զեր տված արվեստական հազթանակին արձագանքը մեծ ուրախությամբ լսելով, ամենարուսն սիրով կինդակցիմ ձեզի ու կշնորհավորեմ ձեզ: ... Դուք, Տ. Կոմիտաս Հայր, պետք է գլուցաղնաբար կովիք այն բոլոր դժվարություններուն գեմ, որոնք կներկայանան շատ անգամ ձեր կարգակից-ներուն կողմեւ: Հողվածագիր քահանան հաջողության մաղթանքներով փակելի հետո բաց նամակը, հետքրության մեջ հրավեր կուղղեր Կոմիտասին՝ այցելել նաև Աղափառակ, հոն ևս տարու համար համերգ մր:

Եվ ո՞վ հեզոնություն, նույն այդ երանելիք քահանան պիտի ըլլար, որ քանի մը տարիի հետո, — ինչպես պիտի տեսնենք, — «Ակա-տամարտ»-ի և «Տաճար»-ի մեջ լույս ընծա-

66 «Բյուզանդիոն», 1910 դեկտեմբեր 7, «Պահպանողականություն թե խավարամտություն»:

56 ԱՐԴՅՈՒՆԱՆԴԻՌՈՆ, ԲԻԿ 4303

յած իր հոդվածներով, պիտի միանար ապերասան այդ կարգակիցներու խումբին ուրանալու համար ինքնուրույն հայ երաժշտության մը գոյությունը և ստվեր փոելու Կոմիտաս վարդապետի առաքելության վրա:

\* \* \*

Բարերախտություն եղավ Կոմիտասին համար, որ առաջին խսկ պահեն Պոլսու մեջ իր կողքին ունեցավ հայ մտավորականությունը, հայ մամուլի լավագույն օրգանները և երիտասարգությունը:

Գինովության իր տարիներուն, շատ զեմքեր տեսավ Պոլսու: Սուս և իրավ հերոսներու ամբողջ փաղանգ մը ողողեց միշտ զայն: Ոմանց փառքը փիրեցավ շուտ մը, բայց եղան ալ, որոնց հմայքը երկար դիմացաւ: Սմբած համբավներու կողքին եղան և ոմանք, որոնք տեղ գրավեցին զանգվածներու սրտին մեր, Սակայն ոչ մեկը կրցավ, Կոմիտասին չափ, պաշտամունքի առարկան դառնալ երիտասարգ սերունդին:

### III.—Կոմիտաս իր «քերթենքելե»-ներուն մեջ

Կոմիտաս կրցավ արագ սկսիլ իր առաքելությունը: Ան բախտն ունեցավ պատրաստ խումբ մը գտնելու, — Ղալաթիո երգչախումբը, որ բաղկացած էր առավելապես Կեղրոնականի հին ու նոր սաներեն և բազմաթիվ ուրիշ երգիչները, որոնք մաս կկազմեին խումբին մեծ մասամբ եռաձայնի առաջին օրերին: Զիլինկիրյանին, Սանասին ու Սինայանին քրախնքը ի զուր չէր անցեր. ան մարզված խումբ մը կհանձներ Կոմիտասին, որպեսզի կորիզը դարձնե իր ծրագրած մեծ երգչախումբին: Ղալաթիո սույն երգչախումբը համեստ ղեկավար մը ուներ այդ պահուն հանձին Արաաշես Ապաճյանի. ան, հիացող մը Կոմիտասի անձին ու գործին, խսկույն մտավ անոր հովանիին տակ. ան շուտով մաս պիտի կազմեր ինք ևս այն վեցյակին, որ Կոմիտասի Պոլսու ձեռնասուններուն անդրանիկ կորիզը պիտի դառնալ և որ հնդյակի պիտի վերածվեր սակայն շուտով, Ապաճյան մահացած ըլլալով պատերազմի ընթացքին: Սույն հնդյակն էր, որ հեաագային հավաքական ճիգ մը պիտի փորձեր Շնոմիտայան հինգ սաներս անունին ներքե, մեծ տարտղնումեն հետո ամեն մեկը առանձինն շարունակելու համար հայ Սփյուռքին մեջ դործը, զոր Կոմիտաս կտակ էր ըրած իրենց:

Կոմիտաս կարիք ուներ սակայն երդիշներու ավելի ստվար թիվի մը. առաջին հերթին հասյան վարժարանը օգնության հասավ, արամագրելով իրեն ոչ միայն դեռատի

ձայներ մանր տզոցմե, այլև իր ուսուցչուհիներն ու սանուհիները, որոնք իր իգական ձայներուն կորիզն եղան, ինչպես որ էսայանը, Կեդրոնականին հետ, կեդրոնը պիտի գառնար իր փորձերուն:

Տարրեր եկան ուրիշ թաղերե ալ, ինչպես Սկյուղարեն, ուր Պերպերյան վարժարանը կար, մեկը Պոլսու հոգեկան այն օճախներեն, ուր բացառիկ գուրգուրանք գտավ Կոմիտաս, մանավանդ երբ Փարիզեն զարձավ, իր հորը ստեղծած կրթական հարկը վարելու համար, Շահան Պերպերյան: Շահան, իր եղբոր՝ Օննիկին պես, երաժշտության և հետեւ էր, հետադային ամենեն չերմ համակիրը զառնալու համար Կոմիտասին և անոր դորժին:

Դյուրին չէր այսպիսի խայտարղետ խումբ մը մարզել ու վարել. Կոմիտասի մոգական ուժը պետք էր հայ երգին ու իր երանդներուն ընտանեցնելու համար սույն երեք հարցուր հոգին, որոնց մեջ ստվար թիվ մը կկազմեին ընոտա զփիտցողները: Կոմիտաս պետք է կախարդած ըլլար զանոնք, մարզելու համար այդքան արագ, քանի մը շաբաթեն զանոնք հանելու համար համերգի բեմը:

Նման հրաշք մը Կոմիտաս միայն կրնար գործել, ու ան այդ հրաշքը կպարտի այն մեծ հմայքին, որով կրցեր էր իրեն կապել իր «քերթենքելե»-ները: Կոմիտաս այգպես կկոչեր իր խումբին տղաքը, մանշ թե աղջիկ, ինչպես որ «զուտնաշխ» մակդիրը կուտար իր տարեց ծանոթներուն, որոնք «փազարշական» ածականով մը ափազուելու մուլթենեն տարված այս յուրօրինակ մարգը:

Ու իր «քերթենքելե»-ները երրեք ամոթով շգեցին զայն:

Մարդ չի կրնար առանց հովումի կարդալ հուզերը, զորս իր «քերթենքելե»-ները գրեցին անոր մեռնելեն հետու:

«Վարդապետը հմայած էր այդ բազմությունը, —կար տիկին Տիրուհի Միսակյան, — իր ձեռքերու պարզ շարժումներով և իր դեմքին հարածուն և մշտակիփոխ արտահայտություններով, համաձայն երգին բնույթին, շարժում և արահայտություն, որոնցց մեծ միմիայն կախում ուներ հաջողությունը մեր երգածին: Այն հուժկու, զոր ու մարտական թափը, գոր կստանար «Միփանաքարեց»-ը, իր գեմքին խազերը և ձեռքին շարժումներն էին, որ կներշնչեին երգիշներու, ինչպես այն զվարթ, զինովի երգը՝ ուղարի թմպըրըլալա՝ հա՛ հա՛ հա՛ ո՞ն, որ կասկած կներշնչեր մեզի, թե վարդապետը գինով է անպատճառութ:

Գրիգոր Ճոլորյան կպատմե.

«Երբ խումբը վարելու համար կրարձրանար ամբիոնին վրա, ամենքս մեկ խորին լուսավորական մեջ աշք ու ականջ կտրած, տեսակ մը ելեկտրականացած վիճակով, բերնեն կախված կմնայինք. այնքան մեծ ու փոքր ներգործություն մը կատարեր մեր պատանի հոգիներուն վրա Զգիտամ ինչ մոդական կարողություն մրն էր, որ Կոմիտաս վարդապետի հանդեպ վախով խառն սեր և հարգանք կպարապեր մեզի. Ու անհամբեր երգեցողության պահերուն կսպասեինք:

... Թայց վայ էր եկեր այն անդամին, որ երգելու ատեն սխալ ձայն հաներ կամ ուշագրությունը ուրիշ տեղ կեցրոնացները Վարդապետին ականջն ու աշքերը այնքան սուր ու այնքան ճշգրիտ էին, որ երեք հարյուր հոգինոց խումբին մեջեն վայրկյանին կնշմարեր ու կմատնանշեր զայն, առանց վարանելու հրապարակավ զինքը հանդիմանելով, կես լուրջ կես կտառակ իսկ երբ հավաքական սխալ երգեցողություն մը նկատեր, իր սիրական մակդիրը կփակցներ մեր ճակատին, սեղմված ակռաներուն մեջեն մեզ կանչելով քերթենքելեները և անզուսպ խնդով մեզի<sup>58</sup>:

Այսպես էր Կոմիտաս իր քերթենքելեներուն մեջ Հաճախ տեսած ենք զինք փորձերու պահուն լուրջ և երբեմն շափեն ավելի խիստ, քազցր կգառնար մեկեն, և կատակով մը, քառախալով մը կթուցներ խումբին պրկված շիֆերը, հետո դարձյալ հոնքերը կնճելու և շափ տալու համար խոժուու ու խստարիթ: Ու փորձը երբ կմննար, կրկին շենշող ընկերոջ մը կփոխվեր, ու ամեն մեկուն համար ուներ սրամիտ բառ մը: Հետո սանգուլըներեն կիշներ արագ-արագ, և շտապով կմեկներ տուն, լծվելու համար տարրեր իր աշխատանքներուն:

Շատեր սիրված են իրենց սաներեն, բայց ոչ մեկ ատեն այսքան պաշտամունքի չել փոխված սեր մը:

#### IV.—Հոնիականի ափերուն վրա

Պոլսու իր առաջին համերգն իսկ բացավ Կոմիտասի նոր ճամբան, Անոնք որ այդ օրերուն զայն ճանցան, գիտեն, թե ինչպես ոգեսորված էր ան այդ պահուն: Իր առաջին դասախոսությամբ գծեր էր ուղին, ուրկե պետք է ընթանար հայ երգը. բխած գեղջուկի սրտեն, պետք է ուռճանար տակավ այդ երգը, մալվեր, մշակվեր, փրկվեր իր խորթ գծերեն, պատշաճեր նոր օրերու պահանջըներուն Թոթափեր Արևելքն ու իր մեղկությունը, բայց պահեր անոր դունագեղ,

արեւու ոգին. իր թախծութենեն վտարեր հուսահատությունը, ու ժպիտ գներ իր արցունքին մեջ. իր կարուտի եղանակներուն մեջ հույս կաթեցներ, և իր մորմոքներուն մեջ լավատեսություն: Այսպես մեզ գծեր էր ճամբան, ուրկե պետք է բալեր հայ երգը, այսինքն իր իսկ ճամբան:

Իր անգրանիկ համերգով ան զղացեր էր, որ ամուր է իր ոտքին տակ հողը, ուր կրնար ալլես անհողդողդ քալել հայ երգին հետ մեկտեղ: Խութերը, որոնց հանդիպեր էր իր առաջին քայլերուն, կրնար այլես անգուսնել ու արհամարհել. ան իր ոտքին տակ որպես կովան ուներ բովանդակ երիտասարդություն մը, որ արդեն զինք հասկցած էր ու կուզեր քալել մեծ վարպետին հետո: Բոլոր անոնք, որ երբեմն Զալաթիո երգախումբն ստեղծեր էին, իր շուրջն էին հիմա, ու այլես իրենց հագորդ չեր կրնար տալ սոսկական երգը, որով տարված էին ցարդ. անոնք կուզեին հայ երգը:

Այդ երիտասարդությունը անգամ մը ևս երիտասարդացած էր, նույնիսկ անոնք, որ արգեն սպիտակ մաղեր ունեին Ստեփան Ակայանին պես, և բռնկած նոր իանգավառությամբ մը: Գտած իրենց առաջնորդը, կուզեին իրենց ուրույն կազմակերպությունն ստեղծել անոր հովանիին, անոր շունչին տակ: Առաջին համերգին իսկ օրերուն, արդեն անոնք վճռած էին դուրս գալ եկեղեցական երգախումբի մը անձուկ սահմանեն, և մանել գործունեության նոր դաշտը, զոր Կոմիտաս իրենց բանալ կիսուտանար:

Ենք, որ իբր բաղաձայն բաժնվեր էինք դպրոցեն, հպարտությամբ կտեսնեինք, որ Կեդրոնականի մեր երբեմնի գպրոցակիցներն են, որ այս նոր ոգեսորության կորիզ կդառնան, ինչպես ատենին եղեր էին առաջին եռամային: Անոնցմ կիմանայինք, որ արդեն փորձերը կըլլան կազմակերպություն մը ստեղծելու Կոմիտասի կողքին, և անոր մեջ համախմբելու բոլոր անոնք, որ կսիրեին հայ երգը: Երեկ աշակերտներ էին եղեր եռամայինին կորիզը, այսօր Կոմիտասի շուրջ համալսարանական ուսանողներ էին արգեն բոլորված, շատերը իրավարանականեն:

Ճիշտ այդ օրերուն կամիր պահ մը Կոմիտասը խլեց: Պոլսու առաջին համերգն քանի մը օր հետո Կոմիտաս արգեն կամիր էր: Զայն կանչեր էին, որպեսզի խումբ կազմե և համերգ տա հոն ալ:

Զմյուռնիան իր երբեմնի փառքը շուներ, բայց այնուամենայնիվ հայ մտավոր երկրորդ մեծ կեդրոնն էր Պոլսեն հետո, և փորձեց ամոթով շմնալ: Իր համեստ ուժերով և հնարավորություններով եթե չեր կրնար

մրցիլ մայրաքաղաքին հետ երաժշտական հայողության մը մեջ, գոնե ուզեց մրցման հանել իր խանդավառությունը:

Կոմիտաս չէր կրնար տեղի շտալ հզմիրեն իրեն ուղղված դիմումներուն, թեև իր ներկայությունը անհրաժեշտ էր նաև Պոլիս, ձև և կերպարանք տալու համար հետզհետե աճող ոգեռության երիասարդության մեջ, և անոր շուրջը համախմբելու համար արվեստի բարեկամներ ալ դուրսեն:

Կոմիտաս Պոլսեն կմեկներ առանց կարենալ ծրադիրը պատրաստելու նման ընկերակցության մը, մինչև ըոլորը անհամբեր էին զայն ստեղծել ոգեռության առաջին իսկ թափին մեջ:

Ստեփան Ակայան, ծանոթ մանրանկարիչը, որ երաժշտական հակումներ ուներ և մինչև իսկ տեսնորի հավակնություն իր սպիտակ մազերուն մեջ ալ, և որ, ինչպես ատենին Զբիկնիրյանի, հիմա ալ Կոմիտասի կողքին էր իր անսպառ խանդավառությամբը, իր նամակներով մինչև հզմիր հալածեց վարպետը, որպեսզի աճապարե կտնոնադրություն խմբագրել իրենց:

Ահա Կոմիտասի պատասխանը.

«1910 27/ԺԲ, Զմյուռնիա

Ազնվաշուր Ստեփան էֆենդի Ակայան.

Երեկ ստացա ձեր գիրը, այսօր պատասխանում եմ: Անմիջապես սկսա կազմել միության հիմնական կանոնադրությունն ու ծրագիրը. որովհետև դպրին գործ չէ, ուստի և ափահափ շեմ կարող կազմել, մի քանի օր ձեր համրերությունը սնուցեք: Եվ որպեսզի ժամանակ վաստակեք, լավագույն է արծարել ընկերությանս պետք և դրամը հայթայթելու միշտոցներ որոնել:

Շնորհավորում եմ անվանդ տոնը՝ կեր, արք և ուրախ լեր:

Բարեկ մեր տղաներուն՝ որուն հանդիպես, օձիքներից բռնե, կեցուր ու հազորդ՝ ողջույն քերթենքելի:

Ես լավ եմ. բայց գործիս համար այնքան էլ գոն չեմ. եարտոն ու բասս ձայներ խիստ նվազ են. եթե 50—60 հոգինոց խումբ կազմվի՝ մեծ բան է:

Հազորդելիք բաներ կան, բայց առայժմ լուր լերուք:

Բարեկ Հարենց և Աշճյան էֆենդիներին, Վերցինին գրելիքներ ունեմ, սակայն ընկերությանս կանոնադիրը լրացնելեն հետո. որ համրերսց իսպանաց կերիցէ:

Ողջունիվ՝ Կոմիտաս վ.»<sup>59</sup>

<sup>59</sup> Թ. Ազատյան, «Կոմիտաս վարդապետ», Կ. Պոլիս, 1931, էջ 114—115.

Մինչ այս մինչ այն, Կոմիտաս հզմիրի իր համերգին կպատրաստվեր:

Համերգին առաջ, Կոմիտաս Զմյուռնիային կգրեր Փարիզ, Մարգարիտ Բաբայանին.

«... Փախչելով հայրենիքից, հինգ համերգ կազմակերպեցի Այս նամակն էլ գրում եմ Զմյուռնիայից, ուր 6-րդը պատրաստելու վրա եմ: Հետո պիտի դառնամ Կոստանդնուպոլիս և տամ 7-րդը հօգուտ Ազգային հիվանդանոցի, ապա պիտի մեկնիմ Աղափաղը՝ 8-րդը տալու. եթե ուրիշ տեղից հրավեր չստանամ, ուղղակի Վիեննայի վրայով Փարիզ պիտի գամ. բայց երբ, չեմ իմանում»<sup>60</sup>:

Կոմիտաս հզմիրի մեջ ևս դասախոսությամբ մը ներկայացավ առաջին անգամ և հայ երաժշտության ինքնուրույն գեղեցկությունը պանծացուց, զայն ներկայացնելով իբրև շքեզ գոհարներն մին հայ ժողովուրդի հոգեկան զանձին: Իր այս դասախոսության մեջ է, որ Կոմիտաս ըրած է խորապես նշանակալից այն խոսքը, թե «քաղաքակրթությունը տգետ ժողովուրդներու մեջ քաղաքաբարեաց»:

Փոխանակ 50—60 երգիսի, ինչպես կասկածեր էր Կոմիտաս, 135 երկսեռ երիտասարդներ խմբվեցան իսկույն իր շուրջը, որոնք քանի մը շաբաթեն երդիշի պիտի փոխակերպվեին անոր մոգական շունչին տակ, և, ինչպես կգրեր Սուրբն Պարթևան խումբին փորձերուն ներկա ըլլակեն հետո, «Կոմիտաս վարդապետ, շնորհիվ երաժշտական իր ներհուն մեթոգին, հաջողած է, կարճ ժամանակի մեջ, այնպես մը մարզել իր երկսեռ աշակերտները, որ ա'լ կարելի դարձաւ է իրեն տիրական համերգավարի իր մատներվագ լարել, մազնիսացնել գանոնք, և իր ուղած ներգաղնակություններն հանել անոնց հոժ շարբերենց»<sup>61</sup>:

Համերգը, որ 1911 փետրվար 13-ին տեղի ունեցավ Սպորտինգի սրահին մեջ, կախարդեց նաև հզմիրը և զմայլեցուց օաարները, որոնք հոն ներկա էին: Ու ավելցցենք, որ հայ հոգեոր դասը իր Պոլսու կարգակիցներն ավելի լայնախորհ եղավ: Համերգին ներկա եղան առաջնորդ ինճեյան վարդապետը, Հակոբ Աշոտ Ապակոպոս և քահանաները: Իզմիր, այս կետին մեջ, մայրաքաղաքը կհեռներ...»:

<sup>59</sup> «Եղակության, Փարիզ, 1935, էջ 163.

<sup>60</sup> «Դաշինքներ», հզմիր, 1911, հունվար 26:

## Գ. ՀԱՅՈԲՅԱՆ

(Անդամ Դերազույն Հոգևոր Խորհրդի)

## Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ղ Ա \*

Ուշագրավ է Գրիգոր Տղայի «Ասացից բան  
մի յայտնի» բառերով սկսվող մանկավար-  
ժական ոտանակորը։ Այս երկը մեր միջնա-  
դարյան բանաստեղծության մեջ առաջին  
մեծ ոտանակորն է, որտեղ խարազանվում է  
չար լեզուն՝ բամբասանքը, զրախոսությունը,  
շատափոսությունը և խոսվում է կրոնական  
և մարդասիրական դաղափարների մասին։

Այս ոտանակոր-խրատը չորինելիս, Գրի-  
գոր Տղան օգտվել է ժողովրդական բառ ու  
բանից, իմաստուն, փորձով սառւզված ա-  
ռածներից ու դարձվածքներից։ Զար լեզուն  
ամենից առաջ վնասակար է իրեն՝ խոսողի  
և ապա թունավոր՝ ուրիշների համար։

«Քանդի այր երկարալեզու քարի նման է»  
Ապա թէ ոք հարու նովաւ իժ և կարիճ է.  
Մի՛ քարշիր զքո լեզուդ, որ քեզ  
յաւգուտ լ...»<sup>126</sup>։

Բարոյակրթական և ընկերասիրական  
խրատների գաղափարները ընդհանրացնե-  
լով ու խորացնելով, հեղինակը սրանք  
հասցնում է մարդասիրության ասահճանին։  
Մարդը ոչ միայն լեզվով, նաև սրտով ու գոր-  
ծով միշտ և անսահմանորեն պետք է բար-  
յացակամ և բարի լինի։

Լեզվի կապակցությամբ տրված խրատնե-  
րը չեն սահմանափակվում միայն նրանով,  
որ մարդը մինի զրախոս կամ շարախոս. սա  
խրատների միայն մի կողմն է. լեզուն զապե-  
լով հանդերձ պետք է զապել և լսողությունը.  
որքան մարդու լեզուն, բերանը, այնքան էլ  
կարող է մեղանչել նրա լսողությունը՝ ա-  
կանչը։

«Խից զքո ականջդ և ի սպանող ձայնէ,  
Մի՛ լսել բան ապիկար զսիրելոց քումմէ։

\* Եարունակված ուշմիածինս ամսագրի 1964 թվա-  
կանի № Ժ-ից, 1965 թվականի № Ա-ից, Ե-Զ-  
Է-ից, Ը-Թ-ից և Ժ-ից։

<sup>126</sup> Զեռ. № 5707, էջ 266։

Զի լսել բամբասանաց բան քաղցրագոյն է,  
Բայց յետոյ զառնայ լեզի և  
յանաւգուտ է<sup>127</sup>։  
Զարախոսությունների և բամբասանքների  
վատ կողմերից մեկն էլ այն է, — բացատրում  
է հեղինակը, — որ լեզվի, խոսքի հասցրած  
վերը թե՝ անբուժելի է, և թե՝ անմոռաց,  
Մարմնական վերքը կարելի է բուժել, բայց  
լեզվի՝ հոգուն պատճառած վերը, ոչ միայն  
ավելի խորն է ու ծանր, այլև անբուժելի է։  
Զարագործի մահվամբ նրա գործունեությու-  
նը, չար արարքները վերջանում են, բայց  
շարախոսի հասցրած վերքը նրա մահից հե-  
տո էլ հարատեսում է։

«Խոց որ ի տիգէ, փոյթ ողջանալ կարէ,  
Բայց խոց որ ի լեզուէ, միշտ նորոգել գտէ-  
Ամենայն շարիք շարեաց մինչև ցմահն իցէ։  
Զար լեզուի խոցն և յետ մահու կտրէ»<sup>128</sup>։

Պակաս հեաաքրքրական չէ Գրիգոր Տղայի  
«Յորժամ զիս ինձէն գտայ» մյուս մեծ ոտա-  
նակորը, եթե «Ասացից բան մի» ոտանա-  
կորում հեղինակը հանդես է զալիս միայն  
ուսուցողի, խրատողի գերում, ապա այստեղ  
արգեն երևում են բանաստեղծի ոչ միայն  
մտքերն ու գաղափարները, այլև նրա զգա-  
ցուանները և ներքին աշխարհը։ Այս գործը  
ձեկի անսակետից էլ կարենոր է նրանով, որ  
հեղինակը ինքն իր հետ է խոսում, խորհրդա-  
ծում, կշռադատում, զգում և ապրում։

«Յորժամ զիս ինձէն գտայ,  
Ես ընդ իս սակաւ խօսեցայ,  
Ըզմիտս իմ առ իս բերի,  
Զայս գերիս, որ յիս կայ մնայ»<sup>129</sup>։  
Եւ ապա սկսվում է ինքնախոսությունը,  
Նենգավոր շարը ամեն վայրկյան կրնկակոխ

<sup>127</sup> Անդ.

<sup>128</sup> Անդ.

<sup>129</sup> Անդ, էջ 267։

հետևում է բանաստեղծին, որը զրկված է հանգստությունից, հոդու անդորրությունից:

Բանաստեղծը բողոքում է, որ բացի շարից, նենգավոր մարդկանցով էլ է ջրչապատված. մարդիկ, որոնք ամեն ժամ կարող են անմեղներին զայթակղեցնել և նետել մեղքի օվկիանը, դարձնել հավիտենական որոցոյն ճարակ։ Քանի զնում, նրա հոգեկան աշխարհը ավելի սաստիկ է ալեկոծվում և հասնում ողբերգության, ինչպես նարեկացին իր Մատյանում և Շնորհալին «Աշխարհ ամենայն» երգում։

Բուռն են բբանաստեղծի հույզերը, «զի անհնարին ցաւօք է բռնված։ Նա համոզված է, որ զգվար թե աշխարհում իրեն պես մեղապարտ, հոգեկան ծանր ապրումներ ունեցող մի ուրիշը լինի. «մեղացն իմ շարեաց պարտեցայ։»

Բանաստեղծը, իրեն համարելով աշխարհի ամենամեղավոր մարդը, զնում է, որ ինքը կտրված է բանական կյանքից։ Ցավով է նշում, որ մի ժամանակ իրեն սիրող բոլոր մարդիկ արդեն մոռացել և խորթացել են. Հետևարար, ինքն արդեն կորած է աշխարհի համար։

«Զկա սիրելի բնաւ,  
Բարեկամ ումեթ չերևալ...»<sup>130</sup>,

Իսկ ի՞նչ պետք է անի այդ մեղավոր, մոռացված մենակ մարդը՝ մեղսալի աշխարհում։ Առայժմ նա դանում է միայն հետևյալ ելքը և զարձյալ դիմելով ինքն իրեն, ասում է.

«Գնա դու ծանակթ լիցիս,  
Աղքատաց դասուն հետևեալ,  
Զի Տեառն օրհնութեամբ ձայնին,  
Ընդ նոսին լիցիս կոչեցեալ»<sup>131</sup>,

Մեղքի ու զջման զգացումներից պակաս ծանր չէ ապերախտության և ամոթի զգացումը։ Այս բոլորը իրար հետ միացած՝ ավելի փոփորկալի են դարձնում նրա ապրումները.

«Եւ ինձ սկազգեստ մեղօք,  
Դատապարտ գլխով կորանալ,  
Ահա մեծ ամափ է ինձ,  
Ցաւ և վեր գերոյս գերանալ»<sup>132</sup>,

Սա արդեն բանաստեղծի ողբերգության վերջին, ամենարարձր աստիճանն է։ Այստեղ արդեն մնում է ընտրություն անել՝ կամ հուսահատ կործանվել մեղաց հորձանքներում և կամ նարեկացու պես րոնել հույսի լարը, աղերսել ներողամիտ Հորը՝ փրկության ափը դուրս գալու համար։

<sup>130</sup> Զեռ. № 5707, էջ 267.

<sup>131</sup> Անդ.

<sup>132</sup> Անդ.

Գրիգոր Տղան իր ողբի ձայնը հասցնում է երկինք, դիմում լեռներին ու ծովերին. ծանր ու խոր են նրա հոգեկան ցավերը, այնուամենայնիվ նա աստիճանարար ունի իրեն գտնում։ Է և ծեռքը մեկնում դեպի հույսը՝ միակ հենարանը, նա ուզում է ապրել և վերածնվել Ահա դրա համար էլ այս անգամ նա դիմում է ողջ ընությանը, բանական և անքան արարածներին և աղերսում։

«Գթացէր յիս, մոլորեցայ,  
Կենաց իմ պատճառ գտէք...

Ալրիմ, խորովիմ ես յիս,

Կենաց դեղ՝ խնդրեմ թէ կենամ»<sup>133</sup>,

Եւ նա համոզված է, որ զզումով և ապաշխարությամբ իր հույսերը պիտի արդարանան և ինքը շպիտի լոկի երկնի շնորհներից։

«Ի ժամ ընկերացն իմոց,

Պահով լուսոյն խրախանալ

Եւ զգեստ փեսայի զգենով

Ընդ Աստուած անդին միանալ»<sup>134</sup>,

Գրիգոր Տղայի շափածոյի մեջ այս ոտանավորը թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ ավելի արժեքավոր է։ Ինքնախոսության և ինքներգության այս ձեր նախատիպ հանդիսացավ միջնադարյան մեր շատ տաղերգուների։ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների, Աղթամարցու, Թլկուրանցու և մյուսների համար։



Գրիգոր Տղայի շափածոյի մեջ, «Ողբ վասն առմանն Երուսաղէմի» քերթվածից հետո, իր ծավալով ու որակով երկրորդ տեղն է բռնում նրա «Ճիսու» Փրիստոս Որդի և Բան» Կրոնա-բարոյակրթական բանաստեղծությունը, գրված ներսես Շնորհալու «Ճիսու» Որդիս գործի հետեղությամբ ու ձևով։ Տղայի քերթվածն էլ սկսվում է աշխարհի ստեղծագործությունից։ Հեղինակը պատմում է Փրիստոսի մարդեղությունը, քրիստոնեական վարդապետությունը աւարածելու համար մարտիրոսների գործունեությունը և ավարաում վերջին դատաստանով։ Երկու գրվածքներն էլ սկզբից սկսվում են հետևյալ ձևով.

### Շնորհալի

«Ճիսու» Որդի Հօր Միածին,  
Եւ ճառագայթ կերպարանին,  
Մնունդ անճառ սկզբնատրպին  
Անհատարար քում ծնողին»<sup>135</sup>,

<sup>133</sup> Անդ.

<sup>134</sup> Անդ.

<sup>135</sup> «Գիրք որ կոչ Յիսուս Որդի», Կ. Պոլիս, 1824 թ., էջ 3.

### Գրիգոր Տղա

«Յիսուս Քրիստոս Որդի և Բան,  
Հօր ճառագայթ անըսկգրան,  
Բազով և կար և կերպարան,  
Եւ հրաշալի նորա սահման»<sup>136</sup>,

Գրիգոր Տղայի այս գործի բովանդակությունը, տաղաշափական ձևերը և տեղ-տեղ էլ հանդերք զգալի շափով նման են ոչիսուս Որդիս ողբերգությանը։ Սրանք տարրերկում են հիմնականում կառուցվածքով և ծավալով։ Շնորհալու «Յիսուս Որդի»-ն բաղկացած է երկու հազար, իսկ սա՝ երեք հարյուր տասնեւեց երկուող տներից։

Շնորհալու պոեմն ընդգրկում է գարերի պատմությունը, մարդկության անցյալը, ներկան և ապագան, իսկ Գրիգոր Տղայինը՝ զիխավորապես նոր Կտակարանի բովանդակությունը՝ մի թոռցիկ ակնարկով Աղամ նախահոր գործերի վրա։

Հստ պոեմի, Ազամը մարդկային ցեղի հանդեպ ճակատագրական սխալ է կատարել և ամբողջ կյանքը գտապարտել տանշանքի ու մահվան։ Այս ծանր դրությունից ագատվելու համար, տարրեր ժամանակներում աշխարհ են զալիս բաղմաթիվ մարգարեներ, որոնք, ըստ բանաստեղծի, գարեր առաջ նախապարաստական, գաղափարական աշխատանք են կատարում քրիստոնեական վարդապետության համար։

Այնուհեաև նկարագրվում է Փրկչի ծնունդը և բացատրվում Հիսուսի խաչելության նշանակությունը՝ մահը, թաղումը և հարությունը։ Հարության նկարագրության մեջ տրվում է նաև, թե ինչպես մեղքը պարտվում է վերջնականապես և խորտակվում է սանդարամետը։ Մարդկության վզին դարերով ծանրացած Աղամի մեղքը Փրկիչը լվանում, մաքրում է իր արյամբ և վերածնվում է աշխարհը։

Ընորոգապէս աշխարհ շինի,

Որով Ասաուած ընդ մեզ խառնի»<sup>137</sup>։

Ապա բանասաեղծը խոսում է, թե ինչպես առայլաների բերանով Քրիստոսը տալիս է ռմարդկանց հրաւէր բարին, որտեսզի նրանք այլևս չկրկնեն նախահոր ճակատագրական սխալը։

Քերթվածի առաջին մասը այսպես էլ վերջանում է։ Այնուհետև բանասաեղծը իր խոսքը դարձնում է զեպի հայ իրականության անցյալը, հայրենասիրական մեծարանքի խոսքը է ասում մեր քերթողահայը Մովսես Խորենացու մասին, որը գրել է շնորհալի հայ ազգի ծննդաբանությունն ու պատմությունը։

«Մի է և այն Սուրբ Հայկապնի,  
Մովսէս քերթող Խորենացի,  
Սուրբ և ընտրեալ և հրաշալի,  
Ծշմարտախօս իմաստ բանի»<sup>138</sup>,

Հստ պոեմի, մարգարեները գուշակել, բաց են արել գարերի զաղունիքներն ու անիմանալին, իրենց մտքի աշբերով զարերի վրայից թուշել զեպի ապագան։ Սակայն այլ տեսակ լուսավոր միտք ու հոգի է ունեցել Խորենացին, Եթե մարգարեները մտքով թոշել են առաջ, նախատեսել ապագան, ապա Խորենացին, իր պայծառ մտքով զեպի ետ էլ է զնացել, և լուսավորել մեր աղդի անցյալը։ Ժամանակը նրան էլ ծածկած է պահած է պահել իր անթափանց զգարշով։ Նա բացել է պատմության զաղտնարանի դռները, համարձակ ներս մտել, զտել է մարդկության կյանքի հողեկան գանձերը, լույս աշխարհ հանել այն և նվիրել իր ժողովրդին ու աշխարհին։

«Ճոր և տեսեալ աշօթ լինի,

Գրրով ցուցէ ամենայնի.

Համանման մարգարէի,

Ջծածկեալ անասեսն առնի յայտնի»<sup>139</sup>։

Եթե մինչև Մովսես Խորենացու մասին խոսելը Գրիգոր Տղայի այս պոեմը ընթանում էր «Յիսուս Որդի» երկի հոնով, ապա այս տեղից սկսած մտնում է աշխարհիկ, պատմական իրադարձությունների և նկարագրությունների բնագավառը և ընթանում Շնորհալու «Վկիպասանութիւն» պատմական պոեմի ճամբերով ու ոգով։

Շնորհալու վկիպասանության մեջ հայոց պատմությունը մի ազգապատում է՝ սկսած Հայկ Նահապետից մինչև ժթ դարը, դրված շերմ հայրենասիրությամբ։ Իսկ Տղայի մոտ թեև պաամական մասը շատ քիչ է, միայն Մովսես Խորենացու մասին է խոսվում, սակայն այս մի գրվագն էլ բավական է եղել հեղինակի համար, որպեսզի քերթողահոր անձի և գործերի զերմ նկարագրության առնչությամբ կարողանար դրսենորել իր հայրենասիրությունը։ Այստեղ Խորենացին առանձնապես մեծարվում է նաև նրա համար, որ նա, սկսած նախահայը Աղամից, տալիս է նաև հայ ազգի ծննդաբանությունը։

Սակայն պոեմում Մովսես Խորենացին իր աղդի պատմության և ազգարանության սոսկ նկարագրող չէ նա վեր է հանում և գնահատում հայ ժողովրդի աշխարհիկ, հոգեորական և պետական նշանավոր գործիշերի լավ ու վատ գործերը։ Նա խիստ քննադա-

<sup>136</sup> Զեռ. № 5707, էլ 259։

<sup>137</sup> Անդ.

<sup>138</sup> Անդ, էլ 280։

<sup>139</sup> Անդ.

տում է վատերին, անարիներին և անիմաստասերներին։ Գովասանքի խոսքեր է ասում արիների, իմաստասեր, քաջ և հայրենասեր գործիչների հասցեին։ Եվ որ կարեռն է, — ասում է բանաստեղծը! — Խորենացու դիրքը երկար դարեր, բազմաթիվ սերունդներ է զաստիարակել՝ արիության և հայրենասիրության ոգով։ Ըստ բանասահղթի, այդ զիրքին է եղել ԺԲ դարի մեր ազգային լավ ու վատ գործերի շափանիշը։

«Եւ որ շարեաց գործ և բարի,  
Սովաւ այն մեղ հրատարակի.  
Մինչև ի վերջ եկեալ տոհմի  
Այն թարմատար ազգըն հոռի»<sup>140</sup>։

Գրիգոր Տղան այս պոեմում Խորենացու պես զայրույթով է գրում այն նեղմիտ, շահասեր, քաղաքականապես կարճատես տոհմերի և իշխանների մասին, որոնք իրենց անձնական, ժառանդական շահն ու իրավունքներն ավելի բարձր են համարում, քան թե ազգի հավատը և հայրենիքի շահերը։

«Որք մոռացան ըգհայրենին,  
Աստուածադիր րան հրամանի.  
Դարձան յինքեանս և առ քաղցի,  
Գիշաաելով զմիս բազկի.  
Եղբայր եղբաւր լեալ թշնամի,  
Եւ հարազատն ազգատոհմի»<sup>141</sup>։

Փողովրդի մեջ բարոյականություն, ազնը վություն և մարդասիրություն տարածելու, և ընկերական ու կենցաղային արատներից հեռու պահելու նպատակով՝ Գրիգոր Տղան քննադատում է ինչպես մի շարք հոգեռականների, այնպես էլ պաշտոնյաների թերությունները, բացասական կողմերը։

Պոեմից երեսում է, որ պաշտոնյաները թագավոր, իշխան, պետ և դատավոր, իրենց աստիճանին ու վիճակին համեմատ, տարված են շահամոլությամբ։ Նրանք փոխանակ ժողովրդին ծառայելու, նրա պետքերն ու կարիքները հոգալու, վարում են ցոփ կանք և իսպառ հեռու են մարդկային առաքինություններից։

Հասարակական կյանքում եղած արատների ու անարդարության գեմ այնքան է զայրացած բանաստեղծ կաթողիկոսը, որ դժվարանում է հարմար րառեր գանելու այդ բացասական կողմերն ու երեսվածները լրիվ բնորոշելու համար։

«Եւ ու ունիմ իսկ բան յարմար,  
Ճառեալ զտեսեալ պատմագրաբար»<sup>142</sup>։

<sup>140</sup> Զեռ. Թ 5707, էջ 260.

<sup>141</sup> Անդ.

<sup>142</sup> Անդ, էջ 261։

Պոեմում որբան դառնությամբ են նկարագրված դարաշրջանի արատավոր կողմերը, նույնքան էլ սիրով ու համակրանքով է խոսքում բարի, իրենց կոշման արժանի, ազնիվ, առաքինի և տաղանդավոր մարդկանց մասին։

«Որք յարուեստից խորս հասան,  
Եւ հանձարիւք բազմաւք լցան։

Նաև յարուեստը զանազան,

ի ձեռագործս խոհական

Ցոյժ գերազոյն յայն զովեցան»<sup>143</sup>։

Ճիշտ և իրական գծերով են տրված ժամանակի հասարակական կյանքում եղած երեվույթները։ Բանաստեղծը կարողացել է վերհանել այդ շրջանի կյանքի սավերուտ կողմերը՝ լավ դիտողականությամբ։

Արիստակես կաստիվերտցին, ներսես Ծնորհալին և Գրիգոր Տղան, այս երեք հայրենասերներն էլ, թեև իրենց ողբերի ու գործերի մեջ ճիշտ դիտում են հասարակության արատավոր կողմերը, նկարագրում են այն ճշմարտացի, սակայն երերն էլ դրանց պատճառները համարում են մեզքը։

Բանաստեղծը համոզված է, որ Փեկշի մարդեղության խորհուրդը իր նման մեղավորներին փրկելն է, օթե մաքսավորը, փարիսեցին, ավաղակն ու այլ մեղավորները նոր Կտակարանում խոր կերպով զզալով՝ իրենց հույսերը կապեցին Հիսուսի հետ և փրկվեցին, ապա ինքը և իր ժամանակի մեղավորները ևս կփրկվեն՝ եթե հավատան որ,

«Քանզի ի քէն նախ գոյացաք,  
Իմաստութեամբ քո վարժեցաք։

Լոյս ըղփառաց քո ըղգեցաք,


Հոգով ի քէն կենդանացաք»<sup>144</sup>։

Պոեմի այն մասը, ուր հասարակական աղետները բացատրվում են մեղքով, շաղկապված է զավանաբանական մոտիվների հետ, որոնք Գրիգոր Տղայի գործերում նկատելի տեղ են գրավում։ Այս հատվածում նա շարագրել է Հայ եկեղեցու ուղղափառ դավանանքը և բացասել երկու քնության բանաձը։

Դավանաբանական տեսակետից շատ նմանություն կա Գրիգոր Տղայի արձակ թղթերի և այս պոեմի մեջ։ Դավանաբանական հարցերը, քաղկեդոնականության դեմ ձևակերպած բանաձերը հետևողականորեն անցնում են նրա մի քանի արձակ և շափածո դրոժերի միջով։ Դավանաբանական հեղերով էլ վերջանում է այս մեծ պոեմը։

<sup>143</sup> Անդ, էջ 262.

<sup>144</sup> Անդ։



## Ս. ՔՈՂԱՆՁՅԱՆ

### ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ\*

4. ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ԿԱՌՈՂԻԿՄՅՎԱՆ  
ՀԱՅԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅ  
ԵԽԵՂԵՑՈՒ ԴԻՐԿԻ (1690 թ.)

Վերադառնալով Տրանսիլվանիայի հայերի կաթոլիկացման պատմությանը, պետք է նշել, որ սխալ է Տրանսիլվանիայի հայերին դավանագործ անելու գործը կապել միայն Օքսինտ Վրզարյանի անվան հետ։ Ճիշտ է, թե մեծ եղավ նրա դերը, սակայն նա միայնակ ոչինչ չէր կարող անել, եթե այս գործում նրան թե ու թիկունք չկանգներ կաթոլիկական համայնքուական «պիհնանոցը»։ Այս առումով էլ, որքան ժիծաղելի են այն աղբյուրները, երբ Վրզարյանին, որը փաստութեան մի նոր նիկոլ էր հանդես եկել Տրանսիլվանիայում, համարում են իրեւ երկրորդ լուսավորիչ։ Հայերի կաթոլիկացման գործում մեծ շահագրուվածություն և կարևոր դեր էին խաղացել Ալստրիայի արքունիքը լեռպոլդ կայսրի գլխավորությամբ, Հռոմի պապը և նրա ղեկավարած Պրոպագանդան, Տրանսիլվանիայում գործող պապականքարձոր հոգևորականությունը և վերջապես լվովի հայ կաթոլիկ թեմը, որը դեռևս նիկոլ թորոսովիշից, ինչպես նշեցինք, անվանա-

կան իր իրավասությունն էր տարածել նաև Մոլդովայի հայ թեմի վրա։ Գովզրիկյանը նախ և առաջ հիշատակում է լեռպոլդ կայսրի ուշանքերը։ Տրանսիլվանիայի հայերին կաթոլիկացնելու գործում։ «Լեռորուսոս շատ աշխատեցալ որ հայերն, որ Մինաս եպիսկոպոսի առաջնորդությամբ Դրանսիլվանիա եկած էին, Հռոմա գահուն հետ միանան։ Եվ իր ազնվական աշխատարյունը (ընդգծումը մերն է—Ս. Ք.) պարապի չելավ»<sup>104</sup>։

Նույնինքն Վրզարյանը ևս լեռպոլդ կայսրին ուղղված մեջ ծանոթ գրության մեջ նշում է, որ այդ միությունը միայն իր վաստակը չէ, այլ որ նախախնամության, Հռոմի Եկեղեցու և լեռպոլդ կայսրի օգնությամբ է այն տեղի ունեցել։ Այս հարցին վերաբերող պարբերությունը մեջ ենք բերում բառացի։

«Այս միությունը, չէ թե պարզապես Ավքսենահոս Վրզարյանին — միայն անկատար գործիքին և անօգուտ ծառային — հապա-

<sup>104</sup> Հ. Գովզրիկյան, «Դրանսիլվանիո հայոց մետրապոլիսը», էջ 18։

ՈԼԴԵԼԻՔ. — Սույն հոդվածաշարի Ա մասում, «Էջմիածին», 1964 թ., ԺԲ համարի 39-րդ էջի Ա սյունակում, վերեկց տող 25—26 տպագրված «1636 թվականին մի եայ միսիոներ Ռեմոնդի անունով» գրվածքի տեղ պետք է կարդալ «1636 թվականին մի այլ կաթոլիկ միսիոներ Ռեմոնդի անունով»։

\* Եարումակված «էլմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից և 1965 թվականի № Ա-ից։

ամենակարողին գործը, Հոռվմա Եկեղեցվուն  
եռանգուն աղոթքներուն արժյունքը, սուրբ  
Հավատու տարածման արժանյացն և մեր ա-  
մենադժած Տիրոջ Լեռուլուս Ա-ին իշխանու-  
թյանը հետևությունն էր»<sup>105</sup>:

Ինչպես կարելի է տեսնել կայսերական  
Հրովարտակներից, Հայ Եկեղեցու դավանու-  
թյան պատկանող Հայերի մուսքը Տրանսիլ-  
վանիայից ներս իխսու արգելված էր:

Լեռուղի կայսրի կինը՝ Ելեռնորա Կայսրու-  
թին ևս Վրզարյանին շքեղ եպիսկոպոսական  
զգեստ և եկեղեցական սպասիր նվիրեց, ան-  
շուշան պատի ունենալով նրա Շնվիրվածու-  
թյուն»-ը զեպի կաթոլիկության տարածման  
գործը:

Կաթոլիկության տարածումը Տրանսիլվա-  
նիայում ևս զուտ քաղաքական և տնտեսա-  
կան նշանակություն ուներ: Տրանսիլվանիան  
կայսրության գաղութը դարձնելու ցանկու-  
թյամբ, Հաբսուրգները մեծ կարևորություն  
էին տալիս կաթոլիկության տարածմանը:  
Վրզարյանի միջոցով Հայերի վերնախավին  
որոշ արտոնություններ տալու խոստումով,  
ձգտում էին արագործն նրանց կաթոլիկաց-  
ներ, Արքունիքը այսպիսով մի կողմից իրեն  
համար հենարան էր ուղղում ստեղծել, իսկ  
մյուս կողմից, նրանց հնավանդ սովորու-  
թյունները արմատախիլ անել փորձելով, ու-  
ղում էր նրանց ձուկել: Նույն ժամանակ Կա-  
թոլիկ Եկեղեցին Հայերին բռնի կաթոլիկաց-  
նելու միջոցով ձգտում էր տեր դառնալ մի  
հասութաբեր թեմի և Հայերից քարողիլներ  
պատրաստել, այլ վայրերում գտնվող Հայե-  
րին ևս կաթոլիկացնելու համար:

Այսպիսով, Մոլորվայում իրենց վայելած  
երեխմնի իրավունքները վերականգնելու,  
ինչպես նաև մի շարք արտոնություններ  
ստանալու նպատակով, նախ և առաջ դավա-  
նափոխ էր եղել Մոլորվայից գաղթող Հայերի  
րարձր դասը, այսինքն ունեռ աշխարհա-  
կանները և բարձր հոգևորականությունը:  
Ժողովրդի մի մասը, պահպանելու նպատա-  
կով իր Հայերին սովորույթները, ստիպվել  
էր կրկին վերադառնալ Մոլորվա, իսկ մյուս  
մասը մնացել էր տեղում: Զուրջով քաղաքի  
հայոց հիշատակարանում այդ մասին ասված  
է հետևյալը. «...ոմանք զկնի դադարման  
խողվութեանն, դարձան անդրէն յերկիրն  
Պուղանաց, ոմանք մնացին ասա ի Ճուր-  
ճօվ մինչև ցայսօր»<sup>106</sup>: Մենք տեսնում ենք.

<sup>105</sup> Հ. Գ. Գովերիլյան, «Հայք յեղիսարեթուպոլիս», թ., էջ 157:

<sup>106</sup> Հովհաննես Անեցի, «Սիրվիզի ու Ճուրճովի Հայ  
գաղթականությունները», «Հանդէս ամսօրեալ», 1896,  
էջ 134:

որ նույնիսկ Վրզարյանից ձեռնադրված Օք-  
սինտիոս Վարդանյան Եկեղեցականը, որ  
1700 թվականին Ցաշից եկել էր Եղիսարե-  
թուպոլիս, շատ շուտով, 1708 թվականին,  
թողնելով Եղիսարեթուպոլիսը, վերադառ-  
նում է իր հին հայրենիքը: Այս վերադրձը  
պատճառաբանված է իր հետևանք մի կող-  
մից իր անկարողության և մյուս կողմից ար-  
տաքին խոռվար վիճակին<sup>107</sup> Կասկածից  
դուրս է, որ նա էլ կաթոլիկությունը թող-  
նողներից յեկը պետք է լիներ:

Ուշագրավ է այն, որ նույնիսկ կաթոլիկա-  
կան աղյուրները խոստովանում են, որ Ե-  
ղիսարեթուպոլիսի և նրա շորս գյուղերում  
ապրող Հայերի մի մասը, որն ընդունել էր  
կաթոլիկությունը, վերստին վերազրձել էր  
իր հին դավանությանը և պահպանել այն եր-  
կար ժամանակի Կաթոլիկացած Հայերի  
մյուս մասը, որը, ինչպես տեսանք, կազմված  
էր նաև բարձրաստիճան հոգևորականներից  
և աշխարհականներից, բռնելով շափակոր  
ուղի, միանալով Հռոմի հետ, ցանկանում էր,  
սակայն, պահպանել Հայկական ծեսը և պա-  
պենական սովորությունները: Սակայն, պիտք  
է նշել, որ այդ մասը միատարր չէր, կար նաև  
լատինամոլների մի հոսանք:

Այժմ քննենք դագիտող Հայերի յուրաքան-  
չուր մասը առանձին:

Առաջին հերթին, ինչ վերաբերում է Տրան-  
սիլվանիայից Մոլորվա վերագարձող Հայե-  
րին, պետք է ասել, որ մեծ համարձակություն  
էր պետք այդ օրերին իրենց դեռևս նոր սար-  
քած տները լքելով, հակառակվելով կաթոլի-  
կությանը, վերադառնալ Մոլորվա, մանա-  
վանդ այնպիսի մի ժամանակ, երբ այդ երկ-  
րում 1670-ական և 1680-ական թվականնե-  
րին գեռն լրիվ խաղաղություն չէր հաս-  
տատվել:

Ինչպես տեսանք, 1677 թվականին, Անտո-  
նիք Ռուտետ Մոլորվայի իշխանը Հայերին  
թեև հրավիրում էր գալ և առանձնաշնորհում-  
ներ էր խոստանում, սակայն այդ և հաջորդ  
տարիներին վերադարձող Հայերի թիվը այն-  
քան էլ մեծ չէր կարող լինել մի շարք պատ-  
ճառներով: Նախ որ Մոլորվայում շատ կար-  
ճատել եղավ հիշյալ Անտոնիք Ռուտետի հշ-  
խանությունը, ընդամենը միայն 3 տարի  
(1675—1678): Նրա հաջորդ Ռուտիարաշկու-  
կանտակուլի իշխանության (1673—  
1675 և 1684—1685) առաջին շրջանը մնաց  
մարդկանց հիշողության մեջ թաթարների  
ահոների թալանով, որոնք ձմեռել էին երկ-  
րում, որպեսզի լեհերը շգրավեն այն: Վերջի-

<sup>107</sup> Հ. Գ. Գովերիլյան, «Հայք յեղիսարեթուպոլիս»,  
1826—1904, թ., Վիեննա, 1904, էջ 427—428:

նիա, նա զգալով, որ կաթոլիկությունը թողած հայերը, որոնք վայելում էին Ապաֆի իշխանից զանազան իրավունքներ, կարող են վարակիչ օրինակ հանդիսանալ նաև մնացյալ հայերի համար ևս, փորձում է նույնիսկ անցնել զինված միջամտության Աչա թե ի՞նչ է գրված այս մասին նույն հուշագրում. «Եվ որովհետև Դրանսիլվանիո իշխանն պաշտպանություն գտած Պաշպալովի հայերուն արտօնացյալ դիրքն և հասարակաց ծանրաբեռնութենն ունեցած ազատությունը (immutinitas) յուր հավատացելոցը համար վնասակար խայծ ու հրապուր մը կհամարեր, անոր համար իրքն եկեղեցական հովիվ՝ բարոյական վնասուց արմատաքի բժշկությունը գտնելու համար վետերանի զորապետին<sup>115</sup> դիմեց»<sup>116</sup>, Սակայն Ապաֆի իշխանի միջամտությամբ Վրզարյանի նիկոլական այս փորձը, որը արյունահեղությամբ կարող էր վերջանալ, ի դերև ելավ, և զորավարը նրան խորհուրդ տվեց դիմել Տրանսիլվանիայի կարգերին<sup>117</sup>:

Հիշյալ հուշագրից երեսում է նաև, որ Վրզարյանը սկզբից ևեթ վստահություն չի ունեցել իք ձեռքով կաթոլիկության մղված հայերի վրա և նրանց կաթոլիկության մեջ հաստատ պահելու նպատակով, հատկապես Եղիսաբեթուպոլիսի հայերից պարտավորագրեր էր վերցրել, ըստ որի կաթոլիկության հարած յուրաքանչյուր հայ, եթե համարձակվեր իր՝ այսինքն եղիսաբետուպոլիսի իրավասությունից դուրս գալ, բացի եկեղեցական պատժից, պարտավոր էր վճարել նաև 600 ֆլորին տուգանք<sup>118</sup>. Հստ երեսովդին, այս միշտցառումը ևս անհաջողության էր մատնվել: Վրզարյանը դիմելով կարգերին, այնտեղ

<sup>115</sup> Ֆր. Վետերանին (1850—1695 թ. թ.) Ապստրիայի ֆելտմարշալ էր և Տրանսիլվանիայի զորահրամանապար. նա 1688 թվականին արյան մեջ էր ինքնի բրաչով բաղաբեր բնակչության դիմադրությունը, գրանոթներով կրակել և այրել էր առիթ այդ բաղաբեր: (Տե՛ս

„Din Istoria Transilvaniei“, I, էջից և II-ա, առողջ: Acad. Constantin Daicoviciu, Stefan Pascu, Victor Cheresteșiu, Stefan Imrehi, Alexandru Neamțiu, Tiberiu Morariu. București, 1931, p. 226, L. Predescu, „Encyclopedie Cugelareă“, p. 896. և „Էնցիկլոպեդիկ հանրապետության բառարկություններում“ (1892, էջ 128):

<sup>116</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Հայր յեղիսաբեթուպոլիս», թ. էջ 162:

<sup>117</sup> Տրանսիլվանիայում կարգերը միայն արտօնյալ դավանությունների պատկանող մեծամեծներից էին բաղկացած: Հայերը դուրս էին մնում:

<sup>118</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Հայր յեղիսաբեթուպոլիս», թ. էջ 162:

որոշվեց, որ եթե նա կկարողանա ապացուցել, որ հայերը սկզբից ևեթ Հոռմեական եկեղեցուն են պատկանած եղել, այդ ժամանակ նրանց հսկուցը կբննեն կաթոլիկները, իսկ եթե ոչ՝ բոլոր կարգերը: 1692 թվականին Կլուժում տերության ավագածողովը 12 հոգուց մի մասնածովով ընտրեց, և ըստ հուշագրում գրվածի, իբր համոզվեց, որ եղիսաբեթուպուակուսի հայերը առաջ առանց բացառության, մնացյալ հայերի նման, կաթոլիկ են եղել: Ապա Տրանսիլվանիայի կառավարության խորհրդի առաջ նաև քննվեց, թե արդյո՞ք Հոռմի հետ միացումը վերաբերում է միայն հավատի հարցերին, թե՝ շոշափում է նաև այլ հարցերի: Ապա մի շարք հայերի մոտ գնալուց և հարցուիդ անելուց հետո, երբ պարզեցին, որ այդ միությունը միայն դավանությանն է վերաբերում, հազորդեցին վերին կառավարության<sup>119</sup>:

Այս բոլորը վկայում են, որ ճգնաժամային դրություն էր ստեղծվել Տրանսիլվանիայի հայ կաթոլիկ քարոզության համար: Հայ կաթոլիկ վերնախավը և հատկապես Վրզարյանը, ահազանգելով կեռպուդին, որպես կաթոլիկության մեծ հովանավորի և տարածողի, աղերսում էին շուտափուզիթ օգնության հասնել, քանի որ Տրանսիլվանիայի հայերի մի մասը, երկրում կիրավող հարկային ծանր քաղաքականության հետևանքով, թողնում և հեռանում էր, մյուս մասն էլ, Ապաֆի իշխանի խոստումներով, թողնում էր կաթոլիկությունը և վերագանում իր հին դավանությանը: Վտանգ կար, որ մնացած հայ կաթոլիկներն էլ, մեղմելու համար իրենց տնտեսական վիճակը, անցնեին Ապաֆիի հովանավորության ապակինած հայերի բանակը: Այսպիսով, ինչպես նշված էր նույն հուշագրի վերջում, «Պաշպալովցոց (իմա՝ Եղիսաբեթուպուակուսի) հավատքին ուրացությանն և ասկե հառաջ եկած խնդրուն որոշմանը հապաղելուն համար, վտանգ կա, որ Հոռմի եկեղեցին հայությունը իստիկ չի հրամայելո, որ աւս բանս բոցե մը հառաջ ընեն լմնցնեն»<sup>120</sup>, Այսպես էին գրում ծանր կացության մեջ լուկած Վրզարյան եղիսաբետուպունը ու իր համախոհները:

<sup>119</sup> Նույն տեղում, էջ 163—164:

<sup>120</sup> Նույն տեղում, էջ 164:

<sup>121</sup> Նույն տեղում, էջ 164—165:

нху Հաջորդել էր գարձյալ Գեորգի Դուկա իշխանը (1678—1683), որի նախկին իշխանության շրջանում Հայերը ստիպվել էին գաղթել Տրանսիլվանիա, երբ երկրում լեհա-թուրքական պատերազմների պատճառով ստեղծված խառնակությունից բացի, իշխանը վարում էր Հարկային ծանր քաղաքականություն, իսկ մյուս կողմից Հայերն էլ, իրեկ մասնակից իր գեմ կազմակերպված շարժմանը, Հալածանքի էին ենթարկվել Գեորգի Դուկային կրկին Հաջորդել էր վերոհիշյալ Դումիտրաշչու Կանտակուգինո իշխանը (1684—1685), որի ժամանակ էլ, երկրում տիրող ահօնի սովոր հետեւանքով, քաղաք մտնող գալլերը ուտում էին մեռած անթաղ մարդկանց դիակները, ապա Հարձակվում և հողուում կենգանի մարդկանց ու երեխաներին<sup>108</sup>:

Պետք է նշել, որ Հարեւան Վալաքիայում ևս չէին կարող այդ շրջանում հասատվել մեծ թվով Հայեր, քանի որ Հայերի գաղթից անմիջապես հետո, այդ իշխանապետության իշխան է դառնում նույն Գեորգի Դուկան (1673—1678), իսկ նրա Հաջորդ Շերբան Կանտակուգինո իշխանը ևս (1678—1688), ժանրացրել էր Հարկերը և ըստ ժամանակակից պատմի՝ երկրոր ամայացել էր բնակիւներից<sup>109</sup>:

Սակայն Հակառակ Մոլդովայում տիրող ծանր պայմաններին, ինչպես տեսանք, գեռնս Հայեր էին ապրում այնտեղ, և Հայ գաղթօջախները պահպանում էին իրենց կյանքը:

Մեր նյութից դուրս է այստեղ Տրանսիլվանիայի Ապաֆի իշխանների կողմից Հայերի նկատմամբ ցուցաբերված բարյացակամ վերաբերմունքի մասին խոսելը, սակայն առիթից օգտվելով, միենույն ժամանակ անհրաժեշտ ենք գտնում նշելու, որ տվյալ ժամանակաշրջանում ապաստան գտած բոլոր Հայերի համար շենչող մի կյանք չէր ստեղծվել։ Հասակապես ծանր պայմանների մեջ էին գտնվում գաղթող շրավոր Հայերը, Միքայել Ա Ապաֆիի 1689 թվականի Հրամանագրից ակներկ է դառնում, որ մի շարք Հայեր իրենց պարտը վճարելու հարավորություն շռանենալով, կամ թաքնվել և կամ փախել էին երկրից։ Ունեոր Հայերը ևս զգանք էին մնացել, քանի որ փախողների պարտը պարապերեր Հայ հասարակության ունեոր անդամներից էին պահանջում։ Նրանց բան-

տարկում և չարչարում էին այնքան ժամանակ, մինչև որ կարողանալին վճարել փախողի պարտը։ Իշխանը այժմ կարգադրում էր այլևս շանհանգստացնել Համայնքի ունեոր անդամներին, այլ պետք էր ստիպել պարտապահն վճարել իր պարտը։

Խիստ ուշագրավ է սակայն, այն փաստը, որ Տրանսիլվանիայում Հայերի կաթոլիկացումից հետո փոխանակվել ավելի բարելավվելու նրանց անտեսական դրությունը, ընդհակառակը, ավելի էր վասթարացել. այդ ևս կարեոր պատճառ էր եղել, որ գաղթող Հայերից շատեր դուրս գային երկրից։ Այդ մասին արժեքավոր ասլացույց կարող է հանդիսանալ Հայերի Հուշագիրը տրված 1693 թվականին Լեռապոլդ կայսրին։ Հուշագրում Հայերը, պատմելով իրենց տնախասական վիճակի վասթարացման և դրա հետեւանքով մեծ թվով Հայերի մեկնաման մասին, գրում են, որ եթե այդպես շարունակվի, մնացող Հայերն էլ կարող է մեկնեն Տրանսիլվանիայից։ Հուշագրում ասված է. «Այս նեղություններուն պատճառակ արդեն շատերն երկրեն դուրս ելլելու հարկադրեցան։ Ել եթե Յուր Վեհափառությանը, Լեռապոլտոս Ա, Հգոր պաշտպանությամբ մը շմատուցանես սպեղանից մեր ցաված վերքերուն, տարակույս չկա, որ նոս մեացողներն ալ սիտի հեռանան»<sup>110</sup> (Ընդդումները մերն են—Ս. Ք.):

Այսպիսով, պետք է նշել, որ ինչպես Տրանսիլվանիայից, այնպես էլ այլ վայրերից որոշ թվով Հայեր կրկին ապաստանած պետք է յինքին Մոլդովա, քանի որ 1693 թ. գրված մի նկարագրության մեջ միայն Սուլավայում Հայերի թիվը հաշվում է 3000 հոգի<sup>111</sup>, այս իհարկե մեծ թիվ էր, եթե նկատի ունենանք այն, որ այդ թվականից 20 տարի առաջ, Սուլավան գրեթե ամայացել էր Հայերից։

Այժմ խոսենք Տրանսիլվանիայում հաստատված Հայերի դրության մասին։ Ինչպես մի այլ տեղում տեսանք, գաղթող Հայերը սկզբնական շրջանում կաթոլիկ լին եղել և նույնիսկ ծածկելով իրենց դավանությունը լատին առաջնորդի աելապահից, ստացել էին երկու մատուռներ։ Սակայն հետագայում, Վրզարյանի քարոզչության շրջանում, նրա կողմից հետ էին խլվել այդ աղոթարանները։ Լատին հոգևորականությունը Հայերին պայման էր դրել ազատ առևտուր անելու և այլ արտոնություններ ստանալու համար, անհապաղ ընդունել կաթոլիկությունը։ Հստ երկույթին, Հայերին խոսաց-

<sup>108</sup> A. D. Xenopol, „Istoria Romanilor„, VII, p. 248 & Lucian Predescu „Enciclopedia Cugelarea“, p. 163.

<sup>109</sup> Mihail Roller, „Istoria R. P. R.“, 1952, București, p. 213.

<sup>110</sup> Հ. Գ. Գովիդիյան, «Հայոց յեղասարեթուպոլիս», 1780—1825, Բ, Վենետիկ, 1899, էջ 160.

<sup>111</sup> Դեմ. Տան, «Արևելեան Հայք», էջ 38,

ված այս արտոնություններն էին պատճառը. որ կաթոլիկական քարոզությունը որոշ հաշողություն էր գտել հայերի մոտ Վրասրյանի միջոցով։ Սակայն, ինչպես պարզորոշ կերպով երեսում է վերոհիշյալ հուշագրից, հայերը 1693 թվականին կեռպող կայսրի առաջ մի տեսակ բողոք էին ներկայացրել՝ ուղղված Տրանսիլվանիայի կարգերի դեմ, որով ցույց էին տալիս, որ Հռոմի հետ միանալուց հետո, իրենց հուշաբերը ոլնով չէին արդարացվել։ Հուշագրում ասված էր, որ եթե Հռոմին միանալուց առաջ այլևայլ տուրքերով չէին ծանրաբեռնում հայերին, բացի 100 ֆլորին վճարելու պարտականությունից, ապա այժմ, կաթոլիկ դառնալուց հետո, սկզբում 500 և ապա 2000 ֆլորին փող էին պահանջում իրենցից։ Բացի այդ, նրանց ծանրաբեռնել էին նաև բազմատեսակ հարկերով, իսկ շվեյցարելու դեպքում սպառնում էին երկրից արտաքսելու հրաման տալ։ Այժմ հայերին թույլ չէր տրվում օտար երկրներից վճանառքի ապահովենքը բերել իսկ որոշ տեղերում էլ հայերը իրենց նոր ընդունած դավանությունը կիրառելու համարձակությունն անգամ չէին կարող ունենալ և այլն։ Այս կեռողդ կայսրին ուղղված աղերսագրի այս հարցին վերաբերող հատվածի թարգմանությունը. «Դրանսիլվանիո կարգերը, ղազգայինները Հռովմա Եկեղեցվույն հետ միանալեն հառաջ այլևայլ տեսակ տուրքերով չէին ծանրաբեռներ. և միայն վճարելու պարտական էին դաշնադրությամբ հասաւատված ու վրանին դրված 100 հունգարական ֆիորինը։ Սակայն միությունը հաստատվելեն ետք՝ ի սկզբան 500, ետքեն 2000 ու այս տարին նորեն 2000 ֆիորին կպահանջեն իրենցմեն։ Իսկ առանձինն հասարակությունները՝ բնակչության և եկամտի տուրքերեն զատ, նաև ուրիշ մասնավոր տուրքերով անհանդիսատ կընեն մեր հայ եղայրները, ու շարունակ անով կապանան, որ եթե չեն վճարեր, զիրենք երկրեն գուրս կվոնտեն։ Ասոր վրա ավելցնենք ան ալ, որ հայոց խստիվ արգիված է, իրենց վճառքներն՝ զոր միութենեն հառաջ կընեին—օտար երկր բերել տալու եթե ասոր դեմ ընեն, զնած ապրանքներն իրենցմեն կառուն, ինչպես վերջին ատենները պատճառած փորձառությունները՝ բավականապես կապացուցանեն։ Պաշտպան ամենամին չունին... Այս ամեն նեղությունները—նորեն կըսեմ—միայն Հռովմա Եկեղեցվույն հետ եղած միութենեն ի վեր կպատահին...»<sup>112</sup>

<sup>112</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Հայք լեզվարքիուպոլիս», թ. էջ 158—160.

Այսպիսով հայերը մեծապես դժգոհ էին մացել իրենց վիճակից, Կաթոլիկության ընդունումը նրանց ոչինչ չեր տվել, այլ, ընդհակառակը, ավելի էր վատթարացրել նրանց տնտեսական դրությունը, ոմանք ստիպված թողել էին իրենց ամեն ինչը և գարձյալ ձեռք առել զայթականի ցոպը։

Ահա այս անելանելի վիճակումն էին հայերը, երբ Միքայել Ապաֆի հշխանը 1690 թվականին թաշդրալովի Մարտիրոս Բոտոցը (իմա՝ Պոտոցկի) կաթոլիկության հարած հայ քահանային, որը Եկեղեցականների գլխավորն էր և առաջնորդը, և զուր 20 հայ գերդաստանների խոստացավ բոլոր տեսակի դժվարություններից ազատել, եթե նրանք մտնեն իր հովանավորության տակ և իրեն ժիրքը Տրանսիլվանիայի հշխան ուրիշ բաներու մեջ ալ ընդունին ու ճանչնան։

Լեռպողդ կայսրին իրենց գրած հուշագրում հայերը (իմա՝ Վրասրյանը) նշում են, որ թաշդրալովի հայ գերդաստանները համոզում են Պոտոցկուն, որ «Հընդունի ու չճանշնա Հռովմա Եկեղեցվույն հետ կատարած միությունն և ասոր նշան, սկիբին մեջ—ինչպես որ այս բանս միության պայմանները կպահանջեն—ջուր չգնեն, հապա միայն գինիս»<sup>113</sup>։ Այսպիսով, կաթոլիկացած հայերը կրկին վերադարձել էին իրենց հին դավանությանը։

Այս իրողությունը, անշուշտ, մեծ կսկիծ էր պատճառում կաթոլիկությանը։ Գովրիկյանը, հրատարակելով հանդերձ Հյուշյալ վավերադրերը, գրում էր նաև, որ այդ փաստաթուղթը «գուցե տեղ-տեղ կսկիծ պատճառող բանի մը կետեր»<sup>114</sup> ունի։ Անշուշտ, այդ բոլորը կսկիծ կարող էին պատճառել միայն կաթոլիկական քարոզությանը։

Օքսինտ Վրասրյանը բուռն պայքար սկսեց կաթոլիկությունից հրաժարվող հայերի դեմ։ Նախ Եկեղեցու միջոցով պատժեց, սակայն անօգուտ. ապա Եկեղեցական ատյանի առաջ կանչել տվեց նրանց, սակայն նրանք չներկայացան։ Նրանք հայտնեցին, որ վայելելով Ապաֆի իշխանի հովանավորությունը, իրենք հաստատ կերպով որոշել են թողնել կաթոլիկությունը։ 1691 թվականին Պոտոցկին և հիշյալ գերդաստանները մուտք են գործում Եղիսաբեթուպոլիս։ «Ճամփակի է, որ այս հավատու ուրացությունը զեր կտես», — գրում են հուսահատորեն նույն հուշագրի կաթոլիկ հեղինակները 1693 թվականին։

Վրասրյանը 1692 թվականին եպիսկոպոս ձեռնադրվելով, վերադառնում է Տրանսիլվա-

<sup>113</sup> Նույն տեղում, էջ 160.

<sup>114</sup> Նույն տեղում, էջ 151.

կեռպղդ կաւորի հրամանը, որքան հայտնի է, մեզ չի հասել. համենայն գեպս նա, իբրև կաթոլիկության շերմ պաշտպան, պետք է որ իր հրամանադրով հովանավորած լիներ Տրանսիլվանիայի կաթոլիկ հայերին, իսկ միևնույն ժամանակ արգելած ոչ կաթոլիկ հայերի մուտքը այդ երկրից ներս Այս եղանակացության ենք հասնում մանավանդ, երբ ուսումնասիրում ենք կեռպղդի հաջորդների հայերին ուղղած հրովարտակները, որտեղ, ինչպես քիչ հետո տեսնելու ենք, հաճախ կրկնելով մեկը մյուսին, խիստ միջոցներ են ձեռք առնում ոչ կաթոլիկ հայերի նկատմամբ:

Այս ժամանակաշրջանի պատմության համար ուշագրավ է Ապաֆի Բ իշխանի հրամանագիր՝ ուղղված 1696 թվականին Եղիսաբեթուապուսի հայերին, որտեղ հայերին մի շարք առանձնաշնորհումներ է տալիս ազատ ապրելու, իրենց համար հապալ դատավոր ընտրելու, ազատ առևտուր անելու, զանազան պարտավորություններից աղատելու մասին. ինչ վերաբերում է դավանության հարցին, հրամանագրի Յ-րգ կետում ասված է հետևյալը. «Քահանա մը պահեն՝ ըսա իրենց կրոնին, և իրենց հավատքին ազատությունը մնա անվերով՝ այնպես ինչպես որ է», Կարգադրում էր նաև, որ քահանայի տնից հարկ չվերցնեն<sup>122</sup>:

Այսպիսով պետք է նշել, որ կաթոլիկությունից հրաժարվող հայերը գենես երկար ժամանակ շարունակում էին հավատարիմ մնալ իրենց հայրենի հնավանդ դավանությանը:

Սակայն ի՞նչն էր Տրանսիլվանիայի հայերի նկատմամբ կիրառված այս նոր տնտեսական քաղաքականության պատճառը. Այս հարցը ևս ուշագրության վեց արժանացել. Սրա լավագույն պատասխանը, մեր կարծիքով, պետք է փնտուի Տրանսիլվանիայի տվյալ ժամանակաշրջանի քաղաքական կյանքում: Այս շրջանը, ինչպես հայտնի է, Տրանսիլվանիայի պատմության համար յուրահատուկ է իր տերերը փոխելու տեսակետից: Թուրքական կախվածությանը հաջորդել էր այժմ արդեն ավստրիականը, այս վերջինը իր քանակով բռնի ուժով գրավելով Տրանսիլվանիան, այժմ զբաղված էր իրեն հանարկում: Միայնակ և Ապաֆին, որ հայտնի էր իր գարած թուրքերին նպաստավոր քաղաքականությամբ, այժմ ստիպվել էր ընդունել ավստրիական ռհայրտիկան հո-

վանավորությունը, իր ժառանգական իշխանությունը պահպանելու հույսով: Սակայն ավստրիական կայսրությունը, տիրանալով երկրի բոլոր ամրություններին, աշխատում էր այլև հաշվի շառնել Ապաֆիի իշխանությունը և կաթոլիկության տարածումով էլ ավելի ամրապնդել իր դիրքերը երկրի ներսում: Պարզ է, որ Ապաֆին էլ իր հնարավորությունների սահմաններում, պիտի շանար պահպանել իր դիրքը երկրում, ինքն ևս իր հերթին փորձելով ստեղծել հենարան ընդում ավստրիական աճող դերիշխանության:

Հիմնականում զուտ քաղաքական բնույթ ունեցող այս բախումը ստացել էր նաև կրոնական քողով Ապաֆինները և նրանց համախոհները բողոքական դավանության էին պատկանում, իսկ կաթոլիկությունն էլ ավլութիքական կայսրության դավանությունն էր: Պարզ է, որ բախվող երկու կողմերից յուրաքանչյուրը պիտի աշխատեր իր կողմը ներգրավել մեծ թվով հարուստ առևտրականներից կազմված հայ զաղովթի անդամներին: Ապաֆի Ա-ը հայերի կաթոլիկացումը լավ աշքով չէր կարող զիտել, որ ավելի էր թուրքացներու իր դիրքերը նկատի ունենալով անշուշտ նաև այն իրողությունը, որ գեռուս Տրանսիլվանիայի նկատմամբ ուժի մեջ չէր մտել կեռպղդյան հայտնի դիպումը, իսկ մյուս կողմից էլ երկրի կառավարությունը պահպանում էր իր ինքնուրույն ուժը, անշուշտ եւնելով իր շահերից, պետք է նոր միշտոցառումների մասին մտածեր: Զնայած այն բանին, որ Ապաֆին նախապես սիրով ընդունել և նույնիսկ իր կալվածում բնակության տեղ էր տվել և մի շարք առանձնաշնորհումներ էր պարզել հայերին, այժմ հայերի կաթոլիկության ընդունման հետևանքով (իմա՞ կայսրության հենարան դառնալու պատճառով) նաև, մեր կարծիքով, պետք է փոխեր իր քաղաքականությունը, խստացներ հարկերը, զրկեր նրանց մինչ այդ վայելած մի շարք իրավունքներից: Իբրև մեր այս պնդման հաստատում, կարենոր է նկատի ունենալ հիշյալ շրջանում իր կալվածում (թաշգրալովում, հետո՝ եղիսաբեթոպոլիս) հաստաված հայերի տնտեսական դժգոհությունը և երանց հակակաթոլիկական տրամադրությունների իշխանի կողմից հմուտ օգտագործումը:

Ավելորդ չէ այստեղ նշել, որ Ապաֆինները նույն քաղաքականությունն էին վարում նաև Տրանսիլվանիայում ապրող ոռումինացի ուղղափառների և հատկապես նրանց կղերի նկատմամբ, որոնց ևս լատին կղերը կաթոլիկացնել էր ցանկանում: Այս քաղաքավանությամբ, իշխող դասակարգը իր կողմն էր

<sup>122</sup> Հ. Գ. Գովբիկյան, «Հայեր յօդիսաբեթուպուհս», Ա, էջ 19, 16.

ուղում գրավել նաև ուղղափառ Եկեղեցուն որպեսզի կարողանա պահպանել ավատական կարգը, որը հատկապես հենվում էր գյուղացիների շահագործման վրա<sup>123</sup>, այն պարզ պատճառով, որ զյուղացիության մեծասր բաղկացած էր ոումինացիներից:

Մի բան, սակայն, պարզ է, որ Ապաֆիների միջոցառումները, անկախ նրանց հետապնդած նպատակներից, Տրանսիլվանիայի հայերի և ոումինացիների ինքնուրույնության պահպանման գործում նպաստավոր և առաջավոր երեւլթ էին հանդիսանում:

Վերոհիշյալ ձախողումից հետո, Վրզարևանը նոր հանորի է դիմում: Հիմնադրելով Գեղարքունիքի շահագործման վրա ծրագրում է շուտափույթ կերպով Տրանսիլվանիայում, այդ թվում նաև Եղիսաբեթուպուլսում գտնվող բոլոր հայերին բերել և կենտրոնացնել այնտեղ: Այսպիսով նա հետապնդում էր երկու նպատակ: առաջին՝ ամփոփել նրանց իր հիմնադրած քաղաքում, ուր վայելելով մեծ հեղինակություն, կերպուանարշատ մոտիկից հսկողություն սահմանել և զգոնություն պահպանել հակակաթոլիկական ամեն մի շարժման ղեմ, իսկ երկրորդ՝ Գեղան, իրոք հայ կաթոլիկության կենտրոն, որ ամենից շուտ էր ընդունել նաև նոր տոմարը, կարողանար շուտով չլատել և ռդարձի բերել» կաթոլիկությունից ռուրացյալ Եղիսաբեթուպուլի հայերին:

Այդ ժամանակ է, որ, ինչպես գրում է Գովրիկյանը, «Եղիսաբեթուպուլսի հայերն այլ եցան և շփոթեցան», կարծելով, թե այդպիսով ո՞չ միայն իրենց ազատությունն ու անկախությունը բոլորովին պիտի կորչի, այլև իրենց ազատ առևտուրը պիտի խանգարվի: Այս հարցում պետք է նշել, որ քաղաքի, թե՛ կաթոլիկ և թե՛ վերստին Հայ Եկեղեցուն դարձած հայերը պետք է, որ միասնարար հանդես գային, քանի որ բոլորի շահերն էլ տեղափոխության հետեւնքով ժանր հարված կարող էին կրել: Եվ ահա մենք տեսնում ենք, որ Եղիսաբեթուպուլիսը միասնարար գլուխ է բարձրացնում Վրզարյան եպիսկոպոսի դեմ: Գովրիկյանը այդ ընդունում է, երբ գրում է հետակալը: Նրանք ամենայն զորությամբ ղեմ կեցան և ամեն միջոց բանեցնելով՝ աշխատեցան եպիսկոպոսին ծրագիրը փլացնելու<sup>124</sup>: Այս կապակցությամբ, նրանք ազերսագիր էին ուղարկել կեռպոլդ կայսրին, ուր ցուց էին տալիս, որ իրենք զանազան պատճառուներով տուժել և

ստիպվել են իրենց աները կառուցել երեք անգամ, որ Գեղարք ծայրամաս է և վաճառականության հարմար վայր չէ: Նույն ժամանակ նրանք դիվանագիտորեն չեին մոռանում դրելու, որ իրենք հնազանդ են եպիսկոպոսին, միայն խնդրում են, որ իրենց ծննդավայրից չենացնեն: Եղիսաբեթ ապուստացիները նախ աղերսագիրը ուղարկեցին իրենց քաջածանոթ Ապաֆի հշխանին, որն այդ ժամանակ Վիեննայում էր գտնվում: Այս հարցում Ապաֆին դիմելը վկայում է, որ Եպիսկոպոսի մտագրության դեմ դուրս եկողների մեջ զլխավոր դերը ստանձնել էին կաթոլիկությունից հրաժարած հայերը, որոնք, անկասկած, էլ ապելի շատացած պետք է լինեին այդ ժամանակ: Որ այդ այդպիս է, վկայում է նաև Եղիսաբեթուպուլսի պատմաբանը, գրելով մի այլ տեղում, որ Եղիսաբեթուպուլսկից համար [Եպիսկոպոսը] փլացնել ու ջնջել կուղե, չէ թե միայն չհնազանդեցան, հապանակ բողոքեցին ու իրենց միջնորդ բոնեցին Ապաֆի հշխանին<sup>125</sup>: Ապաֆի թ-ը ինք ևս մի այլ աղերսագիր կցելով հայերի դրությանը, ներկայացրեց կայսրին և միջնորդեց, որ նրանց տեղից շարժի կեռպոլդ կայսրը 1712 թվականի նոյեմբերի 25 թվակիր իր գրությամբ, Եղիսաբեթուպուլսեցիներին խաղաղեցնում է, հրամայելով, որ այնտեղ մնան:

Գովրիկյանը գտնում է, որ առանց Ապաֆիի միջամտության, դորություն չէր ունենա Եղիսաբեթուպուլիսը և անտարակուս կուլ կզնար Գեղարք հայաքաղաքին<sup>126</sup>: Սակայն մի այլ տեղում նույն հեղինակը, Վրզարյանի քայլը Տրանսիլվանիայի բոլոր հայերին Գեղարքում կենտրոնացնելու մասին, անվանում էր հեռատես քաղաքականություն, ցիրուցան հայերից զորավոր մի մարմին ստեղծելու համար<sup>127</sup>: Ինչ խոսք, որ Տրանսիլվանիայում ցրված բոլոր հայերին մի հայաքաղաքում կենտրոնացնելը առաջավոր երեւլթ էր: սակայն Վրզարյանը այդ ծրագրով մտածում էր նաև վերջ տալ Եղիսաբեթուպուլսի ոչ կաթոլիկներին: Մյուս կողմից էլ չպետք է մոռանալ, սակայն, որ երկու հայաքաղաքների գոյությունը նպաստեց հայ կյանքի բարգավաճմանը: Հիշյալ քաղաքների մշտական մրցումը իրար հեա կարենոր դեր ունեցավ նրանց ծաղկման համար:

<sup>123</sup> Mihail Roller, „Istoria R. P. R.”, p. 234.

<sup>124</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Հայք լԵղիսաբեթուպուլիս», Ա, էջ 20:

<sup>125</sup> Փիփաս, «Հայերն պատարագը», «Հանդէս ամսօրեա», 1903, էջ 15:

<sup>126</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Հայք լԵղիսաբեթուպուլիս», Ա, էջ 18:

<sup>127</sup> Փիփաս, «Հիված աշխատությունը», էջ 15:

36

Այստեղ խիստ կարենոր է նշել նաև, որ  
Վրդաբրյանի կաթոլիկական քարոզության  
գործը անհաջողության էր մատնվել ու չ  
միայն եղիսարեթուապուսի հայերի մոտ, այս  
նաև դեռևս 1694 թվականին Սեպվիդ գյու-  
ղաքաղաքի հայերը հայացավան էին: Այդ  
մասին է վկայում Դրիգորիոսուսի Ս. Կուսա-  
վորիշ եկեղեցում ժիշտ զարի սկզբում Հ. Մ.  
Թժձկյանի կողմէից գտնված մի հիշատակա-  
րան, որտեղ ասված է, որ թաթարների ղոր-  
քը 1694 թվականին ասպատակելով Սեպվի-  
դը, «տերեաց լուսաւորչագուաւան հայկացան  
ազգն ժողովրդով քահճանայով...»: Դերված  
հայերի թիվը եղել է 148 հոգի<sup>128</sup>, Պետք է  
կարծել, որ Տրանսիլվանիայի հայաշատ  
մյուս կենտրոնների հայերը ևս շարունակում  
էին դեռ կապված մնալ Հայաստանյայց Ա-  
ռաքելական Եկեղեցուն՝ պահպանելով իրենց  
հնագույն դավանությունը:

ԺԷ զարի վերջում Տրանսիլվանիայում նոր թափ է առնում կաթոլիկական քարողությունը. արդեն 1697 թվականին ոռումինացիների մի մասին կաթոլիկացրին, իսկ 1699 թվականին այդ միացումը հաստատվեց Լեռպուրդ կայսրի մի դիպլոմով: Ուշագրավ է, որ մինչև 1731 թվականը Եղիսաբեթուպոլիսի հայերի մի մասը, գուցե և մեծ մասը, գենեսէր կաթոլիկացվել: Այսափառվ Վրդարյաննեպիսկոպոսին մինչև իր մահը (1715) չէր հաջողվել ավարտել բոլոր հայերին կաթոլիկացնելու գործը: Նրա մահով վերջ էր գտնում նաև հայ-կաթոլիկ թեմի առաջնորդությունը և այսպես կոչված ժամանակավոր կերպով հայերի վերին զեկավարությունն ու առաջնորդությունը անցնում էր լատին եպիսկոպոսի իրավասության տակ:

Վրզարյան եպիսկոպոսի մահից հետո, Տրանսիլվանիայի Հայերը որոշ ժամանակ ավելի են ինքնուրուցնություն ձեռք բերում և պայքարում օտար նորամուծությունների դեմ: Հետևյալ նամակը, որը գրված է Վենետիկից Եղիա Վարդապետի կողմից Մխիթարյաններին 1718 թվականի հոկտեմբերի 12-ին, լրիվ շափով լուսաբանում է այն դրույթյունը, որն ստեղծվել էր Տրանսիլվանիայում Վրզարյանի մահից հետո: Նամակում կաթոլիկության խախտման վերաբերյալ նշված տողերը մի Հայաքաղաքի մասին, մենք կարծում ենք, որ վերաբերում են Գեղուցին, քանի որ նախ ասված է, որ Օդսենտ եպիսկոպոսի ժամանակ հիշյալ քաղա-

բի հայերը կաթոլիկ էին, այնինչ փաստ է, որ Եղիսաբեթուպոլիսի հայերի մի մասը վերստին Հայ Եկեղեցու գիրկը դարձավ Ժէ դարի վերջին, Օգսենտի օրոք: Ասված էնակ, որ այդ հայաքաղաքի հայերը միայն ձեւական կերպով կաթոլիկ են, այսինքն զջուր խառնելն ունին ի պատարագ»: Պարզ է, որ Օգսենտի ժամանակ կաթոլիկությունից հրաժարվող Եղիսաբեթուպոլիսի հայերը այլև չուր շամաննեցին պատարագի գինու մեջ: Նույնպես, նամակում ասված էր նաև, որ տեղի հայերը հետեւում են «հերձածող» հայերի ծեսերին և ավանդություններին: 1720—1721 թվականներին Հովհանն եպիսկոպոսի կողմից Գեղուայից ուղարկված նամակներից դարձալ երեսում է, որ այդ քաղաքում շատ ուժեղ է եղել հին ավանդությունների առկայությունը: Այդ վայրից եկող քահանան հուսահատորեն հայտնել էր, որ մենակ ինքը հնարավոր չէ որ փոխի գրությունը, այդ կապակցությամբ խնդրել է իր հետ տանել Խաչատուր վարդապետին, իսկ այս վերջինի զգալու գեղաքում, Հովհանն եպիսկոպոսն ուղարկել է այս այլ հայերի միջից հանել մնացած ավանդությունները: Այս մի հատված Եղիսաբետի կողմից առաջանակից նաև կապակցությունը առաջանաւ, իր հետ ունենալով «եղբօրորդի Օգսենտ եպիսկոպոսի Մաճարու», 14—15 տարեկան, որ Հովհանն կոլեզը պետք է որ ընդունվի: «Իսկ քահանայն է յայն քաղաքէ Մաճարոյ, որ է բուն հայոց՝ տրեցեալ ի կայսերէն նոցա, իշխանութիւն դատելոյ, այսինքն ունին իշխանութիւն դատաստան առնելոյ...»: «... Բայց զի ժողովուրդ այսորիկ քաղաքիս թէպէտ ի ժամանական Օգսենտին լիալք են ուղափառք (ընդդումը մերն է—Ս. Փ.), սակայն այժմ ոչ են այնպիսի որպէս էին երեկն և եռանդն, և այս թէ՛ մեծամեծ և թէ՛ ուամիկ (ընդդումը մերն է—Ս. Փ.): Միայն զջուր խառնելն ունին ի պատարագ: Կ համբաւեն զինքեանս գոյ ուղղափառ առ պետութիւնս քրիստոնէից, թէ՛ առ հոգեռս և թէ՛ առ մարմնաւորս, այսինքն թէ՛ առ եպիսկոպոսս և թէ՛ առ իշխանս են որոց են, բայց ի ժողովս և ի յեկեղեցիս իրեանց Վարին գրէրէ այնպէս ամենեկմբ ուրպէս եերձուածող հայսն, թէ՛ ըստ տօնին և թէ՛ ի յայլս ընաւս ծէս և ի յաւանդութիւնս (ընդդումը մերն է—Ս. Փ.):»: Նամակագիրը ասում է, որ Տրանսիլվանիայից եկող երկու հայերին էլ

<sup>128</sup> Հ. Մինաս Բժիշկյան, «Ճանապարհորդութիւն ի Լեռաստան և լալլ Կողմանս բնակեալս ի Հայկազնց սեռուց ի Նախնեաց Անի քաղաքին», ի Վենետիկ, 1830. էջ 201:

պահել են իրենց մոտ մինչև Մխիթար Աբ-  
րայի գալը<sup>129</sup>:

1719 թվականին Տրանսիլվանիա իրք այ-  
ցելու զրկվեց Կարնեցի հաջատուր վարդա-  
պետը: 1719 թվականի սեպտեմբերի 28-ին,  
Գեղայի մեծամեծները գրությամբ գիմելով  
Մխիթար Աբրահամը, խնդրեցին երկու քարո-  
զիշ ուղարկել իրենց: 1720 թվականին եվ-  
գոկիացի Հովնան եպիսկոպոսը, որ իրեւ  
հյուր Ս. Ղազարու վանքում էր բնակվում,  
այն կողմերը դնաց: Նրան ընկերակցում էր  
Մանվել վարդապետը, որը երեք տարի մնա-  
լով, հայոց լեզու էր ավանդել<sup>130</sup>: Դարձյալ  
Գեղայի այս շրջանի պատմության համար  
խիստ ուշագրավ են վերոհիշյալ Հովնան  
եպիսկոպոսի մի քանի նամակները՝ գրված  
Հայաբաղաքից Մխիթար աբրահամի Առաջին  
նամակի (1720 թ. Հովհանի 10) սկզբում,  
Հովնան եպիսկոպոսը նկարադրում է, թե  
ի՞նչպիսի մեծ դժվարությամբ հասել է Գեղո-  
լա և քաղաքի մեծամեծներին ցուց է տվել  
պապական նվիրակի և Մխիթար Աբրայի  
գրությունները, ապա հաղորդում է նվիրակի  
գրությամբ լատին եպիսկոպոսի մոտ ներ-  
կայանալու մասին: Այս վերջինը Հովնանին  
իրեն փոխանորդ է նշանակել հայկական  
եկեղեցիների վրա, «և ետ հրաման աալ  
զդորում մանկանցն հայոց զկնի մկրտու-  
թեան այսուհեան, որպէս առնէ Սուրբ Եկե-  
ղեցին, և առնել զձեռնադրութիւնն յեկեղեցին  
հայոց և կառավարել զնոսա ուղղափառա-  
պէս»<sup>131</sup>:

Հովնան եպիսկոպոսի մի այլ նամակից  
(1721 թ. Հովհանի 16) երեսում է, որ նա լեզու  
վի կարողացել գտնել լատին եպիսկոպոսի  
հետ և առաջարկել է մի միսիոներ ուղարկել  
Հովնանի Պրոպագանդայից, որը տեղյակ լինի  
լատիներենի: Գեղուայում հայկական հին  
սովորությունների գոյությունը ապացուցող  
տվյալներ են պարունակում հեաելալ տողե-  
րը. «...Վասն Ծննդեան պահոցն ծանիք, զի է  
հաստատուն և կամին ամենեքին պահել  
յօժարութեամբ, սակայն ինեն սովորութիւնն  
ոչ քանի առժամայն (ընդգծումը մերն է—  
Ս. Ք.), այլ սակաւ սակաւ տեսանելով և  
լսելով՝ բնտելանան շնորհի Տեառն, վասնզի  
են յօժարամիաք առ օգտակարսն...»<sup>132</sup>:

<sup>129</sup> Հ. Ղենդ Տայան, «Մայր դիւան Մխիթարեանց  
Վենետիկ ի Ս. Ղազար, 1707—1773», Վենետիկ,  
1830, էջ 16.

<sup>130</sup> Հ. Հովնանես Թորոսյան, «Վարք Մխիթարայ  
աբրայի Սերաստացույ», երկրորդ տպագրություն,  
Վենետիկ, 1932, էջ 266.

<sup>131</sup> Հ. Ղ. Տայան, «Մայր դիւան», էջ 22:

<sup>132</sup> Նույն տեղում, էջ 24:

Ուշադրության արժանի են հատկապես նույն  
նամակի հետագա տողերը, ուր գրողը նկա-  
րագրում է, թե ի՞նչպես Գեղայում, հին  
ավանդությունների պահպանման գործում,  
Հովնանի Պրոպագանդայից մեղադրվել է Տեր  
Մինասը և Տրանսիլվանիայի լատին եպիս-  
կոպոսի կարգադրությամբ հեռացվել է Հա-  
յաբաղաքի և Տրանսիլվանիայի այցարարի և  
փոխանորդի պաշտոնից. «Ծանիր ևս,  
սուրբ ժողովն, որ գրեալ էր մաճարու եպիս-  
կոպոսին թէ, ընդէ՞ր թոյլ տաս, որ Տէր Մի-  
նասն խաւնակէ զպահսն Հայոց, ըստ սո-  
վորութեան եկեղեցւոյն իրեանց զոր ունին,  
որովհետեւ են միացեալք հաւատով ընդ  
մեզ, և այլն: Զօրութեամբ նոյն գրոյն կո-  
շեաց զլորս եկեղեցւոյն զգինաւորսն Հա-  
յոց, ընդ նոսին և զէր Մինասն, կամեցաւ  
զի և ս լինիցիմ անդ ներկայ և ապա առաջի  
ամենեցուն արար քննութիւն վարուց և ա-  
րարմանց Տէր Մինասին, և եգիս այնպէս,  
որպէս ամբաստանեցեալն էր ի Հոռմ. և յետ  
սոտուգելոյ, էաո զվիզիտադորութեան և վի-  
գարութեան զգիրն, զոր տուեալ էր. և այս-  
պէս լուցոյց զնա ասելով. թէ ուրեմն պատ-  
րեցեալ իմ ի բանից քոց և խալիցեալ, զոր  
եթէ ճանաչէի զքեզ նախ, որպէս այժմ ճա-  
նաչեցի, ոչ երբէք տայի քեզ իշխանութիւն,  
վասն զի ամօթ արարեր ինծ, և այլն: Նա-  
մակի շարունակության մեջ ասված է, որ  
լատին եպիսկոպոսի հարցադրությանը, թե  
ում էք ցանկանում ձեզ փոխանորդ ընտրել,  
հայ մեծամեծները ցանկացել են, որ փո-  
խանորդ լինի Հովնանը, սակայն նա մերժել  
է, առարկելով որ հիվանդ է և լատիներեն  
չգիտի, որ Պրոպագանդան մի միսիոներ  
է ուղարկելու և նրան է վայել այդ պաշտոնը  
ստանձնելը<sup>133</sup>:

Վերոհիշյալ փաստերը պարզ և համոզիր  
կերպով ցուց են աալիս, որ Գեղայան երբեք  
էլ կաթոլիկության կենտրոնը շէր, ինչպես  
կարծել է Հ. Գ. Դովիրիկյանը, այլ որ Վրզար-  
յանի քարոզությունը խոր արմաներ չի ու-  
նեցել նույնիսկ նրա հիմնադրած քաղաքում  
ի, որ Եղիսաբեթուպուլսի հայերի կաթոլիկու-  
թյան դեմ մղած պայքարի ալիքը համակել էր  
նաև Գեղուայի հայերին:

Այսպիսով, Տրանսիլվանիայի հայաշատ  
վայրերում կաթոլիկական քարոզությունը  
անհաջողություն էր կրում և հայոց մեջ տա-  
րածված օտարութիւնը նորամուծությունները  
հետզհետեւ թուլանում էին:

<sup>133</sup> Նույն տեղում, էջ 24—25:

Ա. Խ. ՍԱՖՐԱՆՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ  
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ  
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ  
ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՔՐԻՐՆԵՐԸ\*

Փ Ա Լ Ո Ւ

		ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ ԳՐԱԾԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ					
Գրասեն- յակի թ. թ.	Կարգի թ.	Խաչի է դրված	Բովանդակության համառոտագիրը	Կաղմողը	Պետը	Եւագրու- թյան թվականը	Մաքրա- գրության թվականը
418	1993					1930 թ. փետրվարի 11	1930 թ. փետրվարի 16

Արդարադատության և դավանանքների  
միջնաժամկետ միջամտության

Փալուի կազայի Սակրատ գյուղում գտնվող  
Ս. Թորոս եկեղեցին 1275 թ. մուհարբեմի  
կեսի կայսերական հրամանով հաստատված  
է: Հիշյալ կազային կից այլ գյուղերում

գտնվող և կայսերական հրամանով չհաս-  
տառված 37 եկեղեցիների վայրերը, անուն-  
ները և կառուցման թվականները ցուցնող  
մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայաց-  
նում ենք Ձեզ և խնդրում, համաձայն օրենքի,  
անհրաժեշտ կարգադրությունն անել:

Փ Ա Լ Ո Ւ

448

Ֆերմանով՝ 1:

Առանց ֆերմանի՝ 27:

Կցված է 1830 թ. փետրվար 16-ի և 1933 թարբերին:

Խառնացման թ.

1. Բուն Փալուում, Ս. Լուսավորիլ եկեղեցին,  
1286 թ.:

\* Շարունակված ոչշմիածին ամսագրի 1965 թվա-  
կանի թ. և Ա.-ից, Բ—Գ—Դ-ից և Ժ-ից:

- Բուն Փալուում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1206 թ.:
- Փալուի կազայի Հավք գյուղում Ս. Աստ-  
վածածին եկեղեցին, 1131 թ.:
- Փալուի կազայի Հավք գյուղում Ս. Կա-  
թողիկե եկեղեցին, 1116 թ.:
- Փալուի կազայի Նիրիշի գյուղում Ս. Կա-  
թապետ եկեղեցին, 1306 թ.:
- Փալուի կազայի Նեխրի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1171 թ.:

7. Փալուի կազայի Խոշմաթ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1116 թ.։  
 8. Փալուի կազայի Օխո գյուղում Ս. Կիրակոս եկեղեցին, 1216 թ.։  
 9. Փալուի կազայի Թեփե գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1266 թ.։  
 10. Փալուի կազայի Գմբեթ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1286 թ.։  
 11. Փալուի կազայի Խաս-բեկ (?) գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1246 թ.։  
 12. Փալուի կազայի Արիխան գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1251 թ.։  
 13. Փալուի կազայի Դեշի գյուղում Ս. Նիկողայոս եկեղեցին, 1296 թ.։  
 14. Փալուի կազայի Արյանի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1326 թ.։  
 15. Փալուի կազայի Շինազ գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, Հնուց։  
 16. Փալուի կազայի Սակրաթ գյուղում Ս. Թոռոս եկեղեցին, 1275 թ. մուհարրեմի կեսին։  
 17. Փալուի կազայի Սիդամ գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1261 թ.։  
 18. Փալուի կազայի Զայիրի-Մեզրե գյուղում Ս. Լուսավորի եկեղեցին, 1310 թ.։  
 19. Փալուի կազայի Սեթ գյուղում Ս. Թոռոս եկեղեցին, 1261 թ.։  
 20. Փալուի կազայի Ենի-Մեղրի գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1255 թ.։  
 21. Փալուի կազայի Ենի-Մեղրի գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1276 թ.։  
 22. Փալուի կազայի Յարմշա գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1231 թ.։
23. Փալուի կազայի Մերզում-Մեզրե գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1246 թ.։  
 24. Փալուի կազայի Քողզեր գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1266 թ.։  
 25. Փալուի կազայի Կարաքերք գյուղում Ս. Խաչ եկեղեցին, Հնուց։  
 26. Փալուի կազայի Դավթի-Մեզրե գյուղում Ս. Կիրակոս եկեղեցին, 1241 թ.։  
 27. Փալուի կազայի Հալալ-քում գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1216 թ.։  
 28. Փալուի կազայի Քենքերի գյուղում Ս. Թովմաս եկեղեցին, 1211 թ.։  
 29. Փալուի կազայի Ուղուն-օվա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1181 թ.։  
 30. Փալուի կազայի Ուղուն-օվա Մեզրե գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1266 թ.։  
 31. Փալուի կազայի Նաջարան գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1276 թ.։  
 32. Փալուի կազայի Դերիս գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1216 թ.։  
 33. Փալուի կազայի Թիլ գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1321 թ.։  
 34. Փալուի կազայի Մաղին գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1290 թ.։  
 35. Փալուի կազայի Սիրին գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1199 թ.։  
 36. Փալուի կազայի Խարաբուրք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1286 թ.։  
 37. Փալուի կազայի Նիրիշի գյուղում Ս. Պողոս եկեղեցին, 1056 թ.։  
 38. Փալուի կազայի Հարաբ գյուղի Քաղցրահայց վանքում Ս. Աստվածածին եկեղեցին, 620 թ.։

### Ս Վ Ա Զ Ի Վ Ի Լ Ա Ց Ե Թ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ  
ԳՐԱՍԵՆԵՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԻ

ԳՐԱՍԵՆ- ՆԿԻ թ-ը	ԿԱԾԳԻ թ-ը	ԽՆԴՐ ԺԱՄԻՆ է զրգած	ԲՈՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊՈԽՎԻՐԸ	ԿԱՂՋՈՂԸ	ՊԵՏԸ	ՄԵԽՎՐՈՒ- ԹՅԱՆ ԲՐԱԿԻՆՆԸ	ՄԱՐԳԱ- ՉՐՈՒԹՅԱՆ ԲՐՎԱԿԱՆԸ
246	1973					1330 թ. փետրվարի 12	Նույնը

Արդարադատության և դավանանների  
բարձր մինիստրության

Սվագի վիլայեթի կենտրոնական կազայում  
և Համբեր, Կողկիրի, Աղիզի և Թինան կազա-  
ներում և նրանց հարակից մասերում գտնվող  
և կայսերական ֆերմանով հաստաված 26  
եկեղեցիների անունները, ինչպես նաև կայ-

սերական հրամանների թվականները, հետո  
կայսերական հրաման լունեցող 38 եկեղեցիների վայրերը և անունները, ինչպես նաև  
նրանց հիմնման թվականները ցուցնող երկու  
օրինակ ցուցակները սրա հետ ներկայաց-  
նում և խնդրում ենք, համաձայն օրենքի,  
հարկ եղած կարգադրություններն անել:

## ՍՎԱԶ

246

Ֆերմանով՝ 26:

Առանց ֆերմանի՝ 39:

Կցված է 1930 թ. փետրվար 12-ի № 1973 թարրիրին:

## Կառուցման թ.

1. Թուն Սվազում Ս. նշան վանքում Ս. նշան եկեղեցին, 1273 թ., մուհարրեմի 1:
2. Թուն Սվազում Ս. նշան վանքում Ս. Կարապետ եկեղեցին, 1243 թ., մուհարրեմի 1:
3. Թուն Սվազում Ս. Անապատ վանքում Ս. Աստվածածին եկեղեցին, 1201 թ., շաբան 30:
4. Կրկին Սվազում Ս. Խնդրակասար վանքում, Ս. Աստվածածին եկեղեցին, Հնուց:
5. Կրկին Սվազում, Ս. Հակոբ վանքում, Ս. Հակոբ եկեղեցին, Հնուց:
6. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայում Ս. Հրեշտակապետ վանքում Ս. Հրեշտակապետ եկեղեցին, 1241 թ. սեֆեր:
7. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայում Ս. Հրեշտակապետ վանքում Ս. Աստվածածին եկեղեցին, 1241 թ. սեֆեր 1:
8. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայում Ս. Կարապետ եկեղեցին, 1241 թ. սեֆեր 1:
9. Սվազի վիլայեթի Կոչկիրի կաղայում Ս. Թագավոր վանքում Ս. Թագավոր եկեղեցին, Հնուց:
10. Սվազի վիլայեթի Կոչկիրի կաղայում Ս. Գևորգ վանքում Ս. Գևորգ եկեղեցին, Հնուց:
11. Թուն Սվազում Ս. Աստվածածին եկեղեցին, 1256 թ. շեմազի-ուլ-էվլի 30:
12. Թուն Սվազում Ս. Սարգիս եկեղեցին, 1256 թ. շաբան 15:
13. Թուն Սվազում Ս. Փրկիլ եկեղեցին, 1275 թ. ուբի-ուլ-էվլի 15:
14. Թուն Սվազում Ս. Մինաս եկեղեցին, Հնուց:
15. Թուն Սվազում Ս. Գևորգ եկեղեցին, Հնուց:
16. Թուն Սվազում Ս. Քառասուն Մանկանց եկեղեցին, Հնուց:
17. Սվազի վիլայեթի Թավրա գյուղում Ս. Երրորդություն եկեղեցին, 1268 թ. շաբան 1:
18. Սվազի վիլայեթի Բինգյոլ գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1268 թ.:
19. Սվազի վիլայեթի Բինգյոլ գյուղում Ս. Գևորգ վանքում Ս. Գևորգ եկեղեցին, Հնուց:

20. Սվազի վիլայեթի Խշան գյուղում Ս. Երրորդություն եկեղեցին, Հնուց:
21. Սվազի վիլայեթի Խշան գյուղում Ս. Նիկողայոս եկեղեցին, Հնուց:
22. Սվազի վիլայեթի Ղալտի գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, Հնուց:
23. Սվազի վիլայեթի Ղավղալի գյուղում Ս. Խաչ եկեղեցին, Հնուց:
24. Սվազի վիլայեթի Աք-կայա գյուղում հայոց եկեղեցին, 1267 թ. շեմազի-ուլ ախըր 30:
25. Սվազի վիլայեթի Թեթմազ գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, Հնուց:
26. Սվազի վիլայեթի Շենիքուրաք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, Հնուց:
27. Սվազի վիլայեթի Մարի Հասան գյուղում Ս. Փրկիլ եկեղեցին, Հնուց:
28. Սվազի վիլայեթի Յըլդըզլի կաղայի Խնինան նահիելում Ս. նշան եկեղեցին, 1268 թ. (շաբան):
29. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Խանլար գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1247 թ. ուշեր 15:
30. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Ղովրում գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1247 թ.:
31. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Ղավերազ գյուղում Ս. Փրկիլ եկեղեցին, Հնուց:
32. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Ղավրագյուղում Ս. Երրորդություն եկեղեցին, Հնուց:
33. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Ղավրագյուղում Ս. Մարգիս եկեղեցին, 1249 ուշեր:
34. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Խոսանա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1287 թ. շեմազի-ուլ-էվլի 30:
35. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Դուռզասար գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1253 թ. շաբան 15:
36. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Դուռզասար գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, Հնուց:
37. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Դավանլի գյուղում Ս. Փրկիլ եկեղեցին, Հնուց:
38. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Խարխուն գյուղում Ս. Հրեշտակապետաց եկեղեցին, Հնուց:
39. Սվազի վիլայեթի Հաֆիք կաղայի Խոչեսար գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1247 թ. ուշեր 15:

40. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Ղամիս գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1247 թ. ռեշեր 15:
41. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Փերափերթ գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1247 թ. ռեշեր 15:
42. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Օղնովիթ գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, հնուց:
43. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Չափկերտ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
44. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Բաղչեցիթ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1254 թ. ջեմագի-ուլ-էվլվել 1:
45. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Էսթանով գյուղում Ս. Թորոս եկեղեցին, հնուց:
46. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Էսթանով գյուղում Ս. Խաչ եկեղեցին, հնուց:
47. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Մարահար գյուղում Ս. Մարգիս եկեղեցին, 1247 թ. ռեշեր 15:
48. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Մարահար գյուղում Ս. Խաչ եկեղեցին, հնուց:
49. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Ջինջին գյուղում Ս. Խաչ եկեղեցին, հնուց:
50. Սվագի վիլայեթի Հաֆիք կազայի Թոտորաք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1324 թ. ռեժի-ուլ-ախըր:
51. Սվագի վիլայեթի Կոչքիրի կազայի Ջարե գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, հնուց:
52. Սվագի վիլայեթի Կոչքիրի կազայի Քար-Հատ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1267 թ..
53. Սվագի վիլայեթի Կոչքիրի կազայի Դաեքս-սի գյուղում Ս. Կարուսպետ եկեղեցին, հնուց:
54. Սվագի վիլայեթի Կոչքիրի կազայի Կոթի գյուղում Ս. Մարգիս եկեղեցին, 1250 թ. շաբան 30:
55. Սվագի վիլայեթի Կոչքիրի կազայի Ալաբիկս գյուղում Ս. Մինաս եկեղեցին, հնուց:
56. Սվագի վիլայեթի Կոչքիրի կազայի Թեքելի գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, հնուց:
57. Սվագի վիլայեթի Կոչքիրի կազայի Կառա-բողազ գյուղում Ս. Խաչ եկեղեցին, հնուց:
58. Սվագի վիլայեթի Կոչքիրի կազայի Քեղե-ուրդ գյուղում Ս. Աստվածածին եկե-ղեցին, հնուց:
59. Սվագի վիլայեթի Աղիզի կազայի Մ. Երրորդություն եկեղեցին, հնուց:
60. Սվագի վիլայեթի Աղիզի կազայի Ու-զուն-փինար գյուղում Հայոց եկեղեցին, հնուց:
61. Սվագի վիլայեթի Աղիզի կազայի Մազի գյուղում Հայոց եկեղեցին, հնուց:
62. Սվագի կազայի Բյունյան կազայի Մ. Աստվածածին եկեղեցին, հնուց:
63. Սվագի վիլայեթի Բյունյան կազայի Էյրիք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1282 թ.:
64. Սվագի վիլայեթի Բյունյան կազայի Էյրիք գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1281 թ.:

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ	
Գրասեն- յակի №-ը	Կարգի №-ը

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասեն- յակի №-ը	Կարգի №-ը	ԽՆՀԻՇ ԺԱՄԻՆ Է ԴՐՎԱԾ	ԲՈՂՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՍՈՌԱԳԻՐԸ	ԿԱԶՄՈՂԸ	ԳԵՄԸ	ՄԿԱԳՐՈՒ- ԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ	ՄԱՐՐԱ- ԴՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ
1634	2057					1331 թ. շաբան 20	1331 թ.

Արդարադատության և դավանաբերի  
բարեր մինիստրության

Սվագի վիլայեթի Քերունի կազայում և  
Էջմայլ կազային կից Գարահսար գյուղում  
գտնվող և կայսերական ֆերմանով հաստատ-  
ված հինգ եկեղեցիների վայրերն ու անուն-

ները, ինչպես նաև նրանց կառուցման թվա-  
կանները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա  
հետ ներկայացվում է և խնդրվում, համա-  
ձայն օրենքի, անհրաժեշտ կարգագրությու-  
նը: Այդ մասին հրամանն ու ֆերմանը նորին  
Վսեմությանն է պատճենում:

## Գ Ե Ր ՈՒ Խ Ի Ն

Թղթի թիվը՝ 1964:  
Կցված է 1331 թ. ապրիլ 21-ի  
№ 2057 թարրիրին:

Կառուցման թ.

1. Սվագի վիլայեթի Քերոսինի կազայում Ս.  
Աստվածածին եկեղեցին, 1256 թ.:
2. Սվագի վիլայեթի Քերոսինի կազայում  
Չափսոր գյուղի Ս. Փրկիլ եկեղեցին,  
1310 թ.:

3. Սվագի վիլայեթի Քերոսինի կազայում Օ-  
րենի գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց  
4. Սվագի վիլայեթի Քերոսինի կազայում  
Ղեղոլի գյուղի Ս. Հակոբ եկեղեցին,  
հնուց:
5. Սվագի վիլայեթի Քերոսինի կազայում  
Գարաջիսար գյուղի Ս. Սարգիս եկեղե-  
ցին, հնուց:

## Ս Վ Ա Զ Ի Վ Ի Ա Ց Ե Թ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐքԱՅԻՆ  
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

ԳՐԱՍԵՆՅԱ- ԿԻ Ն-Բ	ԿԱՐԳԻ Ա-Բ	ԻՆչ- է զրգած	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊՈՏԱԳԻՐԸ	ԿԱԳՄԱՆԴՐ	ԳԵՄԸ	ՄԵԱԳՐՈՒ- ԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԱԾ	ՄԱՔՐԱ- ԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԱԾ
303	1974					1330 թ. ԳԵՄՐՎԱՐԻ 12	ՆՈՒՅՆԸ

Արդարադատության և դավանանքների  
բարձր մինիստրության

Սվագի վիլայեթի Կանդալ-Թենաս և Դա-  
րենդե կաղաներում և նրանց հարակից գյու-  
ղերում գանվող կայսերական ֆերմանով

շհաստավված 22 եկեղեցիների վայրերը, ա-  
նունները և կառուցման թվականները ցուցնող  
մեկ օրինակ ցուցակը սրան կից ներկայաց-  
վում է և խնդրվում օրենքի համաձայն հարկ  
եղած կարգադրության մասին Զեր հրամանը:

## Ս Վ Ա Զ

Առանց ֆերմանի՝ 22,  
Կցված է 1330 թ. գետրվար 12-ի № 1976 թարրիրին,  
303  
439  
Կառուցման թ.

- 1.
2. (Չնշված է)
- 3.
4. Սվագի վիլայեթի Կանդալի կազայի Ման-  
շիլիք գյուղում Ս. Թորոս եկեղեցին,  
286 թ.:
5. Սվագի վիլայեթի Կանդալի կազայի Մա-  
ղարա գյուղում Ս. Աստվածածին եկե-  
ղեցին, 668 թ.:
6. Սվագի վիլայեթի Կանդալի կազայի  
Յարհիսար գյուղում Ս. Թորոս եկեղե-  
ցին, 682 թ.:
7. Սվագի վիլայեթի Կանդալի կազայի  
Մուրսալ գյուղում Ս. Աստվածածին եկե-  
ղեցին, հնուց:

8. Սվագի վիլայեթի Կանդալի կազայի Աք-  
շա-կալա գյուղում Ս. Սարգիս եկեղե-  
ցին, հնուց:
9. Սվագի վիլայեթի Կանդալի կազայի Բո-  
զարիմատ գյուղում Ս. Սարգիս եկեղե-  
ցին, 1294 թ.:
10. Սվագի վիլայեթի Թենոսի կազայի Ղա-  
ղի-մաղարա գյուղում Ս. Հակոբ եկեղե-  
ցին, 1277 թ.:
11. Սվագի վիլայեթի Թենոսի կազայի Կուրդի-կայա գյուղում Ս. Փրկիլ եկեղե-  
ցին, 1271 թ.:
12. Սվագի վիլայեթի Թենոսի կազայի Փա-  
շա-քյոյ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին,  
1273 թ.:
13. Սվագի վիլայեթի Թենոսի կազայի Փա-  
թեր գյուղում Ս. Աստվածածին եկեղե-  
ցին, 671 թ.:
14. Սվագի վիլայեթի Թենոսի կազայի Կա-  
րա-գյուղ գյուղում Ս. Աստվածածին եկե-  
ղեցին, 682 թ.:

15. Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Կարագում գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1276 թ.:
16. Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Բահարօղե գյուղում Հայոց եկեղեցին, 694 թ.:
17. Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Կանթարող գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 694 թ.:
18. Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Թեքսին գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1297 թ.:
19. Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Թոփուզ գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1265 թ.:
20. Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Լիսանի գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1305 թ.:
21. Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Օլալ գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1264 թ.:
22. Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Գյոմրուք գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, Հնուց:
23. Կրկին Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Գյոմրուք գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, Հնուց:
24. Կրկին Սվազի վիլայեթի Թենոսի կաղայի Գյոմրուք գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, Հնուց:
25. Կրկին Սվազի վիլայեթի Դարենդե կաղայի Աշոտի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1258 թ.:

### ՍՎԱԶԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԱՎԱՐԱՐՈՒՄ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ  
ԳՐԱՄԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿ

ԳՐԱՄԵՆ- ՑԱԿԻ Ն ԽԱՐԳԻ ՀՆՀ-Ը	ԿԱՐԳԻ ՀՆՀ-Ը	ԻՆՉԻ ԺԱՄԱՆ Է ԳՐՎԱՃ	ԲՈՂԱՆՊԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊՈՊՈՎԱԿԻՐԸ	ԿԱՐԳՄԱ- ՆՈՂԵՐԸ	ՊԱՄ- ՊԵՐԸ	ՄԱԿՐՈՆ- ԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ	ՄԱՐՐԱ- ՉՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ
135	1975					1330 թ. փետրվարի 12	1330 թ. փետրվարի 12

Արդարադատության և դավանանքների բարձր մինիստրության

Սվազի վիլայեթի Գարահիսարի-Շարքի սանարում և նրան Հարակից գյուղերում գտնվող և կայսերական ֆերմանով Հաստատված վեց եկեղեցիների անունները և կայսերական ֆերմանի թվականները, ինչ-

պես նաև կայսերական ֆերմանով Հաստատված 34 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող սույն ցուցակը երկու օրինակով սրա հետ ներկայացվում է և օրենքի համաձայն Հարկ եղած կարգադրության համար Զեր միջնորդությունը խնդրվում:

### ՍՎԱԶԻ

Ֆերմանով՝ 6:

Առանց ֆերմանի՝ 34:

Կցված է 1330 թ. փետրվար 12-ի № 1975 բարքերին:

$\frac{135}{915}$

Կառուցման թ.

1. Գարահիսար-Շարքի սանչաքի Անգրեաս գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 595 թ.:

2. Գարահիսար-Շարքի սանչաքի Անգրեաս գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1274 թ.:

3. Գարահիսար-Շարքի սանչաքի Յենի-քյոյ գյուղում Ս. Հովհաննես եկեղեցին, 1276 թ.:

4. Գարահիսար-Շարքի սանչաքի Սիս գյուղում Ս. Առաքելոց վանքի Հայոց եկեղեցին, 509 թ.:

5. Գարահիսար-Շարքի սանչաքի Համամ գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1302 թ.:

6. Գարահիսար-Շարքի սանչաքի Զորքաք գյուղում Ս. Սահակ եկեղեցին, 1315 թ.:

7. Գարահիսար-Շարքի սանչաքի Փորք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1265 թ.:

8. Գարահիսար-Շարքի սանչաքի Փորք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 680 թ.:

9. Գարահիսար-Շարքի սանչաքի Սիշաղնոս գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1233 թ.:

10. Գարահիսար-Շարքի սանջաքի Միշադնոս գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1268 թ.:
11. Գարահիսար-Շարքի սանջաքի Ղիթանոս գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1251 թ.:
12. Գարահիսար-Շարքի սանջաքի Էսկի-շեհիր գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1272 թ.:
13. Գարահիսար-Շարքի սանջաքի Աք-շեհիր-Արատ կազայի Գոմեշուոն գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, ֆերմանը՝ 1286 թ. սեփեր 21:
14. Գարահիսար-Շարքի սանջաքի Աղբենոս գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, ֆերմանը՝ 1249 թ. ուամազանի վերջը:
15. Գարահիսար-Շարքի սանջաքի Ալամոնիք գյուղում Ս. Գրիգոր Լուսավորիլ եկեղեցին, 1252 թ.:
16. Գարահիսար-Շարքի սանջաքի Խորափք գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1286 թ.:
17. Գարահիսար-Շարքի սանջաքի Աղբետերպիր (ստորին) գյուղում Ա. Աստվածածին եկեղեցին, 1264 թ. շաբանի սկիզբը:
18. Գարահիսար-Շարքի սանջաքի Ս. Նշան վանքում Ս. Նշան եկեղեցին, 1278 թ.:
19. Գարահիսար-Շարքի սանջաքի Ղերազ գյուղում Ս. Համբարձում եկեղեցին, 1284 թ.:
20. Գարահիսար-Շարքի սանջաքի Ազբետեր-Բալա (վերին) Ս. Երորդություն եկեղեցին, շեմադի-ուլ-ախըրի 16:
21. Գարահիսար-Շարքի սանջաքի Սուշեհրի կազայի Սոյինդիք գյուղում Ս. Հովհան-Պոկրերան եկեղեցին, 1275 թ. շեմադի-ուլ-ախըրի սկիզբը:
22. Գարահիսար-Շարքի սանջաքի Թիմլուզ գյուղում Ս. Գրիգոր Լուսավորիլ եկեղեցին, 1290 թ.:
23. Գարահիսար-Շարքի սանջաքի Ավսոնդո գյուղում Ս. Մտեփանոս եկեղեցին, 1325 թ.:
24. Գարահիսար-Շարքի սանջաքի Արանա գյուղում Ս. Պետրոս-Պողոս եկեղեցին, 1290 թ.:
25. Գարահիսար-Շարքի սանջաքի Աղվանիս գյուղում Ս. Կոռք եկեղեցին, 679 թ.:
26. Գարահիսար-Շարքի սանջաքի Լիթարիկ գյուղում Ս. Գրիգոր Լուսավորիլ եկեղեցին, 1297 թ.:
27. Գարահիսար-Շարքի սանջաքի Զիբրի գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1282 թ.:
28. Գարահիսար-Շարքի սանջաքի Թոսիդ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 699 թ.:
29. Բուն Գարահիսար-Շարքիում Ս. Աստվածածին եկեղեցին, 1307 թ.:
30. Բուն Գարահիսար-Շարքիում Քաղաքի ծայրամասում Քոփելի թաղամասում Ս. Փրկիլ եկեղեցին, 1274 թ. սեփերի կեսին:
31. Գարահիսար-Շարքի սանջաքի Աներղի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 699 թ.:
32. Գարահիսար-Շարքի սանջաքի Զարգախ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1238 թ.:
33. Գարահիսար-Շարքի սանջաքի Թեմզերի գյուղում Ս. Գևորգ Վանքի հայոց եկեղեցին, 1305 թ.:
34. Գարահիսար-Շարքի սանջաքի Թեմզերի գյուղում Ս. Թագավոր եկեղեցին, 1252 թ.:
35. Գարահիսար-Շարքի սանջաքի Թեմզերի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1220 թ.:
36. Գարահիսար-Շարքի սանջաքի Քյոլլի-2իսար գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1266 թ.:
37. Գարահիսար-Շարքի սանջաքի Մեսուղիյե գյուղում Ս. Լուսավորիլ եկեղեցին, 1298 թ.:
38. Գարահիսար-Շարքի սանջաքի Մուհամմեդ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1256 թ.:
39. Գարահիսար-Շարքի սանջաքի Մուհամմեդ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1266 թ.:
40. Գարահիսար-Շարքի սանջաքի Դեմիրշիլ գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:

(Ծարունակելի)

## ՔԱՂԱՔԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ\*

Ուրարտուի ռազմաստրկատիրական պետության կործանման հետ քաղաքային կյանքը միաժամանակ անկում ապրեց. բայց հայ ժողովուրդը, ժառանգելով և զարգացնելով ուրարտական տրագիֆիաները, կերտեց նոր քաղաքներ ու ավաններ, շատ զետքերում հին կառուցապատման հիմքի վրա (օրինակ՝ Տուշպա—Վան, Արգիշտիխնիլի—Արմավիր)՝<sup>17</sup>:

Սարկատիրական ժամանակաշրջանում հավանաբար Սյունիքում ևս կային քաղաքատիպ բնակվայրեր, ամրոցներ և հանգրվաններ հասարակական-տնտեսական նույնպիսի հարաբերություններով, ինչ որ Հայաստանի այդ ժամանակվա մյուս երկրորդական քաղաքներին էր Պաամությունը համարյա լուս է այդ մասին. պետք է ենթադրել, որ Սյունյաց հնագույն գահանիստ ավանը՝ Սյունին (այժմ Սիսիան) եղել է այնպիսի բնակվայրերից մեզր, կամ թե մինչ այդ կենտրոն հանդիսացող Շաղատին կից Անգեղակոթ պավանը:

Վազ ավատականության ժամանակ իշխող վերնախավի կյանքը սահմանափակված էր բնակարան-ամրոցներում, որոնց շուրջը, ամենայն հավանականությամբ, տարածվում էին փոքր, բարեկարգ գյուղաքաղաքաներ՝ «գեղեղեցկայրմար աւանք շինից», ուր իշխաններն ու իշխանազունները խաղում էին «ի վերայ սովորական թատերացն, ի լերինս որսասուն և բաղմաջոլիր վայրացն Սիւնեաց»<sup>18</sup>: Վազ ավատականության ժամանակաշրջանի ավաններից Ս. Օրբելյանը հիշատակում է Շաղատի, Շաքի, Աղխիտուի, Մրենի ավան

\* Տարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № Ժ-ից:

<sup>17</sup> Ուրարտական քաղաքաշինարարական տրագիֆիաների ժառանգման մասին տե՛ս Ս. Սահիկյան, «Քասախի բազիլիկայի ճարտարապետությունը», Երևան, 1955, էջ 190, 236—238:

<sup>18</sup> Ս. Օրբելյան, Եղված աշխատությունը, էջ 41, 43.

գյուղաքաղաքի և Ուզձի մասին, որոնց միջև տարբերությունը մեծ չլինելով, նրանց առաջնորդյան հարցը վիճարանության առարկա է եղել<sup>19</sup>:

Վազ ավատականության շրջանի այս բնակվայրերի ծաղկումից հետո, տնտեսական-քաղաքական կյանքի անմիջական ներգործության պայմաններում, Սյունիքում քաղաքային կյանքը վերելք չունեցավ մինչև զարգացած ավատականության ժամանակաշրջանը (թ.—ժԳ դ. դ.), երբ Հայաստանն զգալի չափով ձերբագատվեց բնատնտեսական կաշկանդումներից: Այդ ժամանակի Հայաստանը կարևոր դեր է ունեցած կատարում Արևելուտքի և Արևելքի առևտորական հարաբերությունների մեջ և իրեն միջնորդ, և իրեն մասնակից սեփական արտադրանքով: Այդ ժամանակի հողի լիակատար սեփականատերեր էին ազնվականները. թագավորի իրավունքն այդ հարցում ձևական բնույթ էր կրում: Իր գյուղական համայնքը, աճում էին վանքապատկան հողերը: Զնայած Սյունիքի բնական որոշ մեկուսացվածությանը, թ.—ժԳ գարերում քաղաքային կյանքի զարգացումն այնտեղ ևս իր արտահայտությունը գտավ լեռնային մակերեսուլիթի թուլյատրած չափերով: Տեղական ճանակարհների միջցով, միշագգային առևտորական հարաբերությունների մեջ էր մտնում երկրի արտագրական պրոգրամների մեջ էր առնելու արդեստագործական մետաղագործական և արհեստագործական այլ ապրանքներ:

Այդ ժամանակ բերգերի տակ աճում էին Սյունիքի ավատական ավանները կամ գյուղաքագները, ի հաշիվ գյուղերից փախլող ունեղրկված գյուղացիների, իրենց արտադրանքի համար վաճառքի շուկա որոնող ար-

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 48, 49. վիճարանությունը կրոնական բնույթ կրելու պատճառով. Սիսականը չի հիշատակված այստեղ:

Հետապորների և ավանամերձ տարածությունները մշակող հողագործների: Ավանային վերնախավը, կաղմած ազնվականներից ու հոգեռականներից, փոքրամասնություններ կազմում: Թաղաքային տնտեսության մեջ վերընթաց զարգացում էր ապրում ապրանքային տնտեսությունը: Թաղաքը զարգանում էր իրեւ դաշտական տնտեսական կենտրոնը, միաժամանակ հանդիսանալով տիրող ազնուվականի հարստացման և դորեղացման աղբյուր:

Թաղաքային կյանքը վարվել է կիսախնքնավար ձևով, քաղաքային վարչությունների միջոցով և առասարակով ոչ միայն քաղաքների, այլև բերդերի և ավանների բնակիչներն ազատ են եղել ճորտական պարտավորություններից, ունեցել են բնակության և աշխատանքի վայրը փոխելու, ցանկացած զբաղմունքն ընտրելու իրավունք, թեև ունեցել են պարտավորություններ բնակավայրի ամրությունները վերանորոգելու և կառուցելու տեսակետից<sup>20</sup>: Աշխատավոր գասիր այս մարդկանց ձեռքբերով էին կառուցված բնակավայրերի դգալի մասը, իրենց պահանջաներով այժմ իսկ զարմացնող մոնումենտալ կառուցները:

Թաղաքատիպ բնակավայրերին փոքր ինչ հանգամանորեն ծանոթանալու համար, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նրանց վերաբերյալ եղած սակավաթիվ տրվածները:

**ԾԱՂԱՏ.**—Հայտնի է, որ Սյունյաց Շաղատ ուստանը այժմյան Շաղատ գյուղից փոքր ինչ հյուսիս է տեղավորված եղել: Հանգիսանալով վարչական և հոգեռոր կենտրոն, այն, անտառակույս, պիտի հանգիսանար երկրի մշակույթի, մասնավորապես շինարարական արվեստի խոշորագույն կենտրոն: Թերևս այդ էր պատճառը, որ է դարում Սիսականի տաճարի նման կատարյալ հուշարձան երևան եկավ գրեթե անմիջապես կից գտնվող վայրում:

Հավանաբար է դարում արդեն Շաղատը գագարել է վարչական կենտրոն հանգիսանալուց: Այն աստիճանաբար կորցրել է իր նշանակությունը իրեն մեծ բնակավայրը. 727 թվականին արդեն հիշվում է որպես «բերդագիւղ Շաղատու», որը գելուս շարունակում էր կարևոր նշանակություն ունենալ իրեն ուղմական հենարան:

Շաղատը և Շաղատոն վանքը առանձին-առանձին հիշված են Ս. Օրբելյանի հարկային ցուցակում. ուստի պետք է ենթադրել, որ դրանք գոյություն են ունեցել նաև ժառում: Հատ հարկի շափի, այն հավասարվում

<sup>20</sup> Բ. Առամելյան, նշված աշխատությունը, էջ 90:

է այն ժամանակվա Ծղուկ գավառի ամենամեծ բնակավայրերին, որոնք անշուշտ բոլորն էլ գյուղատիպ էին:

Ներկայիս Շաղատ գյուղը ոչ մի առնչություն չունի հնի հետ. այն պարսկահայ գաղթականների կողմից կառուցված մի խղճուկ գյուղ է եղել:

Գտնվելով նախիշեան—Պարտավ և Վայոց ձորից իջնող ճանապարհների հանգուցակետում, Շաղատը հանդիսացել է ուղղմական կարեռ հենակետ, որի մասին վկայում են մոտակա ամրոցների ավերակները: Թաղաքում, Ս. Օրբելյանի վկայությամբ, լճափնյա թաղեր են եղել և այնտեղ են դարում կանգուն է եղել «Մայր եկեղեցեաց» կուլող տաճարը<sup>21</sup>: Նշանավոր է եղել Շաղատի վարդապետարանը:

**ՍԻՍԿԱՆ.**—Համեմատաբար ավելի շատ տեղեկություններ կան Սիսավանի մասին: Գահանիստը Շաղատից այնտեղ է տեղափոխվել մեր կարծիքով ոչ ուշ քան Եղարի վերջը: Հ. Դ. Ալիշանը կարծիք է հայտնում, որ թերևս սա ավելի վաղ է գահանիստ հանդիսացել, քան Շաղատը<sup>22</sup>: Բ. Առաքելյանը և նշում է, թե հնարավոր է, որ հենց հին ժամանակներից Սյունյաց հշխանները երկու գահանիստ ունեին<sup>23</sup>:

Այս բնակավայրը հնում կոչվել է Շաղական, հետադայում Սյունիք կամ Սյունի, Սիսավան կամ Սիսական և Սրսիան: Սիսիանի շարաթիկիսա անունը վերջին դարերում է առաջացած:

Թ գարի վերջին գահանիստը տեղափոխվեց Եղեգիս, բայց Սիսավանը չկորցրեց իր նշանակությունը իրեն գյուղաքաղաք. այն հանդիսացել է մոնղոլական վարչական կենտրոն Սյունիքի համար, որը ժգ դարում թաշունուին դուրս կառավարի իշեանել է կիլիկյան հայոց Հեթում թաղավորը Մանգու ինանի մոտից վերադառնալիս<sup>24</sup>: Հետագայում այն եղել է մելիքանիստ նախ Սախ Սաֆրազբեկյանների և ապա Մելիք-Թանգավանների տոհմերի, որոնք ենթակվել են կամ նախիշեանի, կամ Շուշչու խաններին<sup>25</sup>: Սակայն այդ ժամանակներում հետզհետե նրա նշանակությունն ընկավ, իշելով մինչև կոր գոյուղի մակար-

<sup>21</sup> Ս. Օրբելյան, նշված աշխատությունը, էջ 34, 42, 43, 44, 48:

<sup>22</sup> Հ. Դ. Ալիշան, «Սիսական», էջ 214:

<sup>23</sup> Բ. Առաքելյան, նշված աշխատությունը, էջ 91:

<sup>24</sup> Ս. Թարխուղարյան, «Ժիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 85:

<sup>25</sup> Կրտակոս Գանձակեցի, «Պատմություն հայոց», Երևան, 1961, էջ 370:

<sup>26</sup> Ե. Լալայան, «Սիսիան», էջ 116—122:

դակը, կորցնելով երբեմնի փառահեղ շինությունները<sup>27</sup>:

Շաղատից հետո Սիսավանը նախիջևան—Պարտավ ճանապարհի երկրորդ մեծ ճանգըրվանն է եղել: Հավանաբար պաշտպանական նկատառումներով է, որ գահանիստն այստեղ է տեղափոխվել Շաղատից, որը գտնվում էր երկրի արևմտյան սահմանին անմիջապես կից վայրում: Այժմյան Սիսիանի բարձրադիր մասում, պատմիչի ասելով, տեղավորված է եղել վանքը, որից մինչև այժմ կանգուն է մնացել է զարում կառուցված գեղակերտ տաճարը. նրանից ցածր, «քաղցրահայեց մէրանս-ի մեջ գտնվելիս է եղել ապարանքը և ապա, ստորին մասում, ավանի բնակելի մասը<sup>28</sup>:

ԿԱՊԱՆ.—Կապանի իշխանանիստ գյուղաբաղաբ է եղել երկրի հարավային մասում, Ժ դարում այն դարձավ քաղաք, իսկ ԺԱ դարի սկզբին հանդիսացավ Սյունիքի թագավորության մայրաքաղաքը, իր անունը փոխանցելով թագավորությանը: Այն ավերվել է 1103 թվականին ասպատակող սելցուկների կողմից:

Մետաղագործությամբ, արհեստներով և առևտորվ ծաղկուն այդ բնակավայրը սելցուկների ավերումից հետո դադարում է քաղաք լինելուց և մոտ յոթանասուն տարի նրան փոխարինում է մոտակա Բաղաբերդ ամրոցը, մինչև 1170 թվականը, մինչև Ժ դարը՝ մոտակա Աճանանը<sup>29</sup>:

Կապանը Սյունյաց իշխանական ոսահաններից ամենից ամրացվածն ու իր դիրքով անառիկն էր: Այն գտնվում էր երկրի հարավում, լեռնաջղաթաներով ու լեռնազանգվածներով շրջապատված, ու սահմանամերձ վայրում: Նրա ավերակները գտնվում են Ողջի գետի Ազափինյա բարձրադիր մասում, Աշուլու գյուղի դիմաց, Տանձուկնջ կողված վայրում, որտեղից անցել է Ղափանից Քաջարան տանող հին ճանապարհը: Այսաեղով է անցել Մեղրուց Տաշտունի (Դիպաքլուի)

<sup>27</sup> Սովետական իշխանության տարիներին միայն Սիսիանի նշանակությունն սկսեց անձեւ իրեն շրջկենտրոն, մանավանդ այնտեղ օդանավակայան հիմնելոց հետո: Այժմյան Սիսիանը հնից գրեթե ոչնչ լունի: այն հանդիսանում է Սովետական Հայաստանի բարեկարգ քաղաքատիպ ավաններից մեկը մշակութային հիմնարկներով, սննդի ու թեթև արդյունաբերությամբ:

<sup>28</sup> Ս. Օրբելիան, նշված աշխատությունը, էջ 338:

<sup>29</sup> Աճանանը մեծ բնակավայր է եղել, որը հայտնաբերել է Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը այդ և այլ բնակավայրերի մասին նրա նյութերը շուտով լույս կտեսնեն: Այս և այլ նյութերի մասին նրա արժեքավոր խորհուրդների համար խորին շնորհակալություն ենք հայտնում:

Լեռնանցքով դեպի երկրի խորքերը գնացող ճանապարհներ:

«Անառիկ ի մարդկանէ» համարվող այս բնակվալությունը ունեցել է եռանկյունաձև, պարսպապատ ու մեծ տարածություն քաղաքունով, «որ ի խնձորոյ գլուխ հայէրութարձրադիր մասում, ապառաժուտ լեռան գլուխ իշնող հեղեղատի կողմը ուղղ էր պարսպափակ վասն անհնարին գոլոյ մտից մարդկան», —նշում է պատմիչը: Քաղաքի ներսում եղել են թաղեր, որոնցից մեկը, ինչպես Հայաստանի միջնադարյան քաղաքներում, հատկացված է եղել Հրեաներին կողմից է ԶՀամաթաղութարձրադիր մեղել է նաև անառիկ միջնարերը: Այդ որոշությունը մնացել են արևելյան կողմի պարսպի հետքերը, նրա աշտարակներից շորսի հիմքերը 2—2,5 մետր բարձրությամբ: արևմտյան կողմում ևս կան ամրությունների հետքեր: Քաղաքի տարածության մի մասը դաշտի է վերածվել, իսկ մյուսը ծածկվել անտառով<sup>30</sup>:

ԵՂԵԳԻՒՄ.—Սյունիքի իշխանական գահանիստերից է նաև եղեգիք կամ եղեգիս բնակավայրը, որի կառուցման ժամանակը հայտնի է: Ուղղ է յայտ ժամանակ շինութեան եղեգեաց, այլ գուշակի մի ի հնագոյն շինից աշխարհին Սիւնեաց լինել և աթոռ գաւառապետին, և ալսպես կոչեցեալ վասն եղեգնարեր եղտիրից կողմանցն», —գրել է Հ. Ղ. Ալիշանը նոր մասին<sup>31</sup>:

Եղեգիսի ամենածաղկուն շրջաններն են եղել Սյունյաց թագավորության սկզբի (Ժ ժ գ. դ. դ.) և Օրբելյանների տիրապետության (Ժ դ դարից մինչև Ժ ժ դարի վերջ) ժամանակաշրջանները: Այդ ժամանակներին են վերաբերում մեզ հասած կառուցները, որոնց գգալի մասի գահանիստին վայել ճոխությունն ու գեղեցկությունը, ացորենի ամբարներ, ագինու գուբերն, «այգիներ» և «ծաղկոցներ»<sup>32</sup> ունեցող բնակավայրի մի քանի կիլոմետր տարածվող ավերակները վկայում են նրան տրված նշանակության մասին: Պաաահական չէ, որ այն գյուղաքաղաք և նույնիսկ մայրաքաղաք է կոչվել: Ս. եպիսկոպոս Զալալյանը այն «Ճախաքար քաղաք» է անվանում<sup>33</sup>: Քաղաքի մեծության մասին է վկայում Ս. Օրբելյանի այն հաղորդումը, որ Ժ դարի առաջին կեսում, Սյունյաց Սմբատ իշխանը, արաբներին դիմադրելու համար,

<sup>30</sup> Ս. Օրբելիան, նշված աշխատությունը, էջ 334:

<sup>31</sup> Տե՛ս նաև Թ. Խ. Հակոբյան, նշված աշխատությունը, էջ 201:

<sup>32</sup> Հ. Ղ. Ալիշան, «Սիսիան», էջ 146:

<sup>33</sup> Ս. Օրբելիան, նշված աշխատությունը, էջ 193, 260:

<sup>34</sup> Ս. Եպիսկոպոս Զալալյան, «Ճախաքարհարդության ի Մեծն Հայաստան», մասն թ, Տիգրիս, 1858, էջ 151:

այստեղ կարողանում է կուտակել թշնամուն սահմանակից ամբոխս բազումս սպալակոյութում<sup>35</sup>:

Քաղաքը կործանվել է մի քանի անգամ, որոնցից հայտնի են Ժ գարի սկզբին արարաների կողմից և այնուհետև նույն դարում երկրաշարժի ավերումները Օտարների և հայազնվականների հետ տեղի ունեցող բախումները առավել ևս նվազեցրել են քաղաքի պարգացման հնարավորությունները:

ԺԱ դարում, Սյունիքի վարչական կենտրոնը տեղափոխվեց Կապան։ Օրբելյանների իշխանության ժամանակ, այն կրկին վարչական կենտրոն հանդիսացավ մինչև Ժ գարը, երբ Տարսային իշխանը տեղափոխվեց Արփա։ Եղեգիսի վերջին կործանումը, Հ. Եղիագարյանի ենթագրությամբ, եղել է Ժ գարի վերջերին<sup>36</sup>։ Այն հանդամանքը, որ այստեղ 1708 թվականին կառուցվել է եռանավ, բազի լիկ եկեղեցի, ցուց է տալիս, որ այստեղ բնակությունը չի դադարել, թեև այն իշել է գյուղական մակարդակի։

Եղեգիսը — Դվին — Պարտավ ճանապարհի հարավային ճյուղի վրա խոշորագույն բնակավայրն է հանդիսացել։ Նրա ավերակները գտնվում են Եղեցիս (Ալայազ) գետի աջափենյա, արևմուտքից հարավ-արևմուտք թթեվող մասում, ուր ձորը բավականաշափ լայնանում է. այդ ավերակների մեջ է տեղավորված ներկայիս Ալայազ կոչվող փոքրիկ գյուղը։ Այստեղից սկսած, գետի հունով դեպի հարավ-արևմուտք ավերակները մի քանի կիրամետը տարածվելով, հասնում են մինչև Ռոտինք (Հոստիոն) գյուղատեղը<sup>37</sup>, Սյուն մասում Ս. Եպիսկոպոս Զալալյանը տեսել է ընդարձակ փողոցների հատվածներ և երբեմն ճոխությամբ լցած կրպակների ու այլ հոյակապ շինվածքների մնացորդները<sup>38</sup>, նույնպիս տեղեկություններ է արձանագրել նաև Հ. Ալիշանը<sup>39</sup>։

Քաղաքի հյուսիս-արևմտյան մասում, ավելի քան մեկ կիլոմետր անգնդախոր ձորերի միջև ձգված բարձրադիր լեռնաճյուղի վրա, բավականաշափ բնագրածակ տարածություն է բռնում ամրոցը։ Նրա ստորոտում, քաղաքի ավերակներից բարձր տեղավորված է եղել հիմնական գերեզմանատունը։ Այստեղ 1340 թվականին կանգնեցված մահար-

<sup>35</sup> Ս. Օրբելեան, նշված աշխատությունը, էջ 199.

<sup>36</sup> Հ. Եղիագարյան, նշված աշխատությունը, էջ 57.

<sup>37</sup> Ե. Լալայան, «Եղարության պարագայությունը» գավառ, Ալղագըական հանդիս, 12-րդ գիրք, Թիֆլիս, 1905, էջ 27։

<sup>38</sup> Ս. Եպիսկոպոս Զալալյան, նշված աշխատությունը, էջ 151։

<sup>39</sup> Հ. Ալիշան, «Սիսական», էջ 148.

ճանային շինությունից ոչ այնքան հեռու, գտնվում է մեծահատոր մի վեմ, որի գագաթը կոփված, հարգարված է ու զետեղված ծաղկածին և մարգարտարոտ վայրում, շըրջապատված թափաթուի մայրիներով՝ խրախճանքի օրերի համար, ուր կարող են տեղավորվել ավելի քան երեսուն այրության ցանցի վարչական գաղափարի մոտ, Մըրատ Օրբելյան իշխանի մակագրությամբ։ Քաղաքի այս մասում մասին հիշատակում է պատմիչը<sup>40</sup>, մնացել է միայն մի գարբասի կամարակալ քար, որն ընկած է Ալայազ գյուղի արևելյան ծալրում, ճանապարհի մոտ, Մըրատ Օրբելյան իշխանի մակագրությամբ։ Քաղաքի այս մասում նաև գտնվում նաև եկեղեցիները, որոնցից նշանավոր է Ս. Օրբելյանի կառուցած Ս. Ջորաց եկեղեցին։ Այս մասում քաղաքը ձորամիջյան պարիսպներով է ավարտվել։

Այսպիսով, որոշակի հատակագծային սիստեմ կա բնակավայրի ընդհանուր կառուցապատման մեջ, ուր իշխում է ամրոցը և որի արևելյան ստորոտում տարածվել է բնակավայրը, ընդ որում տարբեր բնույթի հասարակական շենքերն ու ապարանքները կենտրոնացված են եղել հյուսիս-արևելյան մասում, որտեղ ձորը բավականաշափ ընդարձակ է և ավելի մոտ սնրոցի մուտքին։ Դատելով ավերակներից, կարելի է ասել, որ աշխատավոր ժողովրդի դրադեցրած մասը շափազանց խիտ է կառուցապատվել, ճիշտ այնպես, ինչպես Սյունիքի և առհասարակ Հայաստանի լեռնային զրշանների գյուղերն էին։

ԱՐՓԱ. — Դվին — Պարտավ ճանապարհի հարավային ճյուղի վրա, Սյունիքի սահմաններում, առաջին մեծ բնակավայրն է հանդիսացել Արփան կամ Առփան։ Տարսային Օրբելյանի կառուցած պալատական կոմպլեքսն ու եկեղեցին գտնվելիս են եղել ներկայիս Արփենի գյուղից փոքրինչ արևելք, Արփա գետի ձախ ափին, բարձունքի տակ գտնվող ոչ այնքան մեծ բլրի վրա։ Բնակավայրը տարածվել է այս բլրի ստորոտում, որտեղից, պարբերական հեղեղումներից խուսափելու համար, գյուղը տեղափոխել են փոքրինչ արևմուտք։ Նշանավոր է Տարսային իշխանի հրամանով նորավանքի եպիսկոպոս Տեր Սարգսի կառուցած հոյաշեն, եռաթուիչը կամուրջը, որի սվերակները գտնվում են Արփա

<sup>40</sup> Ս. Եպիսկոպոս Զալալյան, նշված աշխատությունը, էջ 155։

<sup>41</sup> Հ. Եղիագարյան, նշված աշխատությունը, էջ 63։

<sup>42</sup> Ս. Օրբելեան, նշված աշխատությունը, էջ 199։

գետի աջ ափին, Արծնիից մոտ մեկ կիլոմետր գետի հյուսիս-արևելք:

ԿՈԹ (Կնիք).—Գեղարքունիքի քաղաքներից ու ավաններից ոչ մեկը չի հասել մեզ այնպիսի գրությամբ, որ Հնարավոր լիներ պարզել նրանց կառուցման առանձնահատկությունները: Պատմական աննշան տեղեկություններից որոշ րան պարզվում է միայն Կոթի մասին: Այն գտնվելիս է եղել Դվին—Պարտավ ճանապարհի երկու ճյուղերի միանալու աեղին շատ մոտ: Ս. Օրբելյանի հաղորդած տեղեկությունների համաձայն, այժմյան բնակավայրի արևմայան ծայրին, Սյունյաց իշխան Գրիգոր Սուփանի կառուցած Ս. Աստվածածին վանքի բարձունքը իշխանական կացված (դղյակ) է եղել, պարզսպապատված մեծ ծախսերով ու աշխատությամբ<sup>43</sup>: Ըստ երևույթին նրա ստորոտում, զետի ափով դեպի արևելք տարածվել են քաղաքավանի կառուցները, որոնց մնացորդների վրա կառուցված է այժմյան Գետաշեն գյուղը: Ս. Ամրատյանը հիշում է յոթ եկեղեցիների ավերակների գոյությունը և իրավամբ նշում, որ եկեղեցիների ու ավերակների շատությունը ցույց է տալիս քաղաքատեղիները<sup>44</sup>:

Այս սակավաթիվ տվյալներից կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Սյունիքի քաղաքների ու ավանների առաջացումը, զարգացումը և անկումը սերտ կապակցության մեջ է եղել երկրի քաղաքական և սոցիալ-տնախասական կացության ելևէններից: Այստեղ, հարթավայրային շրջանների նման, արտակարգ մեծ քաղաքներ չառաջացան. այդ արդյունք էր երկրի մակերևույթի խիստ կտրտվածության և մանալանդ ուղղական նկատառումների:

Սյունիքի ավաններն ու քաղաքները զարգացել են հնուց և եթ կենցաղային, արտադրական, պաշապանական և հաղորդակցության գյուրություններով աշքի ընկնող տեղերում: Այդ հարմարություններից ամենակարևորներն են տարանցիկ և զիխավոր ճանապարհների կամ նրանց խաշմերուկների մերձավորությունը, առատ ջրամատակարարման հնարավորությունը, ամրությունների կառուցման և բնության ընծայած պաշտպանական հարմարությունները, տեղական արտադրության համար նպաստավոր պայմանները (մերձակա ոռոգութիւնը), գյուղատնտեսական հումք, մետագներ (այլն), հարմար կլիման (ցուրտ քամիների քացակայություն, տեղումների

անհրաժեշտ քանակ ոռոգման հնարավորությունների բացակայության դեպքում և այլն), թեք, ոչ շատ կտրտված տեղանքը (հատկապես ջրահեռացման համար) և այլն, նիտ բնակեցված այս լեռնային երկրում, հիշյալ տիպի հարմարություններ ունեցող նոր վայրեր գտնելու գրեթե անհնար լինելու պատճառով, պավաններն ու քաղաքները զարգացել են հին բնակավայրերի, հատկապես ամրոցների տեղերում և մերձակայթում: Մի հանգամանք, որն ասավելագույն շափով նպաստել է քաղաքաշինարարական տրադիցիաների շարունակական սկահպանմանը տոհմացեղական ժամանակներից, ուրարտական պետության ժամանակներից մինչև հայկական պետականության հիմնումը և ավատական հարաբերությունների բարձր զարգացման շրջանները:

Ինչպես տեսանք, հնագույն բնակավայրերը և անգամ քաղաքները բաղկացած էին քաղաքաշինարարական երկու հիմնական տարրից՝ ամրոց-դղյակից և նրան կից կամ նրան շրջապատող բնակավայրից: Այս ընդհանուր օրենք է եղել ոչ միայն Սյունիքի, այլև ամրող Հայաստանի և բազմաթիվ այլ երկրների համար: Միջնադարում, ավատական հարաբերությունները փոքր ինչ փոխեցին բնակավայրերի կառուցապատման այս կարգը, և արևելյան այլ երկրների նման, Հայաստանի քաղաքներում հանդես եկան քաղաքաշինարարական երեք աարդ՝ ամրոց-միջնաբերդը, շահաստանը և բնակելի արվարձանները<sup>45</sup>: Ըստ որում արվարձանները գյուղունտեսական, արտադրական կարիքների և աշխատավորության բնակեցման համար էին նախատեսված, իսկ շահաստանը՝ իշխող խավի, հոգեռականության, գինվորականության և վաճառականների բնակության և գործառնություններին էր հատկացված: Հետեւապես այն ավելի բարեկտրու էր և ճարտարապետությամբ հարուստ: Այդ քաղաքների կառուցապատման մեջ, հաճախ կանոնավորում էր մտցված հրվանգանի միջնաբերդից քաղաքային դարբասները ձգվող շառավայրին փողոցներով և միջնաբերդությունների շուրջը տարածվող շառավաղացանային փողոցներով<sup>46</sup>:

Սյունիքի բնակավայրերի զարգացումը խթանող յուրահատուկ պայմանները քաղաքատիպ բնակավայրերին հաղորդեցին յուրահատուկ տեսք, որն զգալի կերպով տար-

<sup>43</sup> Ս. Օրբելյան, Եղված աշխատությունը, էջ 177—178:

<sup>44</sup> Ս. Ամրատյանց, նշված աշխատությունը, էջ 528—530:

<sup>45</sup> Հ. Մանենյան, «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1940, էջ 20:

<sup>46</sup> Վ. Հարուրյանյան, «Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական կուլտուրան», «Պատմա-քանասիրական հանդես», 1963, № 3, էջ 86:

բերվում էր Հայաստանի այլ շրջանների կանոնական միօրինակությունից։ Այստեղ բնակավայրերի ղարգացումն ընթացավ կառուցապատման շատ ավելի տպատ եղանակով, խստորեն համապատասխան տեղական կոնկրետ պայմաններին, որոնք տարրերվում էին անգամ իրար նկատմամբ շատ մոտ վայրերում։ Այստեղ ավելի ուժեղ արտահայտված ավատական տիրապետությունը, պալատական շքախմբերի ու իշխանական ընտանիքների սակավությունն անդրադարձավ որոշ ավանների և նույնիսկ քաղաքների կառուցապատման վրա (Կոթ, Արփա)։ Այդ բնակավայրերում շահասանի և արվարձանի բաժանում մենք չենք տեսնում։ այնաեղ պահպանվել է ստրկատիրական ժամանակներից եկող ամրոց-դղյակի՝ իշխանական էկացվածութիւնը և նրան կից բնակելի, խիտ կառուցապատված մասի պարզ համակցումը։ Պահպանողականության այս ցայտուն գրսերման կողքին մենք տեսնում ենք նաև շահաստանի գոյությունը առանձին բնակավայրերում (Եղեգիս), որոնք տնտեսական և քաղաքական կարևորությամբ; զասակարգերի բազմամրուի կուտակումներով, տարբերվել են վերոհիշյալ բնակավայրերից։ Սակայն այս գեպքում էլ շահաստանը նույնը չէր, ինչ որ միջնադարյան Հայաստանի քաղաքների շահաստաններն էին. այնտեղ բացակայում էին հատուկ առեւտրական-արհեստագործական հրապարակները, փողոցները, շարքերը, որոնք այստեղ դանվում էին աշխատավորներին հատկացված ծայրամասերում, որտեղ կենտրոնացված էին ընդհանրապես տնտեսական-արտադրական բնույթի բոլոր գործուղությունները, վայրերն ու շենքերը։ Հետեւաբար, թերեւ ավելի ճիշտ կլիներ ավատական, հոգեկորական և զինվորական դասերին հատկացված մասը ուղղակի թաղ անվանելի

Ինչպես նշեցինք, Սյունիքի ավաններում և քաղաքներում ամրոցը երեմն ներառել է նաև դղյակը, այն կառուցվել է իշխող, քարձրադիր, ոժվարամաշելի այնպիսի տեղում, որտեղ հնարավոր լիներ լեռնարազուկի միշտով ջուր հասցնելի

Ապարանքները, եթե ամրոցից գուրս են եղել, առանձնացվել են աշխատավոր ժողովրդի թաղամասերից, ինչպես այդ տեղի է ունեցել Եղեգիսում։ և հասկանալի է, որ նրանք պիտի ունենալին ամենանպաստավոր դիրք թե՛ պաշտպանության և թե՛ կենցաղային հարմարությունների տեսակետուց։ Նրանք բարձրադրադիր վայրում են եղել այնպես, որ ջրմուղը նախ այնտեղով անցներ և պաշտպանական ամրությունները ամենից ավելի մոտ լինեին։ Բնակավայրի գյուրա-

մատչելի կողմից ճանապարհը նախ մտնում էր աշխատավորների բնակատեղը և ապա միայն հասնում դյուակ կամ ամրոց։ Բարձր խավի թաղում կառուցված եկեղեցիների աշքի են ընկել իրենց գերադանց հարդարմամբ։ Բացառիկ երկույթ է բնակավայրի այդ մասի ծայրում գտնվող Ս. Զորաց եկեղեցին Եղեգիս քաղաքավանում, որը նախատեսված է եղել բացօթյա արարողությունների համար։

Դատելով պահպանված ավերակներից և առանձին պատմական հիշատակություններից, կարելի է ասել, որ աշխատավորներին՝ տերդումարդութիւն՝ հատկացված մասերը բնակավայրի մեծ մասն են գրավել. նրանք տարբեր ընույթի գյուղատիպ շինություններով կառուցապատված են եղել շափազանց խիտ՝ լանջերի վրա տերրասաձև, հարթ տեղերում՝ իրար կպած կտուրներով, ճիշտ այնպես, ինչպես գյուղերումն էր։ Ըստ տեղանքի և կառուցապատման հնարավորությունների, անկանոն փողոցներով նրանք բաժանված են եղել առանձին թաղերի. փողոցները հետեւաբար պետք է եղերված լինեին խուզ պատերով ու ցանկապատերով։ Մեծ բնակավայրերի այսպիսի կառուցապատումը չպետք է տարօրինակ թվա, եթե նկատի ունենանք, որ քաղաքամայր Անիի շահաստանում ևս գոյություն են ունեցել խուզ պատերով եղերված փողոցներու թերևս գյուղերի նման այստեղ ևս բնակիչներն ազգական խմբավորումներով են տեղաբաշխվել թաղերի մեջ։ Ինչպես նշեցինք, հայտնի է հրեաներին հատկացված առանձին թաղի գոյությունը Կապանում։ Առեւտրական շենքերի և շուկաների մասին տվյալներ չունենք, բայց պետք է ենթադրել, որ այդ նպատակին են ծառայել հատուկ հրապարակներ, ինչպիսիք նկարագրում է արար պատմի Ալ-Խոթահին Պարտավի մասին գրած տղերում<sup>47</sup>։ Բնակավայրին կից կամ մերձակայքում հրապարակներ են եղել նաև զորախաղերի և տոնախմբությունների համար<sup>48</sup>։

Նկատի ունենալով պարսպային ամրությունների մնացորդները և պատմական հի-

<sup>47</sup> Տե՛ս Հ. Կարաւոլ, նշված աշխատավորությունը, էջ 9.

<sup>48</sup> Տե՛ս Եղեգիսի վերաբերվող Ս. Խափսկոպս Հալաւանի վերոհիշյալ տեղեկություններն այդ մասին,

Ակնարկելով բների և եկվոր եպիսկոպոսների վարքի մասին, Ս. Օրբելյանը հիշում է տոնախմբությունների հրապարակների և բաց թատերական ներկայացումների գոյությունը Սյունիքում գրելով, որ Սյունյաց եպիսկոպոսները, «ըստ առաքինի և պարկեշտ բարուց իրեանց ոչ ծուժեցին վասն ամբոխի և հրապարակաց հանապազկալ և գեգերի ի թէարոնս» (Ս. Օրբելյան, նշված աշխատավորությունը, էջ 202):


շատակությունները, պետք է ենթադրել, որ պարսպապատ է եղել նաև բնակավայրը այն մասերում, որոնք առավել խոցելի են եղել։ Սակայն աշխատավորական թագերը մեծ մասամբ չեն պարսպապատվել։ Այս տեսակետից բացառիկ երևույթ է Կապանը, որն ամրացվել է ամբողջությամբ։


Բնակավայրերին մերձակա տարածություններում էին զտնվում գերեզմանոցները. նրանք հաճախ բնակավայրի զարգացման հետեանքով ընկնում էին նաև կառուցների մեջ. Եղեգիսում մեծ մասամբ իշխանական և հոգեոր դասին պաականող անձանց գերեզմաններ կան ազնվականության և աշխատավորական թաղերի միջև ընկած տարածություններում։ Սովորաբար պանթեոններ էին համարվում եկեղեցիների շուրջ տարածվող հրապարակները։

Ավանների անմիջապես կից հողատարածությունները մշակվել են բնակիչների կարիքների, մասամբ նաև վաճառքի գյուղատնտեսական հումք արտադրելու համար։ Մեծ բնակավայրերին մերձակա ճանապարհ-

ների եզրերին, լավ դիտվող տեղերում, կանգնեցվել են մահարձաններ և խաչքարեր՝ ճարտարապետական գեղեցիկ ձևավորմամբ։ Նրանք այս կամ այն մարգու հիշատակր հավերժացնելու և կամ այս կում այն նշանավոր իրազարձությունը արձանագրելու համար են նախատեսվել մեծ մասսամբ։

Ուշ միջնադարում, կապված երկրի քաղաքական և տնտեսական անրարինպաստ պայմանների հետ, ճանապարհամերձ և հեռավոր բնակավայրերի տարրերությունները համարյա վերացել են։ Մյունիքը իրոք զարձել է խուլ մի երկիր, եթե նկատի չունենանք Արաքսի ափամերձ ճանապարհն ու Մեղրու բարզավաճումը, գրեթե ոչ մի զարգացում չի նկատվում բնակավայրերի կառուցապատման մեջ։ Միայն Ռուսաստանին միանալուց հետո կատարվում են որոշ փոփոխություններ, որոնց մեջ զգալի զեր են կատարում զաղթականների շինարարական տրադիցիաները։ Գյուղերի մի զգալի մասն իր միջնադարյան կառուցապատմամբ հասել է մինչև սովետական իշխանության հաստատումը։





**Բ. ՏԱՎՈՒՇԵՑԻ**

**ՆԱՀԱՏԱԿ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐ\***

**Ն**

- Ն. Ա.— Տաղավարյան Խազարք  
Գիտ. շարժում (Կ. Պ.) 188.  
Աղբ. Գիտ. շարժում (Կ. Պ.) 1887, № 4, էջ 129:  
Խարեմ— Խսպիրյան Միհրան  
Մաղիկ (Կ. Պ.) 1891=57, 1893=39.  
Աղբ. Թեոդիկ, 1911, էջ 264:  
Խեռ— Դերձակյան Օճճիկ  
Ազատամ. (Կ. Պ.) 191.  
Աղբ. Թեոդիկ, 1913, էջ 336:  
Խետ— Քարսելյան Գեղամ  
Աղբ. Հայ Հանրագիտակի, էջ 389:  
Խերսոն Վարչապետ— Դաճիկյան Խերսոն Վարդ.  
Լույս (Կ. Պ.) 1905=38, 48, 1906=13, 32:  
Նիճի— Շանդիկյան Հարուրյան  
Ազատամ. (Կ. Պ.) 191.  
Աղբ. Լույս օրացուց, Թիֆլիս, 1920, էջ 140:  
Ն. Ա. Ֆար— Սուզիկյան Եղիա  
Բանքեր (Կ. Պ.) 1914=343. Հովհան (Թիֆ.)  
1912=37.  
Սուրբ. (Կ. Պ.).  
Աղբ. Թեոդիկ, 1910, էջ 48:  
Նշդրակ— Սոլախյան Արտաշես  
Մասիս (Կ. Պ.) 1907=43:  
Խորիս. Ֆ.— Փեղիջյան Խուրով  
Բլուրակն (Կ. Պ.) 1904=6. Հորիկ. (Թիֆ.)  
1910=25:  
Խոր Քաղաքափետ— Սուզիկյան Եղիա  
Բանքեր (Կ. Պ.) 1914=12, 20, 24, 26, 35, 39,  
43, 48, 50, 53, 55, 63, 65. Ժամանակ (Կ. Պ.)  
1910-ական թվ.  
Աղբ. Հուշարձան ապրիլ տասնըմեկի, էջ 47.

\* Շարունակված ռէշմիածինս ամսագրի 1965 թվականի թ. ժ.՝

**Շ**

- Շահպազյան Հակոբ  
Ժայռ (Թիֆ.) 1907=9, 13,  
Շանդիկյան Հարուրյուն  
Հայր. (Կ. Պ.) 1895=1206,  
Շ. Ք.— Թրիսյան Շավարշ  
Մարմնամարզ (Կ. Պ.) 1911=1:  
Շահ., Ա.— Երիցյան Ատոմ  
Մուրձ (Թիֆ.) 1903=7, 1905=9, 1906=2,  
Շահով, Հ.— Շանդպազյան Հակոբ  
Արշակ. (Թիֆ.) 1905=57.  
Աղբ. ՀՊԿՊԱ. ֆ. 227, գ. 696, թ. 6,  
Շանդիկ., Հ.— Շանդիկյան Հարուրյուն  
Հայր. (Կ. Պ.) 1895=1143,  
Շահ-Բազե— Շանդպազյան Հակոբ  
Թեոդիկի ռևմենուն տարեցոյթա-ում (Կ. Պ.).  
Աղբ. Հուշարձան ապրիլ տասնմեկի:  
Շահնեն— Կյուրեմյան Սելին  
Մշակ (Թիֆ.) 1896. 1908=93, 98, 200, 202,  
209, 210, 217—220, 224, 227, 231, 235, 237,  
239, 243, 249, 266, 268, 271, 277, 278, 282,  
284—288, 290, 1909=2, 3, 5, 11, 12, 15, 16, 18,  
20, 22, 25, 30—32, 35, 38—42, 51, 52, 54, 59,  
61, 64, 66, 67, 71, 72, 74, 76, 77, 90, 91, 93,  
96, 97, 99, 103—104, 107, 108, 110, 113—116,  
118, 120, 123, 125, 127, 129, 130, 132, 134,  
139—142, 144, 146, 148, 151, 157, 161—164,  
166, 172, 175, 176, 179, 181, 184, 185, 190,  
192, 193, 196, 201—205, 207, 211, 216—218,  
223, 229, 233, 237, 241, 245, 249, 250, 261—  
263, 266, 271, 273, 276, 278, 283, 285, 288,  
290, 291, 1910=3, 8, 10, 13, 14, 16, 19, 21, 22,  
30, 35, 36, 43, 46, 51, 55, 56, 59, 63, 192, 194,  
197—199, 203, 208, 214, 215.  
Աղբ. Մշակ (Թիֆ.) 1918, թ. 105:

Հանեն, Ա.— Երիցյան Առու

Մշակ (Թիֆ.) 1901=123. Մուրճ (Թիֆ.) 1906=1.

Տարազ (Թիֆ.) 1896=7.

Հանեն, Առու— Երիցյան Առու

Մասիս (Կ. Պ.) 1908=1. Մշակ (Թիֆ.) 1903=17.

Մուրճ (Թիֆ.) 1898=1—5; 10—11, 1906=4—5,

7, 8. Տարազ (Թիֆ.) 1897=34, 35, 41, 1898=

3, 8.

Աղք. ԳԱԲ, Մուրճի արխ.:

Հանեն, Ենովի— Սոլունճյան Ենովի

(պոլսահայ ղերասան)

Աղք. ԳԱԲ, Ա. Դավթյանի արխ.:

Հանեն-Լարը— Հարուրյունյան Արտաշևս

Աղք. Հարուրյունյան, էջ 25.

Հանկապազ— Հանկապազ Բարսեղ

Մանզ. Էֆքար (Կ. Պ.) 1901=101—108.

Աղք. ԳԱԲ, Հ. Տեր-Ասավածառարյանի արխ.:

Հանկապան, Գ.— Գորովչյան Գևորգ

Կայժ, Նոր Պառող (Կ. Պ.) 1910-ական թվ.

Աղք. Հովշարձան ապրիլ տասնըմեկի, էջ 48.

Հանքերյան— Թօփուլյան Երվանդ

Պայք. (Պարտիզակ) 1911.

Աղք. Քսան Կախաղաններ, էջ 74.

Հավասար— Լյուրենյան Մելիքն

Արձագ. (Թիֆ.) 1893=87, 1894=38. Շարժում

(Վառնա) 1896.

Աղք. Շանթ (Կ. Պ.) 1919, № 12, էջ 136.

Հավարշ արեդա— Մանակյան Արշավիր

Լուս (Կ. Պ.) 1905=27, 30, 31, 34, 37, 48,

1906=1;

Հա-Քե— Քրիսյան Հավարշ

Մարմնամարդ (Կ. Պ.) 1911=1.

## Զ

Զագրեբալը— Թօրօսյան Գրիգոր

Առավոտ (Կ. Պ.) 1910=104. Կավոռ (Կ. Պ.)

1910=455.

Աղք. Թեոդիկ, 1913, էջ 337.

Զատիռն— Զյոկյուրյան Տիգրան

Արհելը (Կ. Պ.) 1908.

## Պ

Պարմանանի— Մանուրենյան Խերեկա

Աղջ, Հայր. (ԱՄՆ).

Աղք. Ճիզմեճյան, էջ 596.

Պիտար— Պետրոսյան Միհան

Աղք. Կիլիկյան տարհցույց, 1922, էջ 252.

Պոտիկ վարժապետ— Թանշուրյան Հովհակիմ

(Կովկասահայ մամուլում, 1905—1908 թ. թ.).

Աղք. Հովշարձան, էջ 158.

Պոնոտացի— Կյուրենյան Մելիքն

Բյուզ. (Կ. Պ.) 1906.

Աղք. Թեոդիկ, 1910, էջ 168.

Պուտօն (Ը) — Խասիրյան Սիմերան

Արև. մամուլ (Պայմիր) 1888=4, 8, 1889=3.

Աղք. Թեոդիկ, 1911, էջ 264.

## Ս

Ս.— Դանիելյան Ներսես վարդ.

Բյուրակն (Կ. Պ.) 1900=46.

Ս.— Տեր-Սահակյան Կարապիտ վարդ.

Բաղմ. (Վեն.) 1907=4.

Սար, Հ. Ս.— Սարյան Սահման վարդ.

Բաղմ. (Վեն.) 1889=8, 1900=7, 1902=10, 11,

Ս. Բ.— Բյուրատ Մըրատ

Փյունիկ (Ալ-դրիա) 1902=38.

Ս. Բ.— Տաղավարյան Նազարեր

Բաղմ. (Վեն.) 1908=11. Բանասիր (Փարիզ) 1903=1, 2, 4—5.

Ս. Տեր Սահմակյան Կարապիտ վարդ.

Բաղմ. (Վեն.) 1907=1, 9, 1908=8, 9,

Սահմակ. Հ. Ա. Տեր-Սահմակյան Կարապիտ վարդ.

Բաղմ. (Վեն.) 1903=3.

Ս. Վարդյան Դանիելյան Ներսես վարդ.

Լուս (Կ. Պ.) 1905=9,

Սահմակյան, Շավարշ վարդ.— Սահմակյան Արշավիր

Սերենկյույան, Վարդգես— Սերենկյույան Հովհաննես

Աղք. Հովշարձան ապրիլ տասնըմեկի,

Սերունի, Ա. Մանշուտյան Արշակ

Աղք. Ռենիկի, 1911, էջ 283.

Սիմաներ— Յարնանյան Առու

Աղք. ԳԱԲ, Միամանթոյի արխ.:

Սիսակյան արեդա— Դանիելյան Գևորգ

Բյուզ. (Կ. Պ.) 1897=281, 297, 298.

Սիրայր— Ֆելիկյան Տիրան

Բանքեր (Կ. Պ.) 1914=3. Ժամանակ (Կ. Պ.)

1900-ական թ. Շիրակ (Ալ-դրիա) 1906=5. Մուրճ.

(Կ. Պ.) 1900-ական թվ.

Աղք. Ժամանակ, էջ 37:

Սլավ— Խածակյան Գարեգին

Մշակ (Թիֆ.) 1900-ական թ.

Աղք. Յ. Իշխանյանի վկ.

Սկսնակ բանասեր— Տաղավարյան Նազարեր

Արելը (Կ. Պ.) 1890-ական թ. Բանասիր (Փարիզ)

1904=5—6.

Աղք. Բյուրակն (Կ. Պ.) 1899, № 46, էջ 724:

Սոլարա— Սոլարյան Արտաշեն

Աշխատանք, Վան-Տոսպ (Վան) 1910-ական թ.

Աղք. Քսան կախաղաններ,

Սոլյար— Արտաշեն Արտաշեն

Մասիս (Կ. Պ.) 1903=36.

Սսական— Դանիելյան Ներսես վարդ.

Բյուզ. (Կ. Պ.) 1899=856, 869. Շանթ (Կ. Պ.)

1912=14:

Սսական արեդա— Դանիելյան Ներսես վարդ.

Արև. մամուլ (Իզմիր) 1898=2, 1899=2:

Սսական վարդ. (Վարդապետ) — Դանիելյան Ներսես

վարդ.

Աղք. Բյուրակն (Կ. Պ.) 1903, № 46, էջ 902:

## Վ

Վ.— Խապիրյան Միերան  
Աղբ. մամուլ (հզմիր), 1891=10, 1892=5,  
1893=1:

Վաճագեն— Պետրոսյան Մամիկոն  
Առաջին (Ֆրեզնո), 1910-ական թ. Հառաջ (Կա-  
րին) 1910-ական թ.  
Աղբ. Հայուստան (Բիթ.) 1917, № 49.

Վաճիկ—Վաճիկյան Գեղամ  
Կալժ (Կ. Պ.) 1912. Հնեակ (Լոնդոն) 1914=4—5.  
Աղբ. Երիտ. Հայ. (Նյու-Յորք) 1960, № 18:

Վարազլատ Վաճագեն— Բարսեղյան Գեղամ  
Աղբ. Հայ Հանրագիտակ, էլ 389:

Վարդիկս— Երևանցիան Մելքոն  
Արևելք (Կ. Պ.) 1889.  
Աղբ. Նոր-Դար (Բիթ.) 1899, № 165:

Վարդիկս— Սերենկույս Վարդիկս  
Աղբ. Թեոդիկ, 1910, էլ 87:  
Վառայան, Ա.— Դերձակյան Օօնիկ

Վառայան. (Կ. Պ.) 1910-ական թ. Հայր. (Բու-  
տոն) 1903:

Աղբ. Անահիա (Փարիզ) 1903, № 4:  
Վաղինակ— Նախրիկյան Հարուրյոն

Վաղաբայ. (Կ. Պ.) 1910-ական թ.  
Աղբ. Լոյս օրացույց (Բիթ.), 1920, էլ 140:

Վարշանդիկ— Զամուրյան Հակոբ  
Մասիս (Կ. Պ.) 1886.  
Աղբ. Ա. Ալպյանձյան, հ. Ա, էլ 1226:

Վրույր— Խովիրյան Միերան  
Աղբ. մամուլ (հզմիր) 1891=8—10, 1893=1, 5,  
7, 9. Մարգ. (Կ. Պ.).

Աղբ. Թեոդիկ, 1911, էլ 264:

## Տ

Տ.— Զյուլյուրյան Տիգրան  
Ոստան (Կ. Պ.) 1912=5, 6:

Տ.— Տաղավարյան Խաղաք  
Թազմ. (Վեն.) 1907=11, 1908= 2, 8.  
Աղբ. ԳԱԹ, Հ. Առաքելյանի արխ.:

Տ. Կ. Զ.— Զյուլյուրյան Տիգրան  
Մասիս (Կ. Պ.) 1905=11, 13.  
Աղբ. Մասիս (Կ. Պ.) 1905, № 18:

Տափոս— Թերզյան Հակոբ  
Աղբ. Հուշարձան ապրիլ տասնընկի:

Տերվիշ— Պելլիերյան Ալիսիս  
Արտեմիս (Կահ.) 1902=1, 3, 7—8, 1903=  
4—7, 10—12.

Աղբ. Համազգային տարեցույց:  
Տիգրան Գ.— Զյուլյուրյան Տիգրան  
Մուրճ (Բիթ.) 1901=9. Ոստան (Կ. Պ.) 1911=

1, 2:  
Տիգին Ին— Քեիկյան Տիրան  
Առլու. (Կ. Պ.).

Աղբ. Հուշարձան ապրիլ տասնընկի:  
Տորյան, Արմեն— Սուրենյան Հրաշյա  
Աղբ. Հուշարձան ապրիլ տասնընկի:

Տորբ— Խապիրյան Միերան

Աղբ. Թեոդիկ, 1911, էլ 264:

Տըր. Պետեն— Մանուկյան Պետրոս  
Բանբեր (Կ. Պ.) 1914=50, 85, 91.

Աղբ. Խարբերդ, էլ 383:

## ՈՒ

Ուլիկոր— Կյուրենյան Մելքոն

Արևելք (Կ. Պ.) 1889.

Աղբ. Նոր-Դար (Բիթ.) 1889, № 165:

Ուրվական— Հարուրյունյան Արտաշես

Աղբ. մամուլ (հզմիր) 1904=14, 20, 29.

Աղբ. Հարությունյան, էլ 25:

## Փ

Փ.— Սայապայան Հակոբ

Շանթ (Կ. Պ.) 1914=54:

Փայլակ— Այալապալյան Հակոբ

Աղբ. մամուլ (հզմիր) 1902=22, 1903=2, 17, 20,

40, 43, 49. Բանբեր (Կ. Պ.) 1914=48, 83. Բյուզ.

(Կ. Պ.) 1909. Բյուլուկն (Կ. Պ.) 1901=44. Սա-

դիկ (Կ. Պ.) 1903=9, 1904=10, 1907=17, 48—

49. Հայ գրակ. (հզմիր) 1911=2, 4—5, 7—11,

1912=1—11. Մասիս (Կ. Պ.) 1902=34, 38, 39,

41, 43, 48, 49, 51, 1903=2, 4, 18, 35, 37, 38,

40, 42, 45, 49, 1904=2, 11, 13, 14, 1907=31,

1908=20. Շանթ (Կ. Պ.) 1913=40, 43—47, 49,

50, 1914=23, 26, 28, 29. Փայլակ (Կ. Պ.) 1911=

1, 2, 4, 1912=24, 25, 31—33, 36—39:

Աղբ. Մասիս (Կ. Պ.) 1904, № 27, էլ 431:

Փայնակ— Բլիստինցին

Արևելք (Կ. Պ.) 1880-ակ. թ. Մասիս (Կ. Պ.)

1879=2355, 1880=2553, 2748.

Աղբ. Թլկատինցին և իր գործը, Բոստոն, 1927:

## Չ

Չ.— Քիրիչնյան Լևան

Բյուրակն (Կ. Պ.) 1901=14:

## Օ

Օ. Դ.— Դերձակյան Օօնիկ

Հայր. (Կ. Պ.) 1892=135, 1893=487, 493, 509,

522, 537.

Աղբ. Ե. Օտյան, Տաներկու տարի Պոլսեն գուրու (1896—1908), Կ. Պոլսու, 1922:

Օ. Զ.— Բարսեղյան Գեղամ

Մանդ. Էֆքայր (Կ. Պ.) 1902=306:

Օդիմզա— Դերձակյան Օօնիկ

Հայր. (Կ. Պ.) 1892=269, 329, 1893=370, 388,

1895=1102.

Աղբ. Ոստան (Կ. Պ.) 1920=17—18, էլ 733:

Օդին— Բարսեղյան Գեղամ

Մանդ. Էֆքայր (Կ. Պ.) 1902=247:

Աղբ. Հայ Հանրագիտակ, էլ 389:

Օդին-Զարբոնք— Բարսեղյան Գեղամ

Մանդ. Էֆքայր (Կ. Պ.) 1902=272, 278.

Աղբ. Գ. Բարսեղյան, Ամբողջական գործեր, Փա-

րիզ, 1931, էլ 11:

Օտառ-Ակնի— Երիցյան Ալոուն

Հարստանալու արվեստը (Թարդմ.).

Աղք. Հուշտրձան ապրիլ տասնընկերի:

Օրին— Սոլյայան Արտաւիս

Ասուպ (Վան) 1906.

Աղք. Կիլիկյան տարեցույց, 1922, էջ 315.

Յ

Յարհան Խորիզ— Քեչիչյան Խուրով

Հորիզ. (Թիֆ.) 1909=34:

Յարհան Խորիզ— Քեչիչյան Խուրով

Արև. Ժամուկ (հղմիր) 1902=6, 7, 12, 1903=36,

39, Սասիս (Կ. Պ.) 1903=40.

Աղք. Արև. Ժամուկ (հղմիր):

\*— Մարտիման Խաչատրու

Մշակ (Թիֆ.) 1892=83, 113, 119, 134, 136, 142, 145, 1894=27, 30, 38, 40, 49, 50, 56, 65, 68, 69, 71, 74 75, 78, 84, 98, 110;

\*\*— Խեկերիչյան Գարեգին Բանի:

Մասիս (Կ. Պ.) 1880=2570, 2700.

Աղք. Մասիս (Կ. Պ.) 1880, Էջ 2758.

\*\*\*— Տաղավարյան Խազարելի

Աղք. ԳԱԲ, Հ. Առաքելյանի արխու:

### ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Agnouni— Մալումյան Խաչատրու

Pro Armenia (Փարիզ) 1905=5.

Berje, Sembat— Բյայրատ Միքատ

Revue des deux mondes (Փարիզ) 1913.

Աղք. Վ. Բյուրատի ՎՀ:

Dorian Armen— Սուտենյան Հրաշյա

Աղք. ԳԱԲ, Ա. Չոպանյանի արխու:

Glanic, Viconte de— Քելիկյան Տիրան

La bourse Egyptienne (Եղիպտոս) 1904.

Աղք. Ալպյոյանյան, Կ. Բ., էջ 2072:

Leart, Marcel— Ջնիրապ Գրիգոր

La question Arménienne (Փարիզ) 1913.

Աղք. Վեմ (Փարիզ):

Siamanto A. Y.— Սիմաներ

The story of the knight (Constantinople), 1912:

Հ. (Տ. Գ.)— Քելիկյան Տիրան

صادر (Սարահ), (Կ. Պ.), 1909

Աղք. Հուշտրձան ապրիլ տասնընկերի:

### ՀԵՂԻՆԱԿԱԼՅԻՆ, ՑԱՆԿ

Արբոյան Միսիքար (Ճնկ. 1880 Մուշ, սպանվ. 1915

Մուշի մոտ).

Մածկ. Մեխակ:

Ավետիսյան Հակոբ (Ճնկ. 1873 Վան, սպանվ. 1915).

Մածկ. Արծրունի:

Բարսեղյան Գեղար Պողոսի (Ճնկ. 1883 Կ. Պոլիս, Կեմիկ Փաշա, սպանվ. 1915).

Մածկ. 1) Բարսեղնեց, Գ., 2) Գ. Բ., 3) Գեղու,

4) Ջարբոնք, 5) Նետ, 6) Վարազզատ Վահագն,

7) Օ. Զ., 8) Օշին, 9) Օշին-Ջարբոնք:

Գազանենյան Հովհաննեսի (Ճնկ. 3 ապրիլ 1870 Եղոնկիա, սպանվ. 1915):

Մածկ. 1) Գ., 2) Թղթակից Հ. Գ., 3) Հ. Գ., 4) ՄԵ-Նուշի:

Դասպարյան Արփատակիս Հ. (Ճնկ. 1861 Աղանա, սպանվ. 1915):

Մածկ. Ա. Գ. (փաստաբան):

Գորուչյան Գևորգ (Ճնկ. 1892 Հաշճն, վլս. 1915 Պապ). Մածկ. Շահպան, Գ.:

Դանիելյան Դևորյան Հովհաննեսի (Ճնկ. 16 մայիս 1868 Ջեթիունի Ցարոփուղ գյ., սպանվ. 1915 Ցողդատա):

Մածկ. 1) Գանիելյան, Ներսես Եպ., 2) Խոսնակ,

3) Կիլիկյացի, 4) Մեղրոտնի, 5) Ներսես Վարդա-պետ, 6) Ա., 7) Սիսական արեղա, 8) Սսական, 9) Սսական արեղա, 10) Սսական վարդ. (Վարդա-պետ), 11) Ա. Վարդ:

Դանիելյան Մանուկ (Ճնկ. Խիանի Սաղտուն գյ., սպանվ. 1915):

Մածկ. Խիանացի:

Դերձալյան Օննիկ Գևորգի (Ճնկ. 1871 Կ. Պոլիս, սպանվ. 1915 Կ. Պոլիս):

Մածկ. 1) Ա. Վ., 2) Մեդիսոս, 3) Նեռ, 4) Վոամ-յան, Ա., 5) Օ. Գ., 6) Օգիմդա:

Խսայան Գրիգոր (Ճնկ. 1883 Վան, սպանվ. 1915).

Մածկ. Գրիգոր Նոր:

Երիցյան Ալոուն Ստեփիանի (Ճնկ. մարտ 1875 Ակնի Կամարակապ գյ., սպանվ. 1915):

Մածկ. 1) Ասոյ, 2) Ասոյմ-Շահնեն, 3) Ե.-Ա., 4) Խալ-Պապյան, 5) Մոսա, 6) Շահն., Ա., 7) Շա-հնեն, Ա., 8) Շահնեն, Ասոյ, 9) Օտա Ակնի:

Զարդարյան Խորին (Ճնկ. 1874 Խարբերդ, սպանվ. 1915):

Մածկ. 1) Ալբ Եհովայի, 2) Ասլան, 3) Ջարդար,

4) Էմուահար, 5) Հայ արսորական, 6) Հրաշ,

7) Հրամյա:

Զոհրապյան Գրիգոր Խաչիկի (Ճնկ. 14 ապրիլի 1861 Կ. Պոլիս, Պեղիկթաշ, սպանվ. 7 հոկտ. 1915 Ուր-ֆայի մոտ):

Մածկ. 1) Արտավազ, 2) Գ. Զ., 3) Զոհրապ, Գրի-գոր, 4) Հ., 5) Լեար Մարտ:

Զորյան Բարդող (Ճնկ. 1 հունիս. 1879 Թումզարա, սպանվ. 1915):

Մածկ. Ժիրայր:

Զուլումյան Գևորգ (Ճնկ. 1878 Խարբերդ, սպանվ. 1915):

Մածկ. 1) Գ. Զ., 2) Զուլում, Գ.:

Բանցույշյան Հովհակիմ (Ճնկ. 1887 Օրդու, սպանվ. 1915):

Մածկ. Պատիկ Վարժտապետ:

Բերդյան Արմենակ Խաչատրուրի (Ճնկ. Խարբերդ, սպանվ. 1915):

Մածկ. Արմեն

Բերգյան Հակոբ (Ճնկ. 22 օգոստ. 1879 Հաշճն, սպանվ. 1915):

Մածկ. 1) Թղթակից, 2) Հակիմի, 3) Հակ-Թեր,

- 4) Հիթո, 5) Հիթ-Թո, 6) Հ. Հ. Թ., 7) Հմայակ,  
8) Տավրոս:
- Թիրյալքյան Հայկ (ծնվ. 1871 Տրապիզոն, սպանվ. 1915).
- Մածկ. Հրաչ:
- Թյուրյունեան Արշակ Կ. (ծնվ. 1878 Երզնկա, սպանվ. 1915 հեռուս.)
- Մածկ. Սերուժի, Ա.:
- Թյուրյունեան Մերութ (ծնվ. Վան-Այգեստան, սպանվ. 1915 Օրգովի դաշտում):
- Մածկ. Երու:
- Թյուրյան Գրիգոր Գևորգի (ծնվ. 1884 Ակն, սպանվ. 1915).
- Մածկ. 1) Գու թու, 2) Դու թու, 3) Բնկեր Կիկո, 4) Լի-Հունկ-Ջանկ, 5) Լուսիլյունյան, Բ., 6) Լուսիլյունյան, Բանագոզ, 7) Կիկո, 8) Չագըրճալու:
- Թյուրյան Երվանդ Երվանդ Հովհաննեսի (ծնվ. 1894 Պարտիկակ, կախաղան 2 Հունիս 1915 կ. Պոլիս):
- Մածկ. 1) Ալիքյան, 2) Բանվոր, 3) Եսնթերյան, Թուրյան Սկրտիչ Ա. (ծնվ. Դերենիկ, սպանվ. 1915).
- Մածկ. Մ. Թ.:
- Խափիրյան Միներան (ծնվ. 1873 Սեբաստիա, սպանվ. 1915).
- Մածկ. 1) Հսրերո, 2) Մուշեղ, 3) Նարէմ, 4) Պուստ(ն), 5) Վ., 6) Վրույր, 7) Տորբ:
- Խածալյան Գարեգին Գասպարի (ծնվ. 1867 Ալեքսանդրովու, սպանվ. 1915).
- Մածկ. 1) Ալթիյան, 2) Արմեն Փոսպատ, 3) Բարօս Գասպար, 4) Գասպար, 5) Էմին, 6) Ա., 7) հածակ, 8) հածակ, 9) Սլաք:
- Խրցարենյան Գևորգ-Երվանդ (ծնվ. 27 սնապ. 1854 Ակն, գլխատված 1915 Սեբաստիայի մոտ):
- Մածկ. Երկարյան, Երվանդ:
- Կյուրյան Մելիքոն Ա. (ծնվ. սեպտ. 1859 Բալուի Հայլավ գլ., սպանվ. 1915).
- Մածկ. 1) Ավոն, 2) Արմենոլի, 3) Բղբակից Շիյուզանդինս-ի, 4) Բղբակիցն ի Պոնասու, 5) Բղբակից Պոնասոսի, 6) Կ. Մ., 7) Հրանտ, 8) Մ. Կ., 9) Մ. Ա. Կ., 10) Շահեն, 11) Շավասպ, 12) Պոնտացի, 13) Վարդգես, 14) Ուզնոր:
- Կոզիկյան Գարեգին (ծնվ. 17 օգոստ. 1878 Բալու, ինքնախեղդ 1915 Տրապիզոն, Սև ծով):
- Մածկ. 1) Խալիճ, 2) Էլմինոր, 3) Բափառիկի Համբարձումանի, 4) Բափառիկի Պոնասոսի, 5) Բափառիկի Պոնասոսի, 6) Կ. Մ., 7) Հրանտ, 8) Մահեն-Կարո, 9) Ուրվական:
- Հոգիկյան Գարեգին (ծնվ. 17 օգոստ. 1878 Բալու, ինքնախեղդ 1915 Տրապիզոն, Սև ծով):
- Մածկ. 1) Խալիճ, 2) Էլմինոր, 3) Բափառիկի:
- Հարուրյան Արտաշեմ (Պողոս) Հարուրյանի (ծնվ. 3 հոկտ. 1873 Մալկարոս, սպանվ. 16 օգոստ. 1915 Անկումիդի և Դերբենդի մոտաբրում):
- Մածկ. 1) Ա. Հ., 2) Կ., 3) Կարո, 4) Հարո, Արտ., 5) Մալկարացի, 6) Մալկարացի Կարո, 7) Մանիշակ, 8) Շահեն-Կարո, 9) Ուրվական:
- Հարուրյունյան Հովհաննես (ծնվ. 1860 Խարբերդի թէկամին գլ., սպանվ. 1915):
- Մածկ. 1) Բ., 2) Թլկառ, 3) Բլկասինցին, 4) Հ. Հ., 5) Փառնակ:
- Հարուրյունյան Մարտիրոս Աշոտի (ծնվ. 1870 Կովկասում, սպանվ. 1915):
- Մածկ. Աշուղ Շահնազար:

- Ճիճանկուլյան Հարուրյուն Կ. (ծնվ. 1855 Վան, սպանվ. 1915):
- Մածկ. Կայճիկի:
- Մալումյան Խաչառուր Մկրտչի (ծնվ. 7 սեպտ. 1863 Մեղրի, սպանվ. 1915):
- Մածկ. 1) Ազ., 2) Արատելիր, 3) Ազատուլիր, Կ., 4) Ազ-Լիր, Կ., 5) Ակնոնի, Է., 6) Դռն Հմանուկ, 7) Կ., 8) Կ. Մ., 9) Մ., 10) Մալան, 11) \*, 12) Ացոսուլ:
- Մանուկյան Թեմարս Թօրոսի (ծնվ. նոյ. 1881 Խարբերդի Հյուսեյնիկ գլ., կախաղան 2 Հունիս 1915 կ. Պոլիս):
- Մածկ. Տքի. Պիննեւ:
- Մինասյան Արագիսի (ծնվ. 1873 Պալտիրակի Յալովա գլ., սպանվ. 1915):
- Մածկ. Արամ-Աշոտ:
- Յահնանյան Ալում (Աստվածատուր) Հովհաննեսի (ծնվ. 1 Հունվ. 1878 Ակն, սպանվ. օդոսու. 1915):
- Մածկ. 1) Արամյան, 2) Արշամ, 3) Ալում Միրզա, 3) Հարությունյան, մեր, 4) Սիմանթոն, 5) Տիամանուկ, Ա. Յ.
- Նալպանյան Սարգիս (ծնվ. 1890 Խարբերդ, սպանվ. Հունիս 1915 Խարբերդ):
- Մածկ. Հակոբյան, Ժիրայր:
- Նահապայլյան Բարսեղի Խազարենի (ծնվ. 21 Հունիս 1883 Վոսկորի Պոյամը գլուղ, սպանվ. 1915):
- Մածկ. 1) Բ. Շ., 2) Շահպար:
- Նահապայլյան Հակոբ (ծնվ. 1865 Վան, վախճ. 1915):
- Մածկ. 1) Հ. Շ., 2) Ճամբորդ, 3) Շ., 4) Շահպար, 5) Շահպար, Հ.:
- Նահիկիլյան Հարուրյուն Հ. (ծնվ. 1870 Շապին-Կաբահիսար, սպանվ. 1915):
- Մածկ. 1) Ա. Շ., 2) Նինի:
- Նահիկիլյան Հակոբ (ծնվ. 1860 ական թ. Կեսարիա, սպանվ. 1915):
- Մածկ. 1) Արմեն, 2) Վահագի:
- Ուկերչյան Գարեգին Բան. Ա. (ծնվ. Ուրֆա, սպանվ. 1915 Ուրֆա):
- Մածկ. 1) Գ. Կ. Ո., 2) \*\*\*:
- Զամուրյան Հակոբ Գ. (ծնվ. 1860-ական թ. Կեսարիա, սպանվ. 1915):
- Մածկ. 1) Արմեն, 2) Վատարանդին:
- Զիլինիկիյան Ծովինենի (ծնվ. 15 փետր. 1885 Մարմարայի եվրոպական եղերքին Սիլիկորի գլ., սպանվ. 13 օգոստ. 1915 Զանզըրըի յոտ Բյունիյում):
- Մածկ. Սևակ, Ռուբեն:
- Զիպուրիյան Դավիթի Գրիգորի (ծնվ. 1884 Մերուշալամ, սպանվ. 1915 Ալյաշ):
- Մածկ. 1) Մեհեկան, 2) Գատիռն, 3) Տ., 4) Տիգրան Գ., 5) Տ. Կ. Գ.:
- Պելյանյան Մարտիրոս (ծնվ. 10 մարտ 1877 Կ. Պոլիս, Պելյանյան Արքայի, սպանվ. 1915):
- Մածկ. 1) Կալիստոս, 2) Մառի:

- Պլիերյան (Նազաշյան) Ավետիս (ծնվ. Սեբաստիա, սպանվ. 1915).  
Մածկ. Ալու
- Պետրոսյան Մամիկոն (ծնվ. 1890 Մուշ, սպանվ. 1915).  
Մածկ. Վահագին:
- Պետրոսյան Մինաս Սարգսի (ծնվ. Ցողջամի պրոնդուլաց. գլ., սպանվ. 1915 Կեսարիա).  
Մածկ. 1) Ասոպ, 2) Պիտար:
- Սահակյան Արշակիր (ծնվ. 1881 Շապին-Կարաչիսար, սպանվ. 1915).  
Մածկ. 1) Արշակիր, 2) Արշակիր սարկավագ  
3) Շավարշ արեգա, 4) Սահակյան, Շավարշ վարդ:
- Սայադայյան Հակոբ Ղազարոսի (ծնվ. Հունիս 1880 Գոնիա, սպանվ. 1915).  
Մածկ. 1) Վ., 2) Փ., 3) Փայլակ:
- Սահնորենյան Ռեքիկ Հ. (ծնվ. Խարբերդ, սպանվ. 1915).  
Մածկ. 1) Ավետիսյան, Վաղանուշ, 2) Կիթառ,  
3) Պարմանոնի:
- Սարգսյան Պերույ Հարուրյանի (ծնվ. Տրապիզոն, վասովի է իր տան հետ 1915 Տրապիզոնում):  
Մածկ. Լի-Հուսկ-Զանկ:
- Սարյան Ստեփան Վարդ. (ծնվ. 1865 Գաղատիա, սպանվ. 1915).  
Մածկ. Սար, Հ. Ս.:
- Սերենիյույան Հավիաննես Պողոսի (ծնվ. 1871 Կարին, սպանվ. 1915).  
Մածկ. 1) Սերենկովյան, Վարդգես, 2) Վարդգևս:  
Սոլայան Արաշես Խաչատրյան (ծնվ. 2 նոյ. Վան, սպանվ. 8 ապրիլ 1915 Վանի մոտ).  
Մածկ. 1) Արուլա, 2) Բնեղիմադիր, 3) Խշդրակ,  
4) Սոլարա, 5) Սոլաք-Արտա, 6) Օրիոն:
- Սոմոնյան Ենօնի Խիգեանոսի (ծնվ. 1881 Պարտիզակ, սպանվ. 1915).  
Մածկ. Շահներ, Ենովք:
- Մրմենշյան Երվանդ Պողոսի (ծնվ. Հուլ. 1870 Կ. Պոլիս, Խասպուլ, սպանվ. 1915).  
Մածկ. 1) Աշուլ, 2) Գաղթական, 3) Գաղթական,  
Ե., 4) Ե. Գ., 5) Ե. Ս., 6) Երվանդ, 7) Երուժան:
- Սույգիյան Եղիշ (ծնվ. 1872 Կ. Պ., Սամարիա, վիճ. 1915 Պելեմետիկ-Թաշտուրմազ).  
Մածկ. 1) Ե-Ս., 2) Ն. Ե. Ֆար, 3) Նոր բաղարա-գետ:
- Սուրենյան Հրաշյա (ծնվ. Հունիս 1892 Յուսկուպ (Մա-կեդոնիա), սպանվ. 1915).  
Մածկ. 1) Տորյան, Արմեն 2) Dorian, Armenian:
- Վանիլյան Գեղամ Կարապետի (ծնվ. 1889 Վան, Կա-խաղան 2 Հունիս 1915 Կ. Պոլիս).  
Մածկ. Վանիկ:
- Վարդապետյան Սերգի Սերգիոսի (ծնվ. 1875 Սիլիկիստիա, սպանվ. 1915).  
Մածկ. Հրուշակ:
- Տաղավարյան Նազարետի (ծնվ. 13 դեկտ. 1862 Սեբաստիա, սպանվ. 1915).  
Մածկ. 1) Ա., 2) Արարահյութ, 3) Արծրունի,  
4) Բորակածին, 5) Ն. Ա., 6) Ս. Բ., 7) Ակսնակ  
րանսակը, 8) Տ. 9) \*\*\*:
- Տեր-Բարսեղյան Բարսեղ Հմայակի (ծնվ. 1883 Բալաս, սպանվ. 1915 Պոգազլլան):  
Մածկ. Գանձակ Պենտուսացի:
- Տեր-Ղազարյան Ամբրոտ Ղազարի (ծնվ. 2 մարտ 1862 Ջեյթուն, սպանվ. 2 օգոստ. 1915 Այաշ):  
Մածկ. 1) Ապտակ, 2) Բյուրատ, Մմրատ, 3) Բյուր-  
ատաղյանց, Մմրատ, 4) Բաթ, 5) Լենցի, 6) Լոռ-  
նորդի, 7) Խայթոց, 8) Հայկ-Լեռն, 9) Մարակ,  
10) Ս. Բ., 11) Երևան, Sembat:
- Տեր-Սահակյան Կարապետ Վարդ. (ծնվ. 25 օգոստ.  
1882 Մուշ, սպանվ. 1915 Բաց գ.):  
Մածկ. 1) Արամազիս, 2) Արտավազդ, 3) Կ. Տ. Ս.,  
4) Հելլենասակը, 5) Հ. Կ. Տ. Ս. Ս., 6) Մամիկոնյան,  
Արմազիս, 7) Մենասակը, 8) Ս., 9) Ս. Ս., 10) Մա-  
հակ, Հ. Կ. Տ.:
- Փափազյան Խերսն Մեսրոպի (ծնվ. 1872 Ազուլիս,  
սպանվ. 1915).  
Մածկ. 1) Մաշտոց Վարդապետ, 2) Մաշտոց:
- Քիլիկյան Տիրան (ծնվ. 20 սեպտ. 1862 Կեսարիա,  
սպանվ. Հոկտ. 1915 Զորում):  
Մածկ. 1) Արգոս, 2) Գլանիկ, 3) Սիրայր,  
4) Տիռնք 5) Ժ. Ճ. 6) Glancie, Viconte de:
- Քեշիշյան Խուրով (սպանվ. 1915).  
Մածկ. 1) Խ. Ք., 2) Նորիս, Ֆ., 3) Ֆարհատ Նո-  
րիզ, 4) Ֆարհատ Նորիս:
- Քիրիշյան Լուս Տիգրանի (ծնվ. մարտ 1875 Կ. Պ.,  
Սամարիա, սպանվ. 1915).  
Մածկ. 1) Երեակ, 2) Լ., 3) Լ. Ք., 4) Լարինց,  
կոն, 5) Ք.:
- Քյուրինյան Վահան (Կարապետ) Սարգսի (ծնվ. 1873  
Կեսարիայի Նիրք գ. սպանվ. 1915).  
Մածկ. Ա. Բ. Գ.:
- Քրիսյան Շավարշ Հ. (ծնվ. 9 Հուլ. 1886 Կ. Պոլիս,  
Թեշիկթաշ, սպանվ. 1915 Այաշ):  
Մածկ. 1) Շա-Քե, 2) Ե. Ք.:
- Ոզնեյան Գաղիկ Դ. (ծնվ. 1882 Շապին-Կարաչիսար,  
սպանվ. 2 Հուն. 1915 Սեբաստիա):  
Մածկ. Հրագդան:
- Օտյան Տիգրան (ծնվ. 1880 Վան, սպանվ. 8 ապրիլ  
1915 Վան).  
Մածկ. Ասու:





## ՍՓՅՈՒՐՔԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Գրականության և արվեստի թանգարանը Խորհրդային Հայաստանի հարուստ, կարևոր մշակութային օջախներից մեկն է, որը ծնունդ առավ 1921 թվականին, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման սկզբին:

Հայ Հոգեոր արժեքների հավաքման, մշակման, կարգավորման, ուսումնասիրության, նրանց հրատարակության ու հանրության սեփականությունը դարձնելու գործում, խոչոր դեր են կատարել թանգարանի ղեկավարությունն ու աշխատակիցները, մանավանդ թանգարանի հիմնադիր, անխոնչ բանասեր, գրականագետ, մանկավարժ, Ա. Էջմիածնի Գերադույն Հոգեոր Խորհրդի երեմնի անդամ, հանգուցյալ երվանդ Հովակիմի Շահագիզը:

Իր գոյության 45 տարիների ընթացքում, տարեցտարի թանգարանը ձեռք է բերել Խորհրդային Միության տարբեր քաղաքներում գտնված, հիմնականում արևելահայ գրողների, հայագետ-գիտականների, խմբագր-հրատարակիչների, գերասանարվեստագետների, երգիշ-երգահանների և մի քանի տասնյակ մշակութային գործիւների արխիվները, որոնք թանգարանի հարստությունն ու պարծանքն են կազմում:

Սակայն վերոհիշյալ հարուստ ժառանգությամբ հանդերձ, թանգարանում բացակայում էին արևմտահայ և սփյուռքահայ գրողների, մտավորականության ստեղծած հոգեոր արժեքները, որոնց մի մասը այս կամ այն կերպ ազատվելով ոչնչացումից, խնամքով պահպան էին հարազատների, մի որոշ մասը՝ հայրենասեր մտավորականների, իսկ մի կարեոր մասն էլ իրենց հեղինակների մոտ, որոնք դեռևս կենդանի են:

Վերջին տասնամյակում թանգարանի սեփականությունը դարձան Արշակ Զոպանյանի հարուստ արխիվն ու գրադարանը (Փարիզից, Մշակութային կոմիտեի միջոցով), Թորոս Ազատյանի արխիվն ու գրադարանը (Պուսից, տիկին Շոշանիկ Ազատյանի միջոցով), Սիամանթոյի (տիկին Զավել Ցարճանյան-Համբարձումյանի միջոցով), Զա-

սկել Եսայանի, Սեմայի արխիվները (Փարիզից, հեղինակների քույրերից), Վահան Մալեզյանի (հեղինակից), Տիգրան Չիթունու, Հրանտ Թորոսյանի, Անայիսի, Ռուբեն Սևակի, Ռուբեն Զարդարյանի, Զարեհ Երեմյանի, Անոն-Մեսրոպի, Աննա Բուդյանի, Հայագետ Անտուան Մեյերի և Մկրտչի Պարսամյանների, Լեոն-Մեսրոպի, Աննա Բուդյանի, Հայագետ Անտուան Մեյերի և այլոց ամբողջական արխիվներ կամ առանձին վավերագրեր (Փարիզից); ԱՄՆ-ից ստացվեցին Դանիել Վարուժանի (ժառանգներից), Հովհաննես Ավագյանի, Զարուհի Գալեմբյանի և Հակոբ Գուլյամյանի արխիվների կամ առանձինի արխիվներ (գրող Անդրանիկ Անդրեասյանի շանքերով), Լոնդոնից՝ Արշակ Սաֆրաստյանի արխիվը և հայագիտական գրադարաննը, Բաֆֆուն վերաբերող առանձին նյութեր, իրեր և գրեթե:

Առանձին գաղթօշախներից ստացվեցին արխիվային կարեոր վավերագրեր պրոֆ. Հ. Ճ. Միքունուց, Հ. Աղաբեկյանից, դոկտ. Հ. Ոսկյանից, Հ. Ն. Տեր-Ներսիսյանից, Խաչակի վարդապետ Ղազարյանից, Ավետիք Ալեքսանյանից, Ա. Տատրյանից, Վ. Երիցյանից, Ա. Սալմաստյանից, Վ. Մովսեսյանից, Մ. Գովանճյանից, Գ. Թրենցից, Հ. Բայրուանից, Ա. Շիրազյանից, Մելքոն Կյուրցյանի (ժառանգներից), Միքայել Կյուրցյանից, Է. Կոտալազյանից, Ա. Մրապյանից, Գ. Պողարյանից, Ա. Գարտաշյանից և անհատ հալրենասերներից: Բանաստեղծություն Սիլվա Կապուտիկյանի միջոցով Թիրովից ստացվեց Վագեն Շոշանյանի արխիվը, Պոլսից ստացվեց «Բյուզանդիոն» օրագրի արժեքավոր հավաքածուն, որ պատկանել է Գեորգ արքեպիսկոպոս Ալանյանին, եղիպտոսից Վահան Հաբեշյանի գրադարանը և այլն, իրենց կարգին հարստացրին թանգարանի գրադարանը:

Սփյուռքից ստացված արխիվների և գրականության ուսումնասիրությունը մեծ շափով նպաստում, օժանդակում է թե՛ իրենց հեղինակների կյանքի ու գործունեության և թե՛ վերջին 50-ամյակում սփյուռքահայ

գաղթավայրերի պատմությունը բաղմակողմանի լուսաբանելուն։ Ապա հարուստ նյութերը, կարեռ վավերագրերը իրը աղբյուր են ծառայում մեր գիտնականներին՝ ուսումնասիրելու հայ և այլ ժողովուրդների գրական, մշակութային կապերը, օսար գրողներից հայերեն և հայ հերինակներից կատարած թարգմանությունները, իմանալու անվանի ղեմքերի կարծիքները, հայկական հարցի, անցյալ և ներկա մշակույթի, նրա կատարած դերի և այլ կարեռ խնդիրների մասին։

Գրականության և արվեստի թանգարանը, ստացված արխիվները գիտական մշակման ենթարկելուց հետո, հնարավորություն է տալիս գիտնականներին, ուսանողներին և առանձին մտավորականներին մենագրություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ գրելու իրենց հետաքրքրող հարցերի մասին և ընթերցողների սեփականությունը դարձնելու այն, ինչ գրկվել է կործատից և հարստացնում է մեր մշակույթը։

Թանգարանում առկա վավերագրերի հիման վրա, հրատարակվեցին դոկտ.-պրոֆ. Հրանտ Թամրավայնի «Միամանթու» բարձրարժեք մենագրությունը, դոկտ.-պրոֆ. Էզզարդ Ջրաշշյանի «Ռուրեն Սեսիկ խորագրով ուշագրաւվ ուսումնասիրությունը (բանաստեղծի ծննդյան 80-ամյակի առթիվ), Գառնիկ Ստեփանյանի «Ա. Արփիարյան», Սևակ Արզումանյանի վերջերս հրատարակած «Զապել Ծոսայան», Հայկ Ղազարյանի «Մատթեոս Մամուրյան», Հեկտոր Ռշապունու «Դանիել Վարուժան», Հ. Մարգարյանի «Տիգրան կամարական», Ա. Շարուրյանի «Սրբուհի Տյուսար» և մի տասնյակի հասնող նոր ուսումնասիրություններ՝ Վ. Թեքեյանի, Պ. Դուրյանի, Վ. Շուշանյանի, Միամանթոյի, Դանիել Վարուժանի, Ռ. Սևակի, Առանձարի, Տ. Զյոյկյուրյանի, Միամանթոյի, Սուրաբյանի, Առանձարի, Առանձարի, Առանձարի, Տ. Զյոյկյուրյանի, Միամանթոյի, Սուրաբյանի և այլոց մասին, որոնք կհրատարակվեն առաջիկայում։

Ստացված արխիվային նյութերի հիման վրա, թանգարանը հրատարակության է պատրաստել Դանիել Վարուժանի «Նամականիս», որը «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց 1965 թվականին։ Նույն թվականին հայոց կաղմանին հրատարակվեց նաև Զարուհի Գալեմբյարյանի երկերի ժողովածուն։ 1966 թվականին լույս կտևսնի Զ. Ծսայանի «Բարու Խաչիկ» մեծածավալ վեպը, որի ձեռագիրը պահպան է թանգարանում, Վաղեն Շուշանյանի երկերի ժողովածուն։

մայի մի հատորյակը, որոնց ձեռագրերը դարձյալ թանգարանի սեփականությունն են կազմում։ Առաջիկա տարիներին հրատարակության համար նախապատրաստվում են Ա. Արփիարյանի, Զ. Ծսայանի, Զոհրապի, Սիամանթոյի, Զարդարյանի, Թիկատինցու, Ռ. Սեակի և Ա. Հարությունյանի նսմակները որպես «Գրական ժառանգություն» մատենաշարի հերթական հաառըներ։


Թանգարանի երաժշտական բաժնում հարուստ և թանկարժեք արխիվների թվին է պատկանում հայ մեծահանճար երգահան, անման Կոմիտաս վարդապետի արխիվը, որն ստացվել է Փարիզից, օրիորդ Մարգարիտ Բարայանից և Կոմիտասյան հանձնաժողովից։ Հետագայում Սփյուռքից ստացված նյութերով համալրվել է Կոմիտասի ժառանգությունը, որի ուսումնասիրությանը ձեռնամուխ է նողի և հրատարակության գործը հմտորեն իրագործում է կոմիտասագեաերաժշտագետ Ռ. Աթայանը։


Մեծ արժեք է ներկայացնում նաև Տ. Չուխացանի, Ալան Հովհաննեսի, Նիկոլ Գալանգերյանի, Գ. Սյունու, Վ. Սվաճյանի և մյուս երաժշտների ժառանգությունը, որոնք կենտրոնացվել են թանգարանում Սփյուռքի տարբեր վայրերից։ Այստեղ հիշատակենք Փարիզից ԺՄ-ի (Փրանսահայերիտասարգական կաղմակերպության) միջոցով և շանքեռով ստացված իտալացի երաժշտագետներ՝ Ա. Սկարլատիի և Ն. Պիշնիի։ Տիգրան Մեծին նվիրված երկու օպերաների ընգորինակությունը, լիբրետոների միկրոֆիլմը, որոնց բնագիրը պահպան է նեապոլի թանգարանում և որոնց ընգորինակությունը իրագործել է երաժշտագետ Ավետիս Պ. Մեսումենցը։ Ստացված նյութերն օգտագործվում են մասնագետների կողմից։

Առաջիկա է նույնական հայ թատրոնի պատմությանը վերաբերող ինչպես Սմբատ Դուվիթյանի, Սուրաբյանի, Ա. Շահսաթունու, այնպես էլ մյուս արվեստագետների արխիվային նյութերից։

Հնարավոր լէ մի առ մի թվել այն բոլոր արժեքները, որոնք կենտրոնանում են հայրենիքում, սակալին, մեծ է այս գործում ու միայն կաղմակերպությունների, այլև գործների, գործիչների և առանձին հայրենասիրների կատարած գերը, որոնք ոչ ու մի շանք ու ճիգ չեն խնայում՝ օգնելու հայրենիքին։

ԴՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒԹՅԱՆ





## ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ԳՈՒՄ

### ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ԳԻՒՑ

**Հայկական համբագիտարան.**—Հայկական համբագիտարան ստեղծվութեացը վաղուց է դարձել Հայաստանի գիտությունների ակադեմիայի և մեր գիտական հասարակականության ուշադրության առարկան։ Ներկայիս այդ հարցը արդեն գործնական է ընդունել և գոնսում է վերջնական լուծման ճանապարհն։

Կազմված է համբագիտարանի գլխավոր խմբագրություն ակադեմիկոս Վ. Համբարձումյանի նախագահությամբ։ Խմբագրական մարմնի մեջ մտել են ականավոր գիտականներ, արվեստի և գրականության գործիչներ։ Ստեղծված են ներթանմբագրություններ՝ գիտության և արվեստի տարրեր բնագավառների համար։

Բազմաթիվ այդ աշխատությունը գլուխ քերելու համար, գլխավոր խմբագրությունը կուտակում է նյութեր հայ ժողովրդի պատմության, տնտեսության, գիտության և մշակույթի զարգացման վերաբերյալ։ Համբագիտարանին կախաւուկցեն մեր նշանավոր գիտականները, արվեստի և գրականության մասնագետները, մշակույթի գործիչները։

**Սովետական գրականության պատմություն.**—Գիտությունների ակադեմիայի գրականության հիմնական տունը պատրաստել է և հրատարակել «Սովետական գրականության պատմություն» երկմատորանց ստվար աշխատությունը։ Վերջերս լուս տեսալ այդ արժեքավոր աշխատության երկրորդ հատորը, որն ընդգրկում է սովետական գրականությունը 1941—1984 թվականների ծամանակաշրջանում։ Հատորում հանգամանորեն վերլուծված են ծամանակակից մեր բոլոր գրողների ստեղծագործությունները։

**Հովհաննես Դրասխանակերտցու աշխատությունը կրացնեն լեզվով.**—Վրաստանի գիտությունների ակադեմիան վերջերս լուս է ընծայել Հովհաննես

Դրասխանակերտցու «Հայոց պատմություն»-ը վրացերեն և գրաբար լեզուներով։

**Հովհաննես Դրասխանակերտցին ապրել է Թօ-Ժարերում։ Նրա աշխատությունն ընդգրկում է 788—825 թվականներին Հայաստանում տեղի ունեցած դեպքերը։ Աշխատությունն իր մեջ նետաքրքրական տեղեկություններ է պարունակում նաև Վրաստանի մասին։**

Գիրքն ունի ընդարձակ նախարան և ծանոթագրություններ, որոնք վերլուծում են Դրասխանակերտցու աշխատությունը և նշում, թե ի՞նչ նշանակություն ունի այդ աշխատությունը մինչ Հայաստանի պատմության ուսումնասիրության տեսակետից։ Թարգմանության գլխավոր խմբագիրն է ակադեմիկոս Գ. Շերեթելին։ Հայերեն աղյուրների խմբագիրն է Ի. Արուլաձեն։

**Հայ բանաստեղծության հատընտիրը լեներեն.**—Լեհաստանում վերջերս լուս են տեսել «Սասունցի Դավիթ» էպոս ու Եղիշե Զարենցի բանաստեղծությունների ժողովածուն։ Մեր լեհ բարեկաններն այժմ հրատարակության են պատրաստում հայ բանաստեղծության հատընտիրը, որն ամփոփելու է մեր բանաստեղծական ունեղծագործության լավագույն նմուշները՝ հնագույն ժամանակներից մինչև Սաբաւ Նովա։ Հայաստանի սովետական գրողների միության վարչության նախագահության վերջերս Երևանում տեղի ունեցած հիմնում ընտրվեց հանձնաժողով՝ Հրաչյա Հովհաննեսյանի նախագահությամբ։ Հանձնաժողովի կազմի մեջ են Ս. Զորյանը, Կ. Մելիք-Օթանջանյանը, Ա. Մնացականյանը, Պ. Սևակը և Վ. Նալբանդյանը։

**Հայկական նոր բալետ.**—Հայ բալետային երաժշտության ցանկը հարստացավ մի նոր գործով։ Վերջերս Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպե-

րայի և բակեսի պետական թատրոնը բնմադրեց եղագար Հովհաննիանի «Հայկերժական կույր» բայալար, որի միմբում մեծ սիրո լեգենդն է, Ալթիթի և Բյուրայի սիրո նայթանակը:

«Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը.—Երևանի պետական համապարանի «Միտք» հրատարակչությունը լուս է ընծայել Արևասի Խաչատրյանի «Հայկական հարցը» և «միջազգային դիվանագիտությունը» խորագիրը կրող աշխատությունը: Այն մեկնարանում է 20-րդ դարի առաջին քառորդում հայ ծողովոյի ճակատագրին վերաբերող խնդիրները՝ կապված պատմական և համաշխարհային հշանակություն ունեցող անցքերի հետ, քննարկում է «Հայերի գենոցիտը և միջազգային դիվանագիտությունը», «Հայկական հարցը» և Ազգերի լիգան, «Հայկական հարցը» և Սովորական Ռուսաստանի հաշուարարական դերը Մերձավոր Արևելքում ու Անդրկովկասում» հարցերը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «Հայկական հարցը»-ի հետառամք արևմտյան մեծ տերությունների անտարքեր վերաբերությունը է բացատրում հետուինակը բախտի այն դառն խաղը, որ փիճակվեց հայ ծողովոյի արևմտյան հատվածին:

Նվերներ շեքսպիրագիտական գրադարանին.—Օրեգօր ավելանում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտին կից հիմնադրված շեքսպիրագիտական գրադարանի նվիրատուածանց ցանկը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Լվանստոն քաղաքից Սուրեն Սարգսյանը վերջևու ուղարկել էր Շեքսպիրի կրկելի դարակրին հրատարակիված 40 հատորաց արժեքավոր ժողովածուն:

Վերջերս Սիյուռքամայության հետ մշակութային կայի կոմիտեի հասցեով ստուգվեց այդ ժողովածուն, որի մեջ ընդգրկված են մեծ դրամատորգի բոլոր հշանակուր ստեղծագործությունները:

Շեքսպիրագիտական թանգարանին արժեքավոր գրքեր է ուղարկել նաև S. Բարգեն նախկինություն Վարժականը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Վինվուդ:

Պատմական հուշարձանի փոխադրումը.—Ավարտված է Ապարանի խոշոր շրանցքի պատմեշի կառուցումը: Քասաղի շրերը արագորեն կոտակվում են, ողողելով շրանցքը: Ծուտով ջովունի գյուղը կմնա շրի տակ: Ջրամքարից հեռու կառուցվում է նոր գյուղ, որը պետք է տեղափոխվեն ջովունու բնակչիները:

Բայց ինչպես վարչի գյուղի եկեղեցն եւս, որը Ն դարի հուշարձան է: Եկեղեցն կոչվում է Թուխ Մանուկ, բավական մեծ է և գրավում է շոր 200 քառակում մետր տարածություն:

Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն և գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտը համատեղ ուժերով ձեռնամուխ են եղան պատմական այդ եկեղեցին փրկելու: Որոշված է եկեղեցին քանդել և տեղափոխել գյուղի դի-

մացի բարձրադիր բլրի վուա: Այս նպատակով շենքի բոլոր քարերը չափագրվում են, պեղումներ են կատարվում եկեղեցու ներսը և դուրս: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են մի շարք արժեքավոր տարրերներ:

Պատմական թանգարանը հարստանում է՝ նոր նյութերով:—Վերջերս Հայաստանի պետական պատմական թանգարանը հարստացավ նոր, արժեքալիր նյութերով, որոնք կարեն հշանակություն ունեն նայ ժողովոյի հյուրական մշակույթի ուսումնակիրության տևականությունը: Անցյալ 1985 թվականի ընթացքում ձեռք են բերվել շոր 500 կտոր զանազան տեսակի իրեր: Կրանց մի զգալի մասը իրենց մեռ բերել էին Սովորայից ներգաղթած մուսալենցի հայերը: Իրերի մեծ մասը ազգագրական բնույթ ունեն՝ հագուստներ, աշխատանքի և տնաշին գործածության առարկաներ ու գործիքներ:

Պատմական արժեք ներկայացնող կենցաղային և ազգագրական բնույթի իրեր են ձեռք բերված Արմավիրի (Հյուսիսային Կովկաս), Նոր Նախիջևանի, ինչպես նաև Եասիկին ալաշկերտցի և Վասպուրականցի հայերից:

Թանգարանի համար նետաքրքրական հմուտներ են ողարկել Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Դրամի և Բուլղարիայի նայերը: Նմուշների մեջ կա մի համրիչ (թագրեն), որը պատկանել է պոլսեցի մոտավորական Վարդերես Աթանայացին: Համրիչը բայկացած է 90 կարմիր սոլոնքներից: 1915 թվականին, երբ Վ. Աթանայանը պոլսարան մտավորականների մեռ գտնվելիս է լուս Զանդլըրի բանտում, նա իր համրիչի յուրաքանչյուր հատիկի վրա փորագրել է նայ կալանավորությի այդ թվում նոմիտասի, Վարուժանի և մյուսների անումները:

Երևանի նոր հատակագիծը.—1924 թվականին ճարտարապետ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը կազմեց Երևանի հատակագիծը: Այն ժամանակ քաղաքը ուներ 50 000 բնակչ: Ա. Թամանյանի կազմած հատակագիծը նախատեսում էր Երևանի առավել զարգացումը. այն պիտի ունենար 150 000 բնակչ:

Անցյալ 14 տարի և այդ թիվը գրեթե կրկնապատկեց: 1938 թվականին կազմվեց մայրաքաղաքի նոր հատակագիծ, որը նոյնական կարճ ժամանակշրջանում կրցցրեց իր կարևորությունը և անկարող եղան բալվարդակ մայրաքաղաքի բուն աճման պահանջներին: 1948 թվականին կազմվեց մի նոր հատակագիծ, ըստ որի նախատեսվում էր 1985 թվականին Երևանի բնակչության թիվը հասցեն 450 000-ի:

Երևանի Երևան ունի շոր 700 000 բնակչություն: Պարզ է, որ վերջին հատակագիծը ևս իր հշանակությունը վաղուց կորցրել է: Մի քանի տարի է, ինչ կազմվում էր մայրաքաղաքի զարգացման հատակագիծ-համագիծը 15 տարվա համար՝ 1985-ից մինչև 1980 թվականը: Հատակագիծը վեր-

ցերս քննության առևկաց Երևանում ՍՍՌՄ Պետշինի ճարտարապետական կոմիտեի և Հայաստանի պետական համատեղ հմտում ու արժանացալ միահամու հավանության:

Ըստ նոր հատակագծի, նեռանկարում Երևանի բնակչությունը կհասնի 1 000 000-ի: Քաղաքը կունենա 9 շրջան, որոնք իրար են կկայվեն լայն երթուղիներով: Կենտրոնական մասերը կկառուցապատվեն քարձաքերձ շենքերով, որոնք կկազմեն կառուցվելիք շենքերի կեսը: Քաղաքը հիմնականում կտրաքանի դեպի հարավ-արևմուտք Հրազդանի աջ ափով: Ամբողջության կերպարուցվի քաղաքի կենտրոնական մասը:

Հրազդանի ձորի վրա կկառուցվի նոր կամուրջ: Բացի մի բամի ճոպանուղիմերից (Նորք, Միծունակարեր և այլն), Թամանյան փողոցի վերջավորությանը կկառուցվի հերթաշարժ ելարան (Եւկապատոր), որը քաղաքի կենտրոնը կմիացնի Հաղթանակի գրուստով և Թբիլիսան պողոտայի մետ:

Հրազդանի ձորը կրամանա հանգստավայրը: Այնտեղ կատեղծվեն 150 հեկտար տարածությամբ նոր գրուստագիմեր: Սուաժիկա 15 տարում քաղաքի կանաչապատված տարածությունները կկազմեն 8 000 հեկտար: Հրազդան գետի, Գետափի, Նորքի և Արտաշատի ջրանքերին վրա կատեղծվեն նոր լճեր (բացի «Երևանի ծով»-ից), որոնք կնպաստեն քաղաքի կլիմայի մեղմացման: Քաղաքի հյուսիսային մասում կկառուցվեն հանգստավայրեր: Կընդարձալիքի հասարակական սենյի, մշակույթի, կենցաղային սպասարկության հաստատությունների թիվը:

Հայաստանի բնակչությունը:— Կենտրոնական վիճակագրության տվյալների համաձայն, առ 1-ը Բունվարի 1986 թվականի Սովորական Հայաստանի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 2 200 000 մարդ: 1827-ից մինչև 1920-ը Երևանի բնակչությունը աճել է 4 անգամ, իսկ վերջին 44 տարում, 1920—1984-ից՝ 12 անգամ:

Ուսումը Հայաստանում.— Անցավ 1985 թվականին Հայաստանի համբակրթական դպրոցներում սովորողների ընդհանուր թիվը եղան է 529 300 հոգի, կամ 87 500-ով ավելի քան 1984 թվականին:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների թիվը կազմել է 88 929 հոգի, իսկ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 81 881 հոգի:

Պերճախոս թվեր.— Մասն արդյունաբերության մետ միասին Հայաստանում արագորեն զարգանում է նաև թեթև արդյունաբերությունը: Այդ մասին ներկայում ստորև թերված թվերը:

Անցած 1985 թվականին Հայաստանի գործարաններում արտադրված է:

Գործվածքներն, 82 700 000 քառակուսի մետր, որից շուրջ 70 000 000 քամբակն գործվածքներն.

Պատրաստի հագուստներն, 84 000 000 ոտորու արժողությամբ.

Վերին և ներքին տրիկոտաժեղին, 42 000 000 կտոր.

Կանացի և տղամարդկանց գուլպաներ, 48 200 000 զոյգ.

Կոշիկ կաշվից, 7 800 000 զոյգ.

Շաշարապազ, 82 900 տոննա.

Օճառ, 19 800 տոննա.

Ժամացուցչեր զանազան, 2 788 000 հատ:

Կերորիչյան արտահաներից 1985 թվականին արտադրված է 8-ից մինչև 47 տոկոս պակեփի, քան 1984 թվականին:

Երևանուն նոր ջրմուղ.— Վերջին 15 տարում Երևանի ջրմուղի նվազությունը գրեթե կուտակվելի է, առաջն քաղաքը նորեն ջրի պակաս է զգում: Քաղաքի բնակչության աճի մեջ միասին ավելանում է նաև ջրի պահանջը: Բայց դա ջրի սակալության հիմնական պատճառը չէ:

Պատճառը այն է, որ մայրաքաղաքի ջրմուղի ջրի երկու երրորդը կանում են գործարանները՝ արտադրական ու տեխնիկական կարիքների համար: Այս բացը վերացնելու նպատակով քաղաքային հշիսանությունները կառուցում են նոր ջրմուղ նաև կալանավոր սպառական պահությունը: Նոր ջրմուղը սկիզբ է առնելու կապուտ լճից, որը գտնվում է մայրաքաղաքից 18—20 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, Արարոտուն դաշտում:

Այս լճը գոյացել է բնական ալյուրուներից: Չորր լճից լուրս նույնու առաջացնում է ճախճախությունը: Ամա այդ դուրս նոսող ջրերն են, որ պետք է օգտագործվին: Լճի ափին դրվում են 8 նոր ջրմաններ, որոնք վայրելանում կարող են մոտե 3 000 լիտր ջուր: Դուրս մղված ջուրը արևեստական ճնշման տակ խողովակներով անցնելու է 10—12 կիլոմետր և լճի մակերեւությից քարձաքանալու է 200 մետր, որից հետո ինքնամդումով կրուի դեպի քաղաք, դեպի կարգավորման հսկայական ջրամբարները, որտեղից ջուրը բաշխվելու է գործարաններին:

Նոր ջրմուղի առաջին հերթը պատրաստ լիինի այս տարվա մայիսին:

Փապուղիներ լեռնացքներում.— Բզովիալի կամ Պուշկինյան լեռնանցքը շուրջ 3 000 մետր բարձրություն ունի: Խճուղային ճանապարհը կիրովականից սկսվում է և անցնում այդ վտանգավոր լեռնանցքով դեպի Ստեփանավան: Զինոր ճանապարհը փակիվում է ձյան պատճառով:

Կառավարության որոշմամբ կառուցվելու է ավտոմոբիլային ճանապարհ լեռնանցքի տակով: Դրա նամար փորվելու է փառակուի 1 850 մետր երկարությամբ: Փապուղին սկսվելու է Բզովիալ գյուղի մոտ և դուրս է գալու Հերմեն գյուղի մոտերք: Փապուղի շնորհիվ կիրովական Ստեփանավան ճանապարհը կիրճատվի՝ 12 կիլոմետրով և երթնեկությունը կրաքանակ անվտանգ: Կառուցման աշխատանքներն արդեն ակալի են:

Նախատեսվում է այդամի փառուի կառուցման գագարակից (Սեղորու շրջան) դեպի Քաջարան (Ղա-

փանի շրջան) տանող ավառորդիսցին խճուղու վրա: Փապուղու երկարությունը կիմի 3 800 մետր:

Վիտամինների գործարան Եղևանում:— Երևանում սկսվել է մի նոր, հնուաքքրական գործարանի կառուցումը: Դա վիտամինների արտադրող գործարանն է: Այն կիմի խոշորագույններից մեկը Սովորական Միությունում:

Գործարանը բողարկելու է մեծ քանակությամբ զանազան տեսակի վիտամիններ: Նոր գործարանի համար իբրև հումք կծառակեն ինչպես մուս հանրապետություններից ներմուծվող հորուերը, այնպիսի է Հայաստանի քիմիական գործարանների արտադրատեսակները:

Կիրովական քաղաքի նոր հաստակագիծը:— Հայաստանի պետական շինարարական կոմիտեն վերջերս հաստատեց Կիրովական քաղաքի գլխավոր նախարարագիծը, որը կազմված է Հայաստանի պետական հայագագին ինստիտուտի կողմից:

Ըստ նախագծի, քաղաքը կունենա 3 շրջան՝ կենտրոնական, արևելյան և արևմտյան: Ցուրաքանչյուր շրջան կունենա մշակութային-կենցաղային նախատությունները: Քաղաքի կենտրոնում կառուցվեն նոր խոշոր կինոթատրոն, համերգային դահլիճ, մշակույթի պալատ, ծածկած շուկա, հասարակական լվաճառատուն և կենցաղային սպասարկության այլ հաստատություններ: Քաղաքը հիմնականում կառուցապատվելու է 4—5 հարկանի շենքերով, սակայն կիսառուցվեն նաև 9—12 հարկանի մի շարք շենքեր:

Մեծ ուշադրություն է դարձվելու քաղաքի կանաչապատմանը: Ցուրաքանչյուր շրջան կունենա իր գրոսայգին և սպորտային հարմարությունները:

Առողջապահական նորակառուցներ:— Առողջապահական գործի բարեկավումը Երևանում նոր թափ է ստանում: Հրազդանի աջ ակին սկավիլ է հիվանդանոցային խոշոր ավանի կառուցումը: Հիվանդանոցային շենքերը կունենան 750 մահճակալ: Բացի այդ, այսանը կունենա հաստուկ բուժարան, առողջա-

բան, ատամնաբուժարան, ուսդիուղիայի բաժանմունք: Ավանի կառուցումը կտւի մի քանի տարի:

Առողջապահական շենքեր և՛ հասուցվում նաև քաղաքի այլ մասերում: Օրբելյու փողոցի վրա կառուցվում է 180 մամակալով նոր հիվանդանոց, որի ստացիչն աւրելում կրացիլի բուժարան:

Արարեկիում և Ավանում կառուցվում են արթեստանց-գործարաններ, որոնցից առաջինը թուլարելու է «Հեմագլոբուլին» դեղը, իսկ երկրորդը արտադրելու է բուժական կամավորանը:

Անվանի կիթոռեմիայորի անվան:— Հայ ականավոր կիթոռեմիայոր Համո Բեկմազարյանի հիշատակը նավերմացնելու համար, Հայաստանի կառավարության որոշմամբ, «Հայֆիլմ» կինոստուդիան կոչված է նոր անվամբ: Համո Բեկմազարյանը հայկական կինեմատոգրաֆիայի հիմնադիրներից մեկն է եղել: Նա եղել է քևմադրիչը այնպիսի հիմնայի ֆիլմերի, ինչպիսիք են «Պեպո», «Նամու», «Զանգեզուր», «Տավիր թեկ» և այլն:

Հայկական բյուրեղապակի:— Նոր հիմնվող Արտվյան քաղաքից ոչ մեռու կառուցվում է բյուրեղապակու և ըստիր տեսակի ամանեղենի խոշոր գործարան: Գործարանը սարեկան կթողարկի 30 000 000 կտոր բյուրեղապակայս և այլ տեսակի իրեր: Իրեւ հումք գործածվելու է երևանին կոչվող հյութը, որը կմատակարարի Հրազդանի (Ախտայի) ավագա լեռնաբիմիական գործարանը, Ենթալինային սիկնիտների վերամշակման միջոցով: Մինչ Հրազդանի գործարանի բողարկումը, բյուրեղապակու գործարանն այդ հումքը կատանա քիմիայի ինստիտուտի փորձնական գործարանից:

Գործարանի կառուցման աշխատանքներն ընթանում են հաջող: Անցյալ 1965 թվականի բոլոր առաջարկանքները շինարարմները գերակատարել են: Նախատեսված բոլոր արտադրական շենքերը կառուցման ընթացքի մեջ են: Կառուցվում է նաև բանվորական ավան:

Գործարանը պատրաստ կլիմի 1967 թվականին:

